

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ  
ЕРЕВАНСКИЙ ГОСУДАРСТВЕННЫЙ УНИВЕРСИТЕТ  
YEREVAN STATE UNIVERSITY

# ԲԱՆԲԵՐ

ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ  
ВЕСТНИК ЕРЕВАНСКОГО УНИВЕРСИТЕТА  
BULLETIN OF YEREVAN UNIVERSITY

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ  
ОБЩЕСТВЕННЫЕ НАУКИ  
SOCIAL SCIENCES

ՇՐՔ 3            ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ  
СЕРИЯ 3        ПРАВОВЕДЕНИЕ  
VOLUME 3     JURISPRUDENCE

№ 2 (143)

ԵՐԵՎԱՆ - 2014

Հանդեսը լույս է տեսնում տարեկան երեք անգամ: Հրատարակվում է 1967 թվականից:  
Журнал выходит три раза в год. Издается с 1967 года.  
The Bulletin is published thrice a year. It has been published since 1967.

**«ԲԱՆԲԵՐ ԵՐԵՎԱՆԻ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ»**  
**"БАНБЕР ЕРЕВАНИ АМАЛՏԱՐԱՆԻ"**  
**"BANBER YEREVANI HAMALSARANI"**

Գլխավոր խմբագիր՝ **Սիրզոյան Յ. Ղ.**  
*խմբագրական խորհուրդ.*  
**Ալեքսանյան Ա. Ս., Ավետիսյան Լ. Վ.** (գլխ. խմբագրի տեղակալ), **Գարուզյան Ա. Յ.,**  
**Գոնչար Ն. Ա.** (գլխ. խմբագրի տեղակալ), **Խաչատրյան Ա. Կ.,** **Հարությունյան Է. Ա.,**  
**Հովակիմյան Ա. Է.** (պատասխ. քարտուղար), **Հովսեփյան Լ. Ս.,** **Սիմոնյան Ա. Յ.**

Главный редактор: **Мирзоян Г. К.**  
*Редакционная коллегия:*  
**Аветисян Л. В.** (зам. главного редактора), **Алексян А. С.,** **Арутюнян Э. А.,**  
**Габузян А. А.,** **Гончар Н. А.** (зам. главного редактора), **Овакимян А. Э.**  
(ответ. секретарь), **Овсепян Л. С.,** **Симонян А. Г.,** **Хачатрян А. К.**

Editor-in-chief: **Mirzoyan H. Gh.**  
*Editorial Board:*  
**Aleksanyan A. S.,** **Avetisyan L. V.** (Deputy editor-in-chief), **Gabuzyan A. H.,**  
**Gonchar N. A.** (Deputy editor-in-chief), **Harutyunyan E. A.,** **Hovakimyan A. E.** (Executive Secretary), **Hovsepyan L. S.,** **Khachatryan A. K.,** **Simonyan A. H.**

**ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ - ПРАВОВЕДЕНИЕ - JURISPRUDENCE**

*խմբագրական խորհուրդ -* **Գարուզյան Ա. Յ.** (պատասխանատու խմբագիր), **Անտոնյան Յու. Մ.** (Մոսկվա), **Գևորգյան Կ. Ա.,** **Խաբրիևա Տ. Յա.** (Մոսկվա), **Կուրի Հելմուտ** (Ֆրայբուրգ), **Հարությունյան Գ. Գ.,** **Հայկյանց Ա. Ս.,** **Ղազիմյան Գ. Ա.,** **Սեդրյան Ա. Գ.,** **Յակովլև Կ. Ֆ.** (Մոսկվա)

*Редакционная коллегия:* **Габузян А. А.** (ответственный редактор), **Айкянц А. М.,**  
**Антонян Ю. М.** (Москва), **Арутюнян Г. Г.,** **Геворкян К. А.,** **Казинян Г. С.,** **Кури**  
**Хельмут** (Фрайбург), **Мегрян С. Г.,** **Хабриева Т. Я.** (Москва), **Яковлев В. Ф.** (Москва)

*Editorial Board:* **Gabuzyan A. H.** (managing editor), **Antonyan Yu. M.** (Moscow), **Gevorgyan K. A.,** **Ghazinyan G. S.,** **Harutyunyan G. G.,** **Haykyants A. M.,** **Khabrieva T. Ya.** (Moscow), **Kury Helmut** (Freiburg), **Meghryan S. G.,** **Yakovlev V. F.** (Moscow)

© Բանբեր երևանի համալսարանի - 2014  
© երևանի պետական համալսարանի հրատարակչություն - 2014

# ՍԱՅՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

## ԹՈՒՐՔԻԱՅԻ 1919-1920 թթ. ԴԱՏԱՎԵԻՈՆԵՐԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ ՀԱՅՈՑ ԵՂԵՆԻ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ

### ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Ի տարբերություն ցեղասպանության ցանկացած այլ փաստի՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում դատական ակտերի վրա շեշտադրում չանելը, դրանք որպես հիմնական փաստարկեր շրջանառության մեջ չդնելը դեռևս պահպանում են կենսունակությունը և հանրավի խոցելի դարձնում հիշյալ գործընթացի արդյունավետությունը: Խոսքը, առաջին հերթին, հենց *թուրքական ազգային դատարանների 1919-1920 թթ. կայացրած այն դատական ակտերի, այն դատավճիռների մասին է, որոնցով «Իթթիհադը»՝ երիտթուրքերի ղեկավար կուսակցությունը, թուրք բարձրաստիճան զինվորականները, պետական ու կուսակցական գործիչներն ու այլ պաշտոնյաներ դատապարտվել են անձանց՝ էթնիկ հատկանիշով պայմանավորված զանգվածային սպանդ կազմակերպելու ու իրականացնելու, ինչպես նաև բռնի տեղահանումների համար:*

Այս դատական ակտերին մենք դեռ կանդրադառնանք ստորև, սակայն նախ, փորձենք պարզել, թե ինչու տարաբնույթ ու հավաստի բազմաթիվ պատմական փաստերի կողքին չեն ներկայացվում նաև վերը նշված առավել արժեքավոր ու իրավական մեծարժեք դատական ակտերը: Ոմանք այն կարծիքին են, որ այդ մոտեցման հիմքում ընկած է բացառապես հոգեբանական գործոնը, ըստ որի՝ հենց Թուրքիայի շարունակական ժխտողական քաղաքականության համատեքստում ձևավորվել է համոզմունք, համաձայն որի՝ անիմաստ է կեղծիքները որպես քաղաքականության անդավաճան լծակ ճանաչող թուրքական կողմից սպասել արդարության, այդ թվում՝ արդարադատության որևէ դրսևորում<sup>1</sup>:

Վերոհիշյալ հոգեբանական գործոնի առնչությամբ մենք ևս բացասական կարծիք չունենք, սակայն չենք կարող նաև չնկատել, որ դրա նշանակությունը չափազանցվում է: Չպետք է անտեսել նաև այնպիսի փաստարկեր, ինչպիսիք են ոչ բավարար իրազեկվածությունը, նշված դատական ակտերի իրավական արժեքի մասին անհամարժեք գնահատականները և վերջապես՝ իներցիոն մտածելակերպը, որը հաճախ հանգեցնում է կարծրատիպերի ձևավորման: Այս խոչընդոտները հաղթահարելը թերևս հնարավորություն կտար ընկալելու, որ ժամանակին թուրքական դատարանների կողմից զանգվածային բնաջնջումները դատապարտող ակտեր կայացնելը բնավ թելադրված չի եղել արդարադատության մարմաջով, որ դրանք հիմնականում պայմանավորված են եղել տվյալ երկրի միջազգային ու ներազ-

<sup>1</sup> Տե՛ս **David B. MacDonald**. Identity Politics in the Age of Genocide. The Holocaust and historical representation. Routledge, 2008, էջ 31-39:

գային մի շարք այնպիսի ազդակներով, որոնք պատմական տվյալ ժամանակաշրջանում հնարավոր են դարձրել այդպիսի գործընթացները<sup>2</sup>:

Այն, որ այդ գործոնները սոսկ պատմական տվյալ իրավիճակով են թելադրված եղել և բնավ չեն բնութագրում թուրքական քաղաքականության էությունը, ապացուցվում է թեկուզ այն փաստով, որ արդեն 1923 թ. մարտի 31-ին, այսինքն՝ դատավարություններից ընդամենը երկու տարի անց, Թուրքիայում հայտարարվեց համաներում, որի հետևանքով ազատության մեջ հայտնվեցին բոլոր այն ոճրագործները, որոնք դատապարտվել էին Թուրքիայի զինվորական դատարանի և ընդհանուր իրավասության մյուս դատարանների կողմից<sup>3</sup>: Ընդ որում, թուրքական դիվանագիտությունը ևս ամեն ինչ արել է, որպեսզի հիշյալ դատական գործընթացները չհայտնվեն քաղաքական բանավեճերի տեսադաշտում, չդառնան քննարկման նյութ, հնարավորինս հայտնի չլինեն հանրության լայն շրջանակներին, ինչը տևական ժամանակ նրանց հաջողվել է: Սակայն երբ դրանք անխուսափելիորեն դարձան հրապարակային քննարկման նյութ, գործի դրվեցին դրանց իրավական հիմնավորվածությունը և հավաստիությունը կասկածի տակ դնելուն կոչված արդեն նոր «փաստարկներ»:

Նախապես նկատենք, որ բնավ հակված չենք նշված դատական ակտերը բնորոշելու որպես ոչ միայն միջազգային չափանիշներին, այլև ազգային (տվյալ դեպքում՝ թուրքական) իրավունքին խստորեն համահունչ արդարադատության իրականացման նմուշներ: Ինչ խոսք, դրանք հեռու են այդպիսիք համարվելուց, սակայն բնորոշն այն է, որ թուրքական քաղաքականությունը կառուցված է անգամ այդ կարգի դատական ակտերում արձանագրված փաստերն ամբողջովին ժխտելու ձգտման վրա: Պարզվում է, որ շուրջ 100 տարի անց թուրք քաղաքական գործիչներն ու գիտնականները կասկածի տակ են առնում նույնիսկ սեփական ազգային դատական ատյանների դատավճիռները:

Ցեղասպանության յուրաքանչյուր փաստ արձանագրելու, ընդհանրապես որևէ արարք հանցագործություն որակելու համար անվերապահորեն անհրաժեշտ է մեղադրական դատական ակտ: Սա անվիճելի սկզբունք է, որն իր ամրագրումը է ստացել բազմաթիվ միջազգային իրավական փաստաթղթերում և ճանաչվել ազգային իրավական համակարգերով: Ընդ որում, այս տեսանկյունից վճռորոշ նշանակություն ունեն Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Կոնվենցիայի 6 հոդվածով ամրագրված դրույթները, որոնք խնդիրը կարգավորման նյութ են դարձրել մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից<sup>4</sup>:

Միջազգային իրավունքի փաստաթղթերը, անդրադառնալով այս խնդրին, հարցը քննարկում են հիմնականում մարդու իրավունքների պաշտպանության տեսանկյունից. տվյալ դեպքում շեշտադրվում է անմե-

<sup>2</sup> Տե՛ս **Барсегов Ю. Г.** Геноцид армян – преступление по международному праву. М., 2000, էջ 111-112:

<sup>3</sup> Տե՛ս **Dadrian V. N.** Genocide as a problem of National and International Law: the Wold War I Armenian case, its contemporary legal ramifications // Yale Journal of International Law. Vol. 14, № 2. (Summer 1989), էջ 313-314:

<sup>4</sup> Տե՛ս **Оганесян В. А.** Принципы уголовного правосудия в международном праве. Эволюция и особенности имплементации. М., 2011, էջ 85:

ղության կանխավարկածի սկզբունքը: Վերլուծությունը ցույց է տալիս, որ հիմնականում հենց այս հանգամանքն է փոխել Հայոց եղեռնի միջազգային ճանաչման գործընթացի բնականոն հունը՝ «հարմարեցնելով» այն բացառապես պատմական փաստաթղթերը քաղաքական հարթության վրա քննարկելու ու ճանաչելու գաղափարախոսությանը:

Ընդ որում, քանի դեռ Հայոց եղեռնի ճանաչման գործընթացը սահմանափակվում է սոսկ այս կամ այն երկրի օրենսդիր մարմնի կողմից որևէ իրավական եղանակով ու ձևով ճանաչվելով կամ քաղաքական տեսանկյունից դատապարտվելով, դրանց որևէ իրավական նշանակություն չի տրվում, դրանք չեն դառնում իրավական հետևանք առաջացնող փաստաթղթեր: Առավելագույնը տվյալ դեպքում այն է, որ դրանք այս կամ այն կերպ նվազեցնում են Թուրքիայի միջազգային վարկը և անուղղակիորեն առաջացնում այդ երկրի կողմից Հայոց եղեռնը ընդունելու ոչ միանշանակ պարտավորություն: Ինչ խոսք, անգամ այս զարգացումները չէին կարող անտարբեր թողնել թուրքական կողմին, որը հետևողականորեն ու միջոցների միջև խտրություն չդնող գործելաոճով մշտապես ձգտել է ժխտել Հայոց եղեռնը:

Սակայն երբ Հոլոքոստը ժխտելու համար եվրոպական որոշ երկրների կողմից քրեական պատասխանատվություն սահմանելու գործընթացն իր արձագանքն ունեցավ նաև Հայոց ցեղասպանության հարցում, իսկույն փոխվեց ոչ միայն քաղաքական բանավեճերի հարթակը, այլև բուն փաստարկների իրավական արժեքը: Անմիջապես պարզ դարձավ, որ «դասական եղանակներով» Հայոց եղեռնը ճանաչելու, առավել ևս այն ժխտելու կամ դրա նշանակությունը մեղմելու համար քրեական պատասխանատվություն սահմանելու հեռանկարը խիստ խոցելի է:

Նման դեպքերում, ինչպես ասում են, չկա չարիք առանց բարիքի. վերջապես հայրենական դիվանագիտությունը հարկադրված կլինի լրջորեն անդրադառնալու Հայոց եղեռնը նաև դատական համապատասխան ակտերով հիմնավորելու խնդրին և չի բավարարվի սոսկ պատմական փաստերի լուսաբանմամբ:

Ի դեպ, կարծում ենք, Թուրքիային հաջողվել է ոչ միայն տևական ժամանակով խիստ կարևոր քննարկումներում տեսադաշտից հեռու պահել հիշյալ դատական գործընթացները, այլև պարտադրել խնդրի հետազոտման ու քննարկման իր կանոնները, որոնք մի կողմից բարենպաստ են թուրքական քաղաքականության տեսանկյունից, մյուս կողմից ձևավորում են խնդրի քննարկման փակուղի տանող ավանդույթներ, որոնք հնարավորություն չեն տալիս արմատապես վերանայելու առկա կարծրատիպերը:

Դատելով Թուրքիայի հայատյաց քաղաքականությունից, հազիվ թե նա իր նախաձեռնությամբ փորձեր պատասխանատվության կանչել եղեռնի կազմակերպիչներին ու իրականացնողներին, բայց և այնպես անհերքելի իրողություն է, որ անցյալ դարասկզբին, թեկուզ և որպես բացառություն, տեղի է ունեցել դատական որոշակի գործընթաց: Հետազոտողներից շատերը պնդում են, որ դրանում վճռորոշ դերակատարում են ունեցել Առաջին աշխարհամարտում հաղթած գերտերությունները:

Այս հարցը, անշուշտ, շատ է չարչրկվել, որի հետևանքով, ինքնին հաս-

կանալի է, դարձել է թուրքական քարոզչության հերթական կեղծիքների թիրախ: Թուրքամետ աղբյուրների պնդմամբ Մուդրոսյան հաշտության համաձայնագրից հետո Թուրքիան հարկադրված ձեռնամուխ է եղել հիշյալ դատավարություններին, սակայն զրկված է եղել ինքնուրույն դատավարություն իրականացնելու նվազագույն հնարավորությունից և գործել է բացառապես գերտերությունների թելադրանքով<sup>5</sup>:

Այսպիսով, մեկնակետ է ընդունվում այն գաղափարը, որ Թուրքիայի իշխանությունները դատավարություններ նախաձեռնելու հիմքեր չեն ունեցել, այն պարտադրվել է արտաքին ուժերի կողմից և իրականացվել է նրանց թելադրանքով: Ինչ խոսք, սա թուրքական գաղափարախոսության համար խիստ ձեռնտու մեկնաբանություն է, և որպեսզի այն առավել հավաստի թվա, հընթացս շեշտվում է, որ դատավարությամբ հետազոտված բոլոր ապացույցները (հայերի բնաջնջման վերաբերյալ հրամանները, հեռագրերը, նամակները, վկաների, այդ թվում՝ թուրք պաշտոնյաների ցուցմունքները, ռազմական գործողությունների սխեմաները և այլ գաղտնի փաստաթղթերը) իբր հայերի կողմից միտումնավոր ոչնչացվել են:

Ինչևէ, վերադառնանք գերտերությունների, այսպես կոչված, ճնշումների: Ներկայումս մատչելի փաստաթղթերի ուսումնասիրությունը միանշանակ ցույց է տալիս, որ գերտերությունները հիմնականում պահանջել են դատավարություններ սկսել Թուրքիայի կողմից գերված իրենց զինվորների նկատմամբ կատարված ոճրագործությունների համար, իսկ ինչ վերաբերում է հայերի բնաջնջմանը, ապա այն ներկայացվել է իբրև լրացուցիչ, երկրորդական հարց: Ընդ որում, Բրիտանիան սկզբնական շրջանում առաջ էր քաշում բացառապես բրիտանացի զինվորների նկատմամբ ոճրագործություններ կատարած անձանց պատասխանատվության ենթարկելու հարցը, և միայն հետագայում համաձայնվեց, որ գոնե դրանից հետո քննության նյութ դառնա նաև եղեռնի կազմակերպիչների հարցը:

Այլ կերպ ասած՝ հայերի զանգվածային բնաջնջման առնչությամբ ԱՄՆ-ը, Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, ցավոք, բացառապես բավարարվել են հայտնի իրադարձությունները դատապարտող հռչակագրերով: Սասնավորապես, 1915 թ. մայիսի 24-ին երեք պետություններ՝ Բրիտանիան, Ռուսաստանը և Ֆրանսիան, ընդունել են Թուրքիայի կողմից «մարդկության և քաղաքակրթության դեմ» ուղղված հանցագործությունները դատապարտող հռչակագիր: Սակայն բոլոր դեպքերում հարկ է նկատել, որ այդ հռչակագիրը ստորագրած պետությունները նշված իրադարձությունները անվերապահորեն ճանաչել են որպես Թուրքիայի կողմից էթնիկական հատկանիշով պայմանավորված զանգվածային բնաջնջում:

Հաճախ իրավամբ հարց է ծագում, թե նշված գերտերությունները որքանով են հետևողական եղել հիշյալ դատավարությունն իրականացնելու խնդրում: Հետևողականություն իրականում եղել է, սակայն այն ունեցել է բոլորովին այլ ողղվածություն: Նախ, մինչև դատավարությունն սկսելը, ավելին՝ մինչև մինչդատական վարույթ նախաձեռնելը նույն այդ *գերտերությունների անմիջական աջակցությամբ Թուրքիան անարգել լքել են բոլոր*

<sup>5</sup> Տե՛ս **Guenther Lewy**. Revisiting the Armenian Genocide // Middle East Quarterly, Fall 2005, էջ 3-12:

այն բարձրաստիճան պաշտոնյաները, որոնց նկատմամբ եղել է մահապատիժ սահմանելու հնարավոր վտանգ: Պատահական չէ, որ հենց գերմանական նավով հապճեպ փախուստի են դիմել Եղեռնի գաղափարախոսներն ու անմիջական կազմակերպիչները՝ Թալեաթը, Էնվերը, Ջեմալը և Նազիմը: Դրանից հետո այս անձանց իրենց հետ համագործակցելու տարաբնույթ սիրահոժար առաջարկություններ են արել արդեն խորհրդային Ռուսաստանն ու մյուսները: Ուրիշ բան, որ այդ գործիչները հետագայում խորհրդային Ռուսաստանի իշխանություններին ևս խաբույմ էին և փորձում նրանց վստահությունը չարաշահելու միջոցով իրականացնել իրենց հոգեհարազատ՝ պանթյուրքիզմի գաղափարները:

Ընդ որում, նշված պետությունների հատուկ ծառայությունները հոգացել են, որ վերջիններս հնարավորինս պաշտպանված լինեն, անգամ ապահովել են կեղծ անձնագրերով ու անուններով: Օրինակ՝ Էնվերը Գերմանիայում հանդես է եկել Ալի-Բեյ կեղծանվամբ: Այսինքն՝ գերտերությունների կողմից ի՞նչ թելադրանքի մասին կարող է խոսք լինել, երբ հիմնական ոճրագործներին պատժից զերծ պահելու և համագործակցելու նախաձեռնությունը հենց իրենց է պատկանում: Ավելին, թուրքական բանակում բարձրաստիճան բազմաթիվ պաշտոնյաներ ազգությամբ գերմանացիներ կամ բրիտանացիներ էին:

Չանրահայտ է, որ մահապատժի դատապարտված թուրք պաշտոնյաները, գտնվելով հետախուզման մեջ, հետագայում, այնուամենայնիվ, հայտնաբերվել ու սպանվել են, սակայն դա միանգամայն այլ հարց է և որևէ առնչություն չունի «թուրքական արդարադատության» հետ:

Վերադառնամք հիմնական հարցին. ի՞նչ նկատառումներով ու չափանիշներով են Թուրքիայի ռազմական տրիբունալի կողմից 1919-1920 թթ. իրականացված դատավարությունները որոշ հետազոտողներ գնահատում մարդու իրավունքների եվրոպական չափանիշներին հակասող:

Այդ գնահատականի թերևս ամենահետևողական հեղինակը Լևի Գյունտերն է, սակայն վերջինիս աշխատությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ դրանք բառացիորեն կրկնում են թուրքական պաշտոնական գաղափարախոսության ու դրա «տեսաբանների» մտքերը, հիմնադրույթները, որոնք համակարգված ձևով շարադրված են թուրք պատմաբաններ Սինասի Օրելի և Սուրեյ Յուկայի աշխատություններում: Ըստ այդմ, Լ. Գյունտերի տեսակետները չունեն որևէ փաստական հիմք և վկայում են հեղինակի մասնագիտական ցածր ունակությունների մասին: Վերջին հանգամանքի վրա վաղուց ուշադրություն է դարձրել ականավոր ցեղասպանագետ - պատմաբան, ակադեմիկոս Վահագն Դադրյանը, որը անառարկելի փաստերով բացահայտել է ոչ միայն Լևի Գյունտերի դիրքորոշումների սնանկությունն ու միտումնավորությունը, այլև թուրքերենի, հատկապես օսմաներենի անբավարար իմացությունը, թեև բազմիցս հղումներ է կատարում այդ լեզվով գրված աշխատություններին: Ավելին, Վ. Դադրյանը իրավացիորեն եզրակացնում է, որ Լևին ոչ միայն չի տիրապետում թուրքերենին, այլև միտումնավոր խեղաթյուրում է առանց այդ էլ կեղծված թուրքական աղբյուրները՝ փորձելով էլ ավելի «հանձնել» դարձնել իր սին գաղա-

փարները<sup>6</sup>: Ի դեպ՝ Վ. Դադրյանի այսօրինակ գնահատականները իրավա-  
ցիորեն պաշտպանել են միջազգային քաղաքականագիտության ճանաչ-  
ված բազմաթիվ մասնագետներ<sup>7</sup>, հիմք ընդունելով այն հանգամանքը, որ  
Վ. Դադրյանը ծնվել և մեծացել է Օսմանյան Թուրքիայում, այնուհետև  
տևական ժամանակ դասավանդել է աշխարհի լավագույն ու բարձր վար-  
կանիշ ունեցող բարձրագույն ուսումնական հաստատություններում:

Այժմ անդրադառնանք Լևի Գյունտերի արժարժած զուտ իրավական  
հարցերին: Ակնհայտորեն ուղղորդված հեղինակին «մտահոգել է» հատ-  
կապես այն հանգամանքը, որ նախաքննության ընթացքում կասկածյալ-  
ները իբր զրկված են եղել պաշտպանների օգնությունից: Մինչդեռ դատա-  
վարության արձանագրությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ  
կասկածյալներն ամեն օր ազատորեն շփվել են իրար հետ (հատկապես  
զբոսանքի ժամերին) և ունեցել են պաշտպանական միասնական տակտի-  
կա մշակելու լավագույն հնարավորությունը, բացի այդ, նրանք պարբերա-  
բար օգտվել են կարճատև արձակուրդներից՝ լքելով մեկուսարանները, ո-  
րը, բնականաբար, նրանց լայն հնարավորություն է տվել տևական ժամա-  
նակով շփվելու իրենց պաշտպանների հետ:

Կողմնակալ հեղինակի միտումնավորությունը հասնում է այնտեղ, որ  
մեջբերելով *Ստամբուլում Բրիտանիայի զերագույն հանձնակատար Դր  
Ռոբեկայի* խոսքերը՝ փորձել է պնդել, որ անգամ «պատվիրատու» պետու-  
թյուններն են դժգոհել դատավարությունից: Իրականում նրանք դժգոհու-  
թյուններ հայտնել են, սակայն Լևին «մոռացել է» հստակեցնել, որ այդ  
դժգոհությունները պայմանավորված են եղել կասկածյալների նկատմամբ  
թուրքական իշխանությունների կողմից իրականացվող բացահայտ հովա-  
նավորչությամբ: Օրինակ՝ Թուրքիային առաջարկվել է հաշվի առնել դա-  
տավարության միջազգային բնույթը և դատարանի կազմում մասնակից  
դարձնել այլ պետությունների ներկայացուցիչների, սակայն այդ և նմա-  
նաբնույթ բոլոր այլ առաջարկությունները կտրականապես մերժվել են,  
ինչն էլ իրավաչափորեն դժգոհության տեղիք է տվել: Այսպիսով, Լևին  
փորձել է պարզունակ խորամանկություն բանեցնել և որպես իր պնդումնե-  
րի հիմնավորում՝ հատվածաբար հղումներ կատարել այլ՝ արդեն «հա-  
վաստի» աղբյուրների վրա:

Ի դեպ, տեսնելով ակնհայտ հովանավորչության դրսևորումները՝  
անգլիական հրամանատարությունը երիտթուրքերի առաջնորդների և նա-  
խարարների գործով 1919 թ. ապրիլի 27-ին սկսված դատավարությամբ  
անցնող 77 կալանավորվածների հարկադրված տեղափոխել է Մալթա, որ-  
տեղ դատավարությունը շարունակվել է մինչև 1919 թ. հունիսի 26-ը (դա-  
տավճիռն արձակվել է 1919 թ. հուլիսի 5-ին):

Տվյալ դեպքում նույն դատողություններն այլազգի հեղինակների

---

<sup>6</sup> Հիշյալ հարցադրումներն առավել հանգամանորեն լուսաբանված են հեղինակի  
հետևյալ աշխատություններում՝ **Vahakn N. Dadrian**. The Turkish Military Tribunal's  
Prosecution of the Aethors of the Armenian Genocide: Four Major Court-Martial Series // Holo-  
caust and Genocide. – Oxford University Press, 1977. – Vol. 11. – p. 28-59. **Vahakn N. Dadrian**.  
Armenian Genocide. court-martial of perpetrators //Israel W. Charny, Encyclopedia of genocide.  
– Santa Barbara, California: ABC-CLIO, 1999. 718 p.

<sup>7</sup> Տե՛ս **David B. MacDonald**, նշվ. աշխ.:



շուրթերից հնչեցնելը պարզապես հետապնդում է դրանց արտաքնապես առավել հավաստիություն հաղորդելու միտում: Ուստի այնքան էլ համամիտ չեն այն հեղինակների հետ, ովքեր գտնում են, որ իբր հրեա հետազոտողները կանխակալ դիրքորոշում ունեն և ամեն գնով փորձում են Յուդաիզմի նշանակությունը չնստնացնել Յայոց եղեռնի ճանաչման փաստով<sup>8</sup>:

Մյուս կողմից՝ այդ դատավարություններում հասկանալի պատճառներով դույզն-իսկ ողջամիտ միջոց չի ձեռնարկվել տուժողների (բացառությամբ՝ Անտանտի պետություններից գերեվարված զինվորների) շահերի պաշտպանության ուղղությամբ: Բնորոշ է այն, որ դատավարությանը մասնակցած սակավաթիվ հայ փաստաբանների բոլոր միջնորդությունները մերժվել են<sup>9</sup>:

Հավելենք, որ առ այսօր այդ դատավարությունների արձանագրություններն ու մեղադրական ակտերը հասանելի չեն հետազոտողների լայն շրջանակին. դրանց որոշ հատվածների մասին կարելի է դատողություններ անել՝ միայն հիմք ընդունելով թուրք որոշ հետազոտողների կամայական հղումները:

Բոլոր այն անձինք, ովքեր այս կամ այն պատճառով չեն հասցրել փախուստի դիմել, ստացել են ցեղասպանության համար ակնհայտ անհամաչափ, խորհրդանշական պատիժներ: Խիստ սահմանափակ դեպքերում է սահմանվել 10, 15 տարվա ազատազրկում: Այսպես, օրինակ, «Երիտթուրքերի» կուսակցության Խարբերդի տեղական կոմիտեի քարտուղար Ռեսնելի Նազիմը մի քանի տասնյակի հասնող բնակչության սպանությունը, գույքի զանգվածային հափշտակությունը և բռնաբարությունները կազմակերպելու համար դատապարտվել է 15 տարվա տաժանակիր աշխատանքի: Ընդ որում, իմ կողմից դեռևս ոչ բավարար ծավալով կատարված ուսումնասիրությունները վկայում են, որ պատժվածները, հիմնականում «չեն հասցրել» կրել իրենց պատիժները, այլ ազատ են արձակվել նախքան 1923 թ. համաներման ակտը:

*Այնուամենայնիվ, ստացվում է, որ կան դատավճիռներ, սակայն չեն պահպանվել դրանց հիմքում դրված արխիվային փաստաթղթերը: Ընդ որում, թուրքական կողմն ու նրա համակիրները պնդում են, որ դրանց ոչնչացման համար մեղավոր են հենց հայերը: Որևէ լուրջ հետազոտող ի վիճակի չէ անգամ ենթադրել, որ դրանք կարող էին ոչնչացնել հայերը. դա այնքան անհեթեթ է, որ չարժե անգամ անդրադառնալ: Վերջին հաշվով, քրեական գործերում առկա պետական խիստ պահպանության ներքո գտնվող փաստաթղթերը մեծագույն ցանկության դեպքում չէին կարող հափշտակվել ու ոչնչացվել մասնավոր անձանց կողմից, մասնավոր ցեղասպանությունից հետո Թուրքիայում ստեղծված իրավիճակում:*

Ինչ վերաբերում է արխիվային փաստաթղթերին, ապա ներկայացնենք որոշ նկատառումներ: Նախ՝ դրանց հիմնական ու առավել առանցքային նշանակություն ունեցող հատվածի «կորուստը» պետք է որ սթափեցնեն մեր այն ազգային գործիչներին, որոնք մի պահ հրապուրվել ու

<sup>8</sup> Տե՛ս **David B. MacDonald**, նշվ. աշխ.:

<sup>9</sup> Տե՛ս **Taner Akcam**. From Empire to Republic: Turkish Nationalism and the Armenian Genocide. – Zed Books Ltd, 2004, էջ 270:

պատմական փաստաթղթերը համատեղ ուսումնասիրելու համար հանձնաժողովներ ստեղծելու քայլեր էին փորձում ձեռնարկել:

Մյուս կողմից՝ դատավճիռների հիմքում դրված փաստաթղթերի գոյության փաստը ևս չի կարելի ժխտել. վերջին հաշվով, դատավարության մասնակիցները հանգամանորեն հետազոտել են կոնկրետ փաստաթղթեր, ինչի առնչությամբ կազմվել են արձանագրություններ, ուստի ներկայումս դրանց «բացակայությունը» չի կարող որևէ կերպ խոցելի դարձնել բուն դատավճիռների իրավաչափությունը: Ի՞նչ է ստացվում, թուրքական կողմը խայծ է նետում՝ հիմք ունենալով դատարանների կողմից հետազոտված պատմական փաստաթղթերի իբր թե կորուստը, մասնավորապես՝ հայերի կողմից իբր թե դրանց հափշտակությունն ու ոչնչացումը, մյուս կողմից՝ առաջարկում է հետազոտել գոյություն չունեցող արխիվային փաստաթղթերը: Մենք արդեն անդրադարձանք այդ վարկածի սնանկությանը, սակայն հարկ ենք համարում ընդգծել, որ դա չպետք է քննարկման հատուկ նյութ դառնա ոչ միայն իր ակնհայտ անհեթեթության պատճառով, այլև գլխավորապես այն պատճառով, որ իրավական որևէ նշանակություն ու արժեք չունի: Վերջին հաշվով, խոսքը դատական ատյաններում սահմանված կարգով հետազոտված ապացույցների մասին է, որոնց գերակշիռ մասը, այդ թվում՝ դատավարությունների արձանագրությունները, հանգամանորեն արտացոլվել են թուրքական մամուլում: Իսկ եթե դրանք հետագայում անհետացել են, ապա դա զուտ տեխնիկական արժեք ունեցող հարց է:

Մի կարևոր հարցադրում ևս. եթե թուրքական կողմը արդեն երկու տարի անց համոզվել է, որ դատավարություններում քննարկման նյութ դարձած փաստաթղթերը, վկաների ու կասկածյալների ցուցմունքները և այլ ապացույցները իբր բավարար չափով հավատ չեն ներշնչում, ապա կարող էր անդրադառնալ կայացած դատական ակտերին և նախաձեռնել դրանց բեկանման գործընթաց, մինչդեռ, ինչպես արդեն նկատեցինք, 1923 թ. ընդունվել է համաներում հայտարարելու մասին օրենք, որով բնավ չեն հերքվել դատական ակտերով արձանագրված փաստերը, այլ, պարզապես հաշվի առնելով «միջազգային բարենպաստ իրավիճակը», հապճեպ նախաձեռնել են պատժված անձանց սոսկ պատժի կրումից ազատելու գործընթաց: Ավելին, մահապատժի դատապարտված բոլոր անձինք, ովքեր հետագայում հերոսացվել են, նույնիսկ տեղ գտել հանրակրթական դասագրքերում որպես Թուրքիայի ազատության ու անկախության համար զոհված նահատակներ, դատական որևէ ակտով չեն արդարացվել<sup>10</sup>:

Վերջապես, փաստաթղթերի շրջանակը չի սահմանափակվում միայն դատաքննության ընթացքում հետազոտված ապացույցներով: Իհարկե տրամաբանական կլիներ, որ բոլոր վերաբերելի ու թույլատրելի ապացույցները պահանջվեին ու հետազոտվեին 1919-1920 թթ. դատավարությունների ընթացքում, սակայն, բարեբախտաբար, դրանց մի հատվածը ոչ միայն չի դարձել դատաքննության առարկա, այլև հավանաբար հենց այդ պատճառով պահպանվել է: Բայց այս հարցն առայժմ առկախ ենք: Ուղղակի նկատենք, որ ապացույցները ոչ լիարժեք ուսումնասիրելը ևս վկայում է դատական գործընթացներում մեղադրյալների հովանավորչության և ակն-

<sup>10</sup> Տե՛ս **Барцеров Ю. Г.**, նշվ. աշխ., էջ 89:

հայտ դեպքերն աղավաղելու փաստերի մասին: Այլ խոսքով ասած, առկա են միանգամայն օրինական ուժ ունեցող դատավճիռներ:

Անդրադառնանք այն հարցին, թե ինչպես են վերաբերվում դրանց թուրքական կողմը և բոլոր այն պետությունների օրենսդիր իշխանության մարմինները, որոնք դեռևս մերժում են Հայոց ցեղասպանության փաստի ճանաչումը:

Նախ՝ վերջին քաղաքական զարգացումները մեկ անգամ ևս եկան հաստատելու, որ թուրքական կողմը վերաբերվում է այնպես, ինչպես Ալիև կրտսերը վերաբերվեց Ռամիլ Սաֆարովի նկատմամբ Հունգարիայի դատավճիռին

Ինչ վերաբերում է արտասահմանյան երկրների խորհրդարաններին, ապա, ցավոք, այդ հարցում դեռ չի ձևավորվել դատական ակտերով դեկավարվելու անհրաժեշտ փորձ ու պրակտիկա: Անգամ Հայոց ցեղասպանությունը ճանաչած բազմաթիվ պետություններ հիմնվել են միայն պատմական փաստերի վրա, մինչդեռ իրավական տեսանկյունից արժեք առաջին հերթին հիմքում դնել դատական ակտերը:

Կարևոր է նաև այն հարցադրումը, թե ինչ չափով և ինչ իրավական եզրույթներով են նշված դատական ակտերն անդրադարձել Հայոց եղեռնի փաստին, ինչպես են «բացատրել» զանգվածային սպանությունների պատճառները և այլն:

Ինչ վերաբերում է դատավճիռներում արտացոլված իրավական գնահատականներին, ապա դրանք նույնությամբ համընկնում են ցեղասպանության հանցակազմին, պարզապես հասկանալի պատճառներով այդ եզրույթը չի օգտագործվել: Այսպես, արդեն 1919 թ. մայիսի 3-ին գլխավոր դատախազը դատարան է ներկայացրել փաստեր, որոնք վկայել են այն մասին, որ հայ բնակչության զանգվածային սպանությունները հիմնականում իրականացվել են խիստ կազմակերպված եղանակներով: Ավելին, դատարանում միանշանակ հերքվել է պաշտպանական կողմի այն դիրքորոշումը, թե հայ բնակչության այսպես կոչված տեղափոխությունները իբր բխել են ռազմական գործողությունների անհրաժեշտությունից: Ապացուցված է համարվել այն, որ դրանք եղել են բռնի տեղահանումներ և հայ մարդկանց կազմակերպված եղանակով ոչնչացնելու միջոց: Ըստ այդմ, եղանակն ինքնին դիտվել է մի կողմից՝ որպես հնարավոր դիմադրությունը բացառելու, մյուս կողմից՝ միջազգային հանրությանը շփոթության մեջ զցելու «լավագույն» հնարք:

Ընդ որում, անձանց բացառապես էթնիկական հատկանիշով զանգվածային սպանությունների իրական ծրագրերը թաքցնելու նպատակով, համաձայն վերը նշված դատական ակտերի, ինչպես նաև մեղադրական դատավճիռների, պարբերաբար տրվել են գրավոր ու բանավոր «զաղտնի» հրահանգներ: Թեև գրավոր բոլոր փաստաթղթերը ենթակա են եղել ոչնչացման, սակայն դրանց մի մասը պահպանվել ու հետագայում հետազոտվել է դատարանում:

Ամփոփելով նշված դատավճիռներում արտացոլված իրավական գնահատականները՝ կարելի է անել հետևյալ հիմնական եզրահանգումները՝

ա) էթնիկ հատկանիշով պայմանավորված՝ հայազգի անձանց զանգ-

վածային սպանություններն ու բռնի տեղահանումները կազմակերպվել և իրականացվել են իրավասու իշխանությունների կողմից, դա չի եղել սոսկ առանձին կուսակցության կամ առանձին պաշտոնյաների հատվածական նախաձեռնություն,

բ) զանգվածային սպանություններն ու բռնի տեղահանումներն իրականացվել են «գաղտնագրված» հրամանների, հրահանգների, ծրագրերի ու բանավոր կարգադրությունների միջոցով, որպեսզի չբացահայտվի դրանց իրական նպատակն ու ուղղվածությունը,

գ) նշված հանցագործության կատարմամբ երիտթուրքերը փորձել են մեկընդմիջտ «լուծել» Հայկական հարցը, որը իբր մեծ վտանգ է ներկայացրել իրենց պետական անվտանգությանը,

դ) բռնի տեղահանումները, որոնց հետևանքով մեծաքանակ անձինք մատնվել են սովամահության ու այլ անմարդկային տանջանքների, ոչ մի կապ չեն ունեցել ռազմական անհրաժեշտության հետ (ի դեպ, այս վարկածը ներկայումս բավականին հաճախ են թմբկահարում թուրքական քարոզիչները): Այդ է վկայում այն փաստը, որ տեղահանվել են նույնիսկ այնպիսի բնակավայրերից, որոնք որևէ առնչություն չեն ունեցել ռազմական իրադարձությունների հետ, և որոնց բնակչությունը դրսևորել է ակնհայտ չեզոք վարքագիծ,

ե) կատարված հանցագործությունները ոչ միայն ոտնձգում են քրեական օրենսդրության և այսպես կոչված իսլամի «պատվիրանների» դեմ, այլև ուղղված են «մարդկության ու քաղաքակրթության» դեմ:

Բազմաթիվ երկրների խորհրդարաններ, իսկ Ֆրանսիայի պարագայում՝ սահմանադրական վերահսկողություն իրականացնող մարմինը՝ Սահմանադրական խորհուրդը, իրավաչափ չեն համարում օրենսդիր մարմնի կողմից Հայոց եղեռնը ճանաչելը, առավել ևս՝ այն ժխտելու համար քրեական պատասխանատվություն սահմանելը՝ պատճառաբանելով, որ այդպիսի քաղաքական որոշման հիմքում պետք է լինի համապատասխան դատական ակտ:

Ավելին, ինչպես արդեն նկատեցինք, թուրքական կողմն արել ու անում է ամեն ինչ, որպեսզի վերը նշված դատավճիռները լայն քննարկման նյութ չդառնան, պարզապես չհայտնվեն տեսադաշտում՝ փորձելով միջազգային հանրության ուշադրությունից հեռու պահել այն իրողությունը, որ հենց իր ազգային դատական ատյաններն են անցյալ դարասկզբին դատապարտել հայերի հանդեպ ոճրագործությունը: Եվ բավական է, որ որևէ հետազոտող փորձի այդ թեման արդիականացնել, անմիջապես գործի է դրվում Լևիի նման հերքողներին ասպարեզ նետելու մեթոդաբանությունը:

Սակայն եթե զուտ գիտական չափանիշներով հիշյալ դատավճիռները դեռ կարող են հետազոտման նյութ լինել, ապա նույնը չի կարելի ասել իշխանության այս կամ այն ճյուղը ներկայացնող մարմնի գործունեության դեպքում: Ցավոք, նշված զգուշավորությունը մեծ մասամբ պայմանավորված է արտաքին քաղաքականության գործոններով, իսկ մասամբ էլ՝ ոչ բավարար իրազեկվածությամբ: Ի վերջո, Հայոց եղեռնի փաստն արձանագրվել է նաև Ռուսնդայի ցեղասպանության գործով միջազգային դատարանի 2012 թ. դատավճռով (այս գործով դատարանը կայացրել է մի

շարք դատավճիռներ): Մասնավորապես, այս դատական ակտը, անդրադառնալով ցեղասպանության, այդ թվում՝ Ռուանդայում արձանագրված նույնաբնույթ դեպքերի պատճառներին, ևս փաստել է, որ միջազգային հանրությունը համարժեք հետևություններ չի արել Հայոց եղեռնի փաստից, ինչն էլ նպաստել է այդպիսի երևույթների կրկնվելուն:

Այսպիսով, Հայոց եղեռնի միջազգային ճանաչման հիմնախնդրի կապակցությամբ նպատակահարմար ենք համարում որպես ելակետ ընդունել հետևյալ եզրահանգումները՝

ա) Հայոց եղեռնը, փաստորեն, հիմնավորվել ու ճանաչվել է թուրքական դատական ատյանների կողմից 1919-1920 թթ. իրականացված դատավարությունների ընթացքում կայացված դատավճիռներով: Վերջիններս օրինական ուժի մեջ են մտել և երբևէ չեն բեկանվել,

բ) Հայոց եղեռնի իրավական գնահատականը տրված է նաև Ռուանդայի ցեղասպանության գործով միջազգային դատարանի 2012 թ. դատավճռով,

գ) իրավական որևէ արժեք չունի այն փաստարկը, որ իբր դատաքննության փուլում հետազոտված բոլոր ապացույցները հետագայում հափշտակվել ու ոչնչացվել են հայերի կողմից, քանզի դրանք արդեն իսկ հետազոտվել և իրավական գնահատման են արժանացել իրավասու դատական ատյանների կողմից,

դ) դատական ակտերով Հայոց եղեռնի ճանաչման փաստը պետք է դնել այդ ցեղասպանության միջազգային ճանաչման հայրենական դիվանագիտության հիմքում,

ե) նպատակահարմար է նախաձեռնել տվյալ դատական ակտերից բխող Թուրքիայի պատասխանատվության հարցը՝ նախապես հանգամանորեն մշակելով բոլոր հնարավոր տարբերակներն ու իրավական հետևանքները:

Ամփոփելով Հայոց եղեռնի միջազգային ճանաչման իրավական ասպեկտների քննարկումը, գտնում ենք, որ այդ առնչությամբ նախորդ դարասկզբի դատավարությունները լայն շրջանառության մեջ դնելը և հայրենական դիվանագիտության համար որպես կարևոր խաղաքարտ օգտագործելը անհատ քաղաքացիների տարրական գույքային իրավունքները պատշապանելու տեսանկյունից նաև զուտ գործնական նշանակություն ունեն: Խնդիրն այն է, որ միջազգային ապահովագրական ընկերությունները, որոնք մոտ 5-6 տարի առաջ նախաձեռնել էին Թուրքիայում Հայոց եղեռնի ընթացքում զոհված, ինչպես նաև հարկադրաբար գաղթած ազգությամբ հայ անձանց ապահովագրական վճարները նրանց ժառանգներին հատկացնելու գործընթացը, ակնհայտ անհիմն պատճառաբանություններով, սոսկ թուրքական լոբբինգի ազդեցությամբ կտրուկ դադարեցրել են վճարումները: Ընդ որում, Միացյալ Նահանգներում «Աքսա» ապահովագրական ընկերության կողմից վճարումները դադարեցվել են այդ երկրի դատական ատյանների անհիմն միջամտությամբ: Այսինքն՝ կարող ենք արձանագրել, որ անգամ դատական ատյաններում է փորձ արվում անտեսել մեկ այլ երկրի դատական ատյանի կայացրած և օրինական ուժի մեջ մտած դատավճիռը:

**Բանալի բառեր** – Հայոց եղեռն, Հոլոքոստ, դատական գործընթաց, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում, դատական ակտով Հայոց եղեռնի ճանաչում, բռնի տեղահանումներ, ասպիտակազրական վճարներ

**ГЕВОРГ ДАНИЕЛЯН – Правовая значимость приговоров турецких судов 1919–1920 гг. в контексте осуждения Геноцида армян.** – Приговоры судов, вынесенные в Турции в 1919–1920 гг., рассматриваются в статье с точки зрения их правомерности и правовой значимости для осуждения Геноцида армян. Зафиксированные в них обвинения безоговорочно свидетельствуют о том, что в годы Первой мировой войны Османская империя осуществляла массовое уничтожение людей по исключительно этническим мотивам. В судебных актах не употребляется термин “геноцид”, но это обусловлено тем, что его в то время пока ещё не существовало. В смысле содержания эти приговоры вполне адекватно раскрывают факт целенаправленного истребления армян, подтверждают прямое участие в этом властей, которые осуществляли чёткую программу действий. В статье также раскрываются причины, предопределившие эти судебные процессы и символические наказания, вынесенные ряду должностных лиц. В заключение выдвинут тезис, согласно которому нынешние власти Турции и международное сообщество обязаны уважать вступившие в законную силу судебные приговоры.

**Ключевые слова:** Геноцид армян, Холокост, судебное производство, признание Геноцида армян судебным актом, насильственная депортация, страховые платежи

**GEVORG DANIELYAN – The Legal Significance of the Judgments of Turkey of 1919-1920 in the Context of Condemnation of the Armenian Genocide.** – The issues of legal significance of the judgments of Turkey of 1919-1920 concerning the events of the Armenian Genocide, their legitimacy, the legal relevance in the sense of condemnation of the Armenian Genocide and such other issues are discussed in the article presented. The author substantiates that the accusations reflected in the mentioned judgments unequivocally witness that during the First World War the Ottoman Empire carried out the destruction of specific nations on exclusively ethnic grounds. The term "genocide" is not used in these judicial acts. Nevertheless, this is not due to the purpose of denying this fact, but due to the simple reason that the given term was not yet in the official application and was reflected in international documents in no way.

The legal significance of the judgments of Turkey is in the circumstance that they quite adequately disclose the fact of the Armenian Genocide, approve the direct involvement of the authorities of the mentioned state in the exercise of this and fulfillment of clearly programmed actions .

The article also reveals the reasons of national and international importance that determined the initiation of trials and sentencing some officials to symbolic punishments.

A thesis is presented in the conclusion, according to which the acting Turkish authorities and the international community have an obligation to respect judgments, which have entered into force, and their official actions must flow from them.

**Keywords:** Armenian Genocide, Holocaust, court trial, international recognition of armenian genocide, recognition of armenian genocide upon court judgements, forced deportations, insurance compensation

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՕՐԵՆՍԱԳՐՔԻ ԲԱՐԵԼԱՎՄԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐ

### ՆՈՐԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ

Հայաստանի Հանրապետության անկախացման առաջին օրերից իրականացվող հասարակական հարաբերությունների իրավական կարգավորումն ուղեկցվում է երկրի կյանքի բազմաթիվ ոլորտներում (տնտեսական, սոցիալական, քաղաքական և այլն) արժեքների և առաջնահերթությունների վերանայմամբ և վերահաստատմամբ (ինչպես անցումային փուլում գտնվող ցանկացած երկրում): Առանձնակի վերաարժեքավորվում են պետական իշխանության կազմակերպման և իրականացման հիմնախնդիրները, պետական իշխանությունը կրողի՝ իրեն պատկանող իշխանության կազմակերպման և իրացման կառուցակարգերը: Այդ գործընթացն իր ամրագրումը ստացավ «Հայաստանի անկախության մասին» 1990 թ. օգոստոսի 23-ին ընդունված հռչակագրում, համաձայն որի՝ «Հայոց պետականության կրողը Հայաստանի Հանրապետության ժողովուրդն է, որն իր իշխանությունն իրագործում է անմիջականորեն և ներկայացուցչական մարմինների միջոցով...» (3-րդ կետ)<sup>1</sup>: Այնուհետև այդ գաղափարն իր օրենսդրական ամրագրումը ստացավ 1995 թ. ընդունված Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 2 հոդվածում. «Ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է **ազատ ընտրությունների**, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով»:

Հոդվածի շարադրանքից պարզորոշ հետևում է, որ Սահմանադրությունը քննարկվող հարցում գերապատվությունը տալիս է անմիջական ժողովրդաիշխանության ձևերին՝ ազատ ընտրություններին և հանրաքվեներին, որոնց միջոցով կազմավորվում են ներկայացուցչական ժողովրդաիշխանության ինստիտուտները:

Տարբեր ժամանակների ընտրությունների կազմակերպման փորձը վկայում է, որ Հայաստանի Հանրապետությունում անմիջական ժողովրդաիշխանության այդ կարևոր ինստիտուտը, փաստորեն, դեռևս գտնվում է ձևավորման փուլում: «Հայաստանի Հանրապետությունում դեռևս չի ձևավորվել միջազգային չափանիշներին համարժեք երաշխավորված ժողովրդավարական ընտրությունների ինստիտուտ՝ ինչպես օրենսդրական նախադրյալների, ինստիտուցիոնալ որոշումների, այնպես էլ գործընթացի կազմակերպման և իրացման առումներով»<sup>2</sup>:

Այդ ինստիտուտի կայացմանը խոչընդոտում են օբյեկտիվ մի շարք և

<sup>1</sup> «Հայաստանի գործող օրենքների ժողովածու (1990-1995 թթ.)», Եր., 1995, էջ 9-10:

<sup>2</sup> Арутюнян Г. Г. Вступительное слово на XII Ереванской международной конференции "Роль конституционных судов в обеспечении демократических выборов" (5-7 октября 2006 г.). Ер., 2006, с. 5.

սուբյեկտիվ մի շարք գործոններ, ինչպիսիք են՝ ընտրական օրենսդրության անկատարությունը, հասարակության սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակը, ազատ և արդար ընտրությունների մշակույթի ցածր մակարդակը և այլ հանգամանքներ, որից օգտվելով՝ հանրապետության ազդեցիկ անձինք և քաղաքական ուժերը ընտրությունների ժամանակ քվեարկության արդյունքները հաշվեգրում են իրենց օգտին: Ըստ այդմ, հասարակության լայն զանգվածների շրջանում առաջանում են դժգոհություններ, նվազում է վստահությունը իշխանությունների հանդեպ, ինչն էապես խոչընդոտում է երկրի առաջընթացը:

Նշված գործոնների շարքում իրենց բացասական հետևանքներով առավել աչքի են ընկնում ընտրական օրենսդրությունում առկա բացերն ու թերությունները, որոնց գիտական վերլուծությամբ արված առաջարկություններն ու դրանց գործնական կիրառումը հնարավորություն կտան ինչ-որ չափով մեղմելու քննարկվող ոլորտում հասարակության կյանքում առկա հակասությունները և նպաստելու ժողովրդի ու իշխանությունների միջև վստահության վերականգնմանը:

Նշված արդյունքների ակնկալման համատեքստում առավել կարևորվում է Հայաստանի Հանրապետության գործող ընտրական օրենսգրքի<sup>3</sup> 11 հոդվածի 1-ին մասի շարադրանքը, որի համաձայն՝ «Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակը, բացառությամբ զինվորական մասերում կազմվող, ինչպես նաև ընտրողների ստորագրած ցուցակների, ազատ է ծանոթության համար:

Ընտրողների ստորագրած ցուցակները հրապարակման ենթակա չեն, դրանցից լուսապատճեններ չեն հանվում, դրանք չեն լուսանկարվում և տեսանկարահանվում»: Նման բովանդակությամբ արգելքներ են նախատեսվում նաև Օրենսգրքի 31 հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում և 33 հոդվածի 1-ին մասի 2-րդ կետում:

Ընտրողների ստորագրած ցուցակների գաղտնիացման և դրանցում պարունակվող տեղեկությունների հրապարակման (ցանկացած ձևով) սահմանափակումները միանշանակ չեն ընկալվում հասարակության և քաղաքական շրջանների կողմից: Հանրապետության քաղաքացիների համար նման մոտեցումն անհասկանալի է թեկուզ այն առումով, որ ոչ քիչ դեպքերում քվեարկության արդյունքներն անփոփելուց հետո ընտրողների ցուցակներում հայտնաբերվել են մահացած, հանրապետությունից հեռացած մարդկանց անուններ, որոնց դիմաց դրված է եղել ստորագրություն: Բնականաբար, եթե նման դեպքերն անզամ բացառություն լինեն, միևնույնն է, ընտրական գործընթացների արդար լինելու նկատմամբ առաջանում է հասարակության անվստահություն:

Հիմնախնդրով զբաղվող հանրապետության քաղաքական որոշ ուժերի առաջարկով կազմակերպված խորհրդարանական և արտախորհրդարանական քննարկումները նույնպես ավարտվեցին անարդյունք: Հարցը ներկայացվեց Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարան, որը 2012 թ. մայիսի 5-ին քննության առավ հանրապետության Ազգային ժողովի 29 պատգամավորների 28.04.2012 թ. ներկայացրած դիմումը

<sup>3</sup> Ընդունվել է 2011 թ. մայիսի 26-ին (ՀՀՊՏ № 36 (839), 16.06.11):



ՀՀ ընտրական օրենսգրքի՝ ստորագրված ընտրական ցուցակների գաղտնիությունն ամրագրող նորմերի (11 հոդվ., 1-ին մաս, 31 հոդվ., 1-ին մասի 3-րդ կետ և 33 հոդվ., 1-ին մասի 2-րդ կետ)՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցի վերաբերյալ:

Քննարկելով պատգամավորների կողմից ներկայացված դիմումը՝ Սահմանադրական դատարանն իր իրավական դիրքորոշումը ձևակերպելիս առաջնորդվեց Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. ցուցումներ և բացատրական զեկույց»<sup>4</sup> փաստաթղթի 4-րդ կետի (գաղտնի ընտրական իրավունք) 3-րդ ենթակետում ամրագրված պահանջով, համաձայն որի՝ «փաստացի քվեարկած անձանց ցուցակը չպետք է հրապարակվի»<sup>5</sup>, որի իմաստը պարզաբանվում է նշված փաստաթղթի 54-րդ կետում. «... քանի որ քվեարկության չմասնակցելը կարող է վկայել քաղաքական ընտրության մասին, ապա քվեարկած անձանց ցուցակը չպետք է հրապարակվի»<sup>6</sup>: Այդ և այլ հիմնավորումներով Սահմանադրական դատարանը մերժեց պատգամավորների դիմումում ներկայացված առաջարկը և այնտեղ նշված ընտրական օրենսգրքի նորմերը ճանաչեց ՀՀ Սահմանադրությանը չհակասող<sup>7</sup>:

Այստեղ խնդիրն ամենևին այն չէ, թե քննարկվող հարցի վերաբերյալ Սահմանադրական դատարանի իրավական դիրքորոշումը և ընդունած որոշումը հիմնավոր են թե ոչ, այլ, թե որքանով է այն նպաստում երկրում ստեղծված սոցիալ-տնտեսական և իրավաքաղաքական լարված իրավիճակի մեղմացմանը:

Հանրապետությունում շարունակվում է արտագաղթը, որի պատճառը հասարակությունը համարում է ոչ ազատ և ոչ արդար ընտրությունների միջոցով ձևավորված իշխանությունների վարած ոչ ժողովրդապաստ գործունեությունը: Մինչդեռ, ինչպես Հայաստանի Հանրապետության Նախագահի, այնպես էլ Կառավարության կողմից որպես գործունեության առաջին կարևորության ծրագրային դրույթ է հայտարարվել առաջիկա հինգ տարիների ընթացքում ոչ միայն ամբողջովին արտագաղթի կանխումը, այլև գործուն միջոցառումների ձեռնարկումը հայրենադարձության ուղղությամբ:

Նման պարագայում, մեր կարծիքով, նպատակահարմար կլիներ, եթե Սահմանադրական դատարանը ընտրողների ստորագրած ցուցակների չհրապարակման հարցի հիմնավորման կապակցությամբ եվրոպական կառույցների կողմից ընդունված փաստաթղթերի համապատասխան նորմերի վկայակոչման հետ միասին նկատի ունենար նաև հետևյալ հանգամանքները:

Առաջին, Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. ցուցումներ և բացատրական զեկույց» փաստաթղթում ասվում է. «Փաստացի քվեարկած անձանց ցուցակը չպետք է հրապարակվի» (4-րդ կետի 3-րդ ենթակետ), «...քանի որ քվեարկության չմասնակցելը կարող է վկայել քաղաքական

<sup>4</sup> Ընդունվել է Վենետիկի հանձնաժողովի կողմից 52-րդ լիազումար նստաշրջանի ընթացքում (Վենետիկ, 2002 թ. հոկտեմբերի 18-19): CDL-AD (2002) 023 rev:

<sup>5</sup> Նույն տեղում, էջ 10:

<sup>6</sup> Նույն տեղում, էջ 28:

<sup>7</sup> Տե՛ս ՍԴՈ, 1027, 5 մայիսի 2012 թ.:

ընտրության մասին...» (54-րդ կետ )։ Ստացվում է, որ, ըստ այդ փաստաթղթի, «փաստացի քվեարկած անձանց ցուցակի գաղտնիությունը կոչված է ապահովելու «չքվեարկած անձանց գաղտնիությունը», որը կարող է ունենալ քաղաքական ուղղվածություն։ Մեր կարծիքով, հարցի նման դրվածքը եթե արդարացված է եվրոպական երկրների ընտրողների համար, որտեղ առկա է քաղաքական պատշաճ մշակույթ, և ինչպես կուսակցությունները, այնպես էլ քաղաքացիներն ունեն հստակ քաղաքական կողմնորոշում, ապա արդարացված չէ Հայաստանի Հանրապետությունում այդ կապակցությամբ առկա իրողությունների համատեքստում։

Ամենից առաջ հայտնի է, որ հանրապետությունում գրանցված ավելի քան 70 կուսակցությունների ճնշող մեծամասնությունը չունի քաղաքական կողմնորոշում, գործունեության հստակ ծրագիր։ Ընդհանուր երևույթ է նաև այն, որ նրանցում ընդգրկված քաղաքացիները հաճախակի փոխում են իրենց կուսակցական պատկանելությունը՝ առաջնորդվելով բացառապես գործնական դրդապատճառներով։ Նման պայմաններում ընտրողների ստորագրած ցուցակները օրենսդրությամբ սահմանված կարգով գաղտնիացնել, քվեարկությանը ՀՀ քաղաքացիների չմասնակցելը դիտելով որպես «քաղաքական ընտրության վկայություն», առնվազն մոլորություն է։

Երկրորդ, Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը՝ որպես քաղաքացիների ընտրական իրավունքի կարևոր սկզբունք, ամրագրում է ընտրության գաղտնիության սկզբունքը (հոդ. 4)։ Ինչ վերաբերում է «չընտրելու» կամ «ընտրություններին չմասնակցելու գաղտնիությանը», ապա Սահմանադրության մեջ նման սկզբունք չի նախատեսվում։ Մինչդեռ հայտնի է, որ ՀՀ Սահմանադրությունն ունի գերակայություն միջազգային իրավական ակտերի նկատմամբ, հետևաբար քննարկվող հարցի կապակցությամբ կարելի է հենվել ՀՀ Սահմանադրության վրա։ Մասնավաճառ որ հանրապետության Հիմնական օրենքը (2 հոդվ.) Հայաստանում իշխանության միակ աղբյուր և կրող է ճանաչում ժողովրդին, որն իր իշխանությունն իրականացնում է անմիջապես, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների և պաշտոնատար անձանց միջոցով, որոնց կողմից այդ իշխանության իրականացման նկատմամբ ժողովուրդն ունի անմիջական վերահսկման իրավունք։ Դա նշանակում է, որ ժողովրդին պատկանող իշխանության իրականացնողները չեն կարող ժողովրդից և նրա ներկայացուցիչների շահերը ներկայացնող սուբյեկտներից ունենալ գաղտնիքներ, այդ թվում՝ ընտրողների ստորագրած ցուցակներին ազատորեն ծանոթանալու իրավունքի սահմանափակման ձևով։

Բացի այդ, հոգուտ ստորագրած ընտրական ցուցակների գաղտնագերծման կարելի է վկայակոչել ևս մեկ կարևոր հիմք՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի մասին» 2006 թ. հունիսի 1-ին ընդունված օրենքի 63 հոդվածը (1-ին կետ), որը Սահմանադրական դատարանին հնարավորություն է տալիս իրավական ակտի սահմանադրականությունը որոշելիս գնահատել «...ինչպես այդ ակտն, այնպես էլ ձևավորված իրավակիրառական պրակտիկան»։ Այդ իմաստով ստորագրված ընտրական ցուցակները գաղտնիացնող ՀՀ ընտրական օրենսգրքի

11 հողվածի կիրառման պրակտիկան ավելի քան հարուստ է հանրապետության հասարակական-քաղաքական կյանքի համար ոչ ցանկալի հետևանքներով, ինչի մասին խոսվեց վերևում:

Կարելի է վկայակոչել ևս մեկ հնարավորություն, որը նույնպես կարող է նպաստել ՀՀ ընտրական օրենսգրքի՝ ստորագրված ընտրական ցուցակները գաղտնիացնող նորմի (11 հոդվ., 1-ին մաս) վերանայմանը: Ինչպես նշվում է ՀՀ սահմանադրական դատարանի 2012 թ. մայիսի 5-ի (ՍԴՈ -1027) որոշման առթիվ արտահայտած իրավական դիրքորոշման մեջ, չնայած ընտրողների ստորագրած ցուցակների հրապարակման սահմանափակումը բազմիցս քննարկման առարկա է դարձել միջազգային իրավական պրակտիկայում, այնուամենայնիվ՝ «Իրավակարգավորման հնարավոր տարբերակների ու սահմանափակման շրջանակների ընտրությունը համարվում է տվյալ երկրի օրենսդիր մարմնի իրավասությանը վերաբերող խնդիր» (5-րդ կետ):

Քննարկվող հիմնախնդրին սերտորեն առնչվում է ևս մեկ կարևոր հանգամանք: Բանն այն է, որ Հայաստանի Հանրապետությունը քաղաքացիության հարցում առաջնորդվում է «արյան» սկզբունքով, ինչը նշանակում է, թե որտեղ, որ երկրում էլ գտնվելիս կամ բնակվելիս լինի Հայաստանի Հանրապետության քաղաքացին, նա չի կորցնում Հայաստանի քաղաքացիությունն ու դուրս չի գալիս հաշվառումից, ուրեմն և՛ չի կորցնում համապետական ընտրություններին մասնակցելու իրավունքը: Դրա հետևանքով համապետական ընտրությունների մասնակիցների ընտրական ցուցակները կազմելիս արտասահմանում բնակվող ընտրական իրավունք ունեցող անձանց ազգանուններն ընդգրկվում են Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրում:

Մինչդեռ նշված անձանց կողմից ընտրական իրավունքի իրականացման համար Հայաստանի Հանրապետության գործող ընտրական օրենսգրքը զրեթե ոչ մի պայման չի նախատեսում: Այսպես, 1999 թ. ընդունված Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 2 հոդվածով (2-րդ կետ) սահմանված էր, որ «ընտրությունների նախապատրաստման և անցկացման ընթացքում արտասահմանում բնակվող կամ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներն ունեն ընտրական իրավունք: Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները սույն օրենսգրքով և կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից սահմանված կարգով ապահովվում են Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումը»:

Այդ խնդրի լուծման նպատակով ընտրական օրենսգրքն իրավունք էր վերապահում արտասահմանում գործող դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների ղեկավարներին կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով կազմելու համապատասխան պետություններում բնակվող կամ գտնվող ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիների ընտրական ցուցակները (9 հոդ., 5-րդ կետ): Այդ ցուցակներում ընդգրկված քաղաքացիներն իրենց ընտրական իրավունքն իրականացնում էին համապետական ընտրությունների անցկացման համար արտասահմանում գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններում կազմավորված

ընտրական տեղամասերում (Օրենսգրքի 15 հոդվածի 4-րդ կետ):

Տեղամասային հանձնաժողովներն ընտրական օրենսգրքով սահմանված կարգով ամփոփում էին քվեարկության արդյունքները և ուղարկում Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովին:

Նման կարգը շարունակեց գործել մինչև 2007 թվականը, երբ մարտի 6-ին ընդունված օրենքով ընտրական օրենսգրքում կատարված փոփոխության հետևանքով արգելվեց արտասահմանում գտնվող կամ ապրող քաղաքացիների ընտրական իրավունքը իրականացնել դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններում կազմակերպված ընտրական տեղամասերում: Արդեն 2008 թ. հրապարակված (առ 18.12.2007 թ. կատարված փոփոխություններով և լրացումներով) Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրքը սահմանում էր. «Հայաստանի Հանրապետության ընտրություններն անցկացվում են միայն Հայաստանի Հանրապետության տարածքում» (1 հոդ., 5-րդ կետ):

Այդ նույն կարգը սահմանվում է նաև Հայաստանի Հանրապետության գործող օրենսգրքով. «Քվեարկությունն անցկացվում է միայն Հայաստանի Հանրապետության տարածքում կազմավորված տեղամասային կենտրոններում...» (54 հոդ., 1-ին կետ):

Մեր խնդիրը չէ գնահատել քննարկվող հարցում Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի նման մոտեցումը: Միայն կարելի է ենթադրել, որ հանրապետությունից հեռացած քաղաքացիների մեջ քիչ չեն այն անձինք, ովքեր գործող իշխանությունների հետ այս կամ այն հարցի շուրջ ունեցել են տարաձայնություն, հետևաբար չեն կարող քաղաքական կողմնորոշման հարցում դրսևորել օբյեկտիվ վարքագիծ:

Անկախ բոլոր հանգամանքներից և ենթադրություններից՝ միայն Հայաստանի տարածքում քվեարկություն անցկացնելը, մեր կարծիքով, արտասահմանում բնակվող կամ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին փաստորեն զրկում է ընտրական իրավունքից, քանզի հազիվ թե արտասահմանում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին իր ընտրական իրավունքի իրականացման համար այցելի Հայաստան, մասնակցի քվեարկությանը, ապա վերադառնա իր բնակության երկիր:

Այդ ընդհանուր կանոնից (միայն Հայաստանի Հանրապետության տարածքում քվեարկության իրավունքի իրականացման) ընտրական օրենսգիրքը բացառություն է նախատեսում միայն ընտրության օրը Հայաստանի տարածքից դուրս գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչություններում դիվանագիտական ծառայություն իրականացնող ընտրողների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի ընտրելու իրավունք ունեցող անդամների համար, որոնք կարող են մասնակցել համապետական ընտրություններին՝ քվեարկելով էլեկտրոնային եղանակով՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով և ժամկետներում (60 հոդ., 1-ին կետ):

Նշված կարգը տարածվում է նաև Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց (անկախ սեփականության ձևից) արտասահմանում տեղակայված ներկայացուցիչների՝ ընտրելու իրավունք ու-

նեցող աշխատակիցների և նրանց հետ արտերկրում բնակվող ընտանիքի՝ ընտրելու իրավունք ունեցող անդամների վրա (60 հոդ., 3-րդ կետ):

Նման իրավիճակում, երբ հանրապետությունում ընտրությունների անցկացման համար կազմվում է ընտրողների միասնական ցուցակ, որի մեջ ընդգրկվում են նաև արտերկրում բնակվող ընտրական իրավունք ունեցող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, և արգելվում է ստորագրած ընտրական ցուցակներին ծանոթանալը՝ ընտրական գործընթացի մասնակիցների և հասարակության լայն զանգվածների շրջանում բնականաբար առաջանում են հիմնավոր կասկածներ՝ ընտրություններին մասնակցող քաղաքական ուժերի կողմից արտերկրում ապրող քաղաքացիների ձայներն իրենց շահերին ծառայեցնելու վերաբերյալ: Այստեղից էլ ծնվում են բնակչության կասկածը ընտրությունների լեգիտիմության վերաբերյալ և անվստահությունը ընտրություններում հաղթած քաղաքական ուժերի նկատմամբ:

Այդ առնչությամբ քննարկվող հիմնախնդրի հանգուցալուծման համար, մեր կարծիքով, այլընտրանքային տարբերակ կարող է լինել հետևյալ առաջարկը:

Ինչպես ասվեց, մինչև 2007 թվականը արտասահմանում բնակվող կամ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացումն ապահովում էին ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով: Այդ նպատակով վերջիններս կազմում էին ընտրական ցուցակներ և ստեղծում ընտրական տեղամասային կենտրոններ, որտեղ քաղաքացիներն իրականացնում էին իրենց ընտրական իրավունքը:

Գործող ընտրական օրենսգրքով ներկայումս արտերկրում բնակվող քաղաքացիներն իրենց ընտրական իրավունքը կարող են իրականացնել միայն Հայաստանի Հանրապետության տարածքում կազմավորված տեղամասային կենտրոններում (հոդվ. 54, 1-ին կետ): Այդ առնչությամբ նպատակահարմար կլինի, եթե արտերկրներում գտնվող ՀՀ դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունները կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով կազմեն տվյալ երկրում բնակվող կամ գտնվող ընտրական իրավունք ունեցող ՀՀ քաղաքացիների ընտրական ցուցակները (ինչպես որ կալանավորված անձանց պահելու վայրում գտնվող ընտրողների ցուցակները կազմում է քրեակատարողական հիմնարկի ղեկավարը, իսկ զինվորական մասում քվեարկության իրավունք ունեցողների ընտրական ցուցակը կազմում է զորամասի հրամանատարը) և ներկայացնեն բնակչության պետական ռեգիստրը վարող հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին, որն էլ դրանք կարող է սահմանված ժամկետում տրամադրել տեղամասային ընտրական հանձնաժողովներին:

Այդ ցուցակներն ինչպես քվեարկությունից առաջ, այնպես էլ քվեարկությունից հետո կարելի է փակցնել համապատասխան ընտրական տեղամասում՝ ի տես բոլորի, նկատի ունենալով, որ այդ կերպ չի խախտվի արտերկրում ապրող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների «չընտրելու գաղտնիությունը», քանզի նրանց թիվը, մեր կարծիքով, ա-

ռանձնապես մեծ չի լինելու:

Քննարկվող հիմնախնդրի վերաբերյալ բերված հիմնավորումների և եզրահանգումների հիման վրա կարելի է առաջարկել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի որոշ հոդվածներում կատարել հետևյալ փոփոխությունները և լրացումները:

**Առաջին,** ընտրական օրենսգրքի 7 հոդվածում («Ընտրողների ռեգիստրը վարելը, ընտրողների ցուցակները կազմելը») քրեակատարողական հիմնարկների, ձերբակալվածներին պահելու վայրերի ղեկավարների և զինվորական մասերի հրամանատարների հետ միասին՝ ընտրողների ցուցակներ կազմելու իրավունք վերապահել նաև օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների ղեկավարներին: Այդ առնչությամբ ՀՀ ընտրական օրենսգրքի 7 հոդվածի 3-րդ կետը շարադրել հետևյալ կերպ. «3. Սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ընտրողների ցուցակներ կազմում են նաև օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների, քրեակատարողական հիմնարկների, ձերբակալվածներին պահելու վայրերի ղեկավարները և զինվորական մասերի հրամանատարները»:

**Երկրորդ,** Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 8 հոդվածով («Ընտրողների ցուցակում ընդգրկելը») սահմանվում է ինչպես տեղական ինքնակառավարման մարմինների, այնպես էլ համապետական ընտրությունների ժամանակ հանրապետության քաղաքացիներին ընտրական ցուցակներում ընդգրկելու կարգը: Քանի որ արտասահմանում բնակվող կամ գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները կարող են մասնակցել միայն համապետական ընտրություններին, ուստի Օրենսգրքի 8 հոդվածը կարելի է լրացնել հետևյալ բովանդակությամբ կետով (նպատակահարմար է 8-րդ կետից հետո)՝ «Համապետական ընտրությունների ժամանակ Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կազմվող ընտրողների ցուցակում կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած կարգով ընդգրկվում են ընտրելու իրավունք ունեցող և հայտ ներկայացրած Հայաստանի Հանրապետության քաղաքացիները, ովքեր բնակվում կամ գտնվում են Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս:

Օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչության բացակայության դեպքում Հայաստանի Հանրապետության քաղաքացի ընտրողների ցուցակում գրանցվելու հայտով կարող է դիմել իր բնակվելու կամ գտնվելու վայրին մոտ գտնվող պետությունում գործող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչություն»:

**Երրորդ,** Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 10 հոդվածը սահմանում է ընտրողների ցուցակներն ընտրական հանձնաժողովներին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին հանձնելու կարգը: Ըստ այդ հոդվածի՝ լիազոր մարմնի կողմից կազմվող ցուցակները՝ ըստ ընտրական տեղամասերի և ընտրական տեղամասում ընդգրկված բնակելի շենքերի (տների) հասցեների՝ տպագրված երկու օրինակից, լիա-

զոր մարմինը քվեարկության օրվանից երկու օր առաջ տրամադրում է տեղամասային ընտրական հանձնաժողովների նախագահներին (3-րդ կետ):

Ջորամասի հրամանատարը, քրեակատարողական հիմնարկի և ձերբակալված անձանց պահելու վայրի ղեկավարները նույն կարգով կազմում են համապատասխան ընտրական ցուցակները և քվեարկությունից 2-3 օր առաջ հանձնում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին:

Այլ է խնդիրը Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կազմված ընտրական ցուցակների դեպքում: Այդ ցուցակները կազմում, էջակալում, յուրաքանչյուր էջ ստորագրում և կնքում են օտարերկրյա պետություններում գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների ղեկավարները: Եվ քանի որ այդ ցուցակներում կարող են ընդգրկված լինել հանրապետության տարբեր համայնքներում հաշվառում ունեցող քաղաքացիներ, ուստի այդ ցուցակները կազմող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական կամ հյուպատոսական ներկայացուցչությունների ղեկավարները ընտրական ցուցակներն ուղարկում են բնակչության պետական ռեգիստրը վարող Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական կառավարման մարմին:

Այդ առնչությամբ նպատակահարմար է Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 10 հոդվածում (3-րդ կետից հետո) նախատեսել առանձին կետ՝ հետևյալ բովանդակությամբ.

«Լիազոր մարմինը Հայաստանի տարածքից դուրս կազմված ընտրական ցուցակները ստանալուց հետո դրանց հիման վրա կազմում է մեկ միասնական ընտրական ցուցակ՝ ըստ ընտրական տեղամասերի և տեղամասերում ընդգրկված բնակելի շենքերի հասցեների՝ տպագրված 2 օրինակից (1-ին օրինակը՝ կազմված մատյանի ձևով, 2-րդ օրինակը՝ տեղամասային կենտրոնում փակցնելու համար)»:

**Չորրորդ,** Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող ընտրողների ցուցակները համարվում են Հայաստանի Հանրապետության ընտրողների ռեգիստրի բաղկացուցիչ մասը: Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրը վարող կառավարության լիազորած պետական կառավարման մարմինը (լիազոր մարմինը) ստանալով արտասահմանյան երկրներում գտնվող Հայաստանի Հանրապետության դիվանագիտական և հյուպատոսական ներկայացուցչությունների ղեկավարների կողմից կազմված ընտրողների ցուցակները, դրանք համակարգում է ըստ հաշվառման վայրի և որպես ինքնուրույն ցուցակ՝ երկու օրինակ տրամադրում է համապատասխան տեղամասային ընտրական հանձնաժողովին: Տեղամասային հանձնաժողովը ցուցակներից առաջինը, որը կազմված է մատյանի ձևով, օգտագործում է այնտեղ ընդգրկված արտասահմանում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների քվեարկությունը կազմակերպելու համար, երկրորդ օրինակը փակցնում է տեղամասային կենտրոնում:

Ընտրությունների ավարտից և քվեարկության արդյունքներն ամփոփելուց հետո ընտրողների ցուցակի (արտասահմանում բնակվող կամ

գտնվող Հայաստանի Հանրապետության քաղաքացիների) այն օրինակը, որը քվեարկության ժամանակ ստորագրել են ընտրողները, փակցվում է ընտրատարածքում կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանած ժամկետում կամ մատչելի է դարձվում ծանոթության համար:

Այդ առնչությամբ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 11 հոդվածի («Ընտրողների ցուցակների մատչելիությունը») 1-ին կետում կարելի է կատարել հետևյալ լրացումը. «Հայաստանի Հանրապետության ընտրողների ցուցակը և **արտասահմանում բնակվող կամ գտնվող ընտրողների ստորագրած ցուցակը**, բացառությամբ զինվորական մասերում կազմվող, ինչպես նաև ընտրողների ստորագրած ցուցակների, ազատ է ծանոթության համար:

Ընտրողների ստորագրած ցուցակները, **բացառությամբ արտասահմանում բնակվող կամ գտնվող ընտրողների ստորագրած ցուցակների**, հրապարակման ենթակա չեն, դրանցից լուսապատճեններ չեն հանվում, դրանք չեն լուսանկարվում և տեսանկարահանվում»:

**Հինգերորդ**, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 31 հոդվածի («Դիտորդի, զանգվածային լրատվամիջոցի ներկայացուցչի իրավունքները, պարտականությունները, և գործունեության երաշխիքները») 1-ին կետը (3-րդ մաս) դիտորդներին, զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչներին իրավունք է վերապահում անարգել ծանոթանալու ցանկացած ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին..., ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ, բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների:

Մեր կարծիքով, այդ բացառությունը նույնպես չպետք է տարածվի Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կազմված ցուցակների, այդ թվում՝ ընտրողների կողմից ստորագրված ընտրական ցուցակների վրա: Այդ կապակցությամբ նպատակահարմար է ընտրական օրենսգրքի 31 հոդվածի 1-ին կետի 3-րդ մասի շարադրանքում կատարել հետևյալ լրացումը. նշված կետի 7-րդ տողի «համապատասխան տեղեկանքին» արտահայտությունից հետո ավելացնել՝ «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կազմված ընտրական ցուցակներին, որոնք ստորագրել են ընտրողները», այնուհետև՝ ինչպես տեքստում:

**Վեցերորդ**, Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքը նույն բովանդակությամբ իրավունք է վերապահում նաև թեկնածուների վստահված անձանց: Վերջիններս, ըստ Օրենսգրքի 33 հոդվածի (1-ին կետի 2-րդ մաս), իրավունք ունեն անարգել ծանոթանալու տվյալ հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական բոլոր փաստաթղթերին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից կատարել քաղվածքներ՝ բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների: Ինչպես դիտորդների և զանգվածային լրատվության միջոցների ներկայացուցիչների, այնպես էլ վստահված անձանց համար այդ բացառությունը, մեր կարծիքով, նույնպես չպետք է տարածվի Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կազմված ցուցակների, այդ թվում՝ ընտրողների ստորագրած ընտրական ցուցակների վրա: Այդ կապակցությամբ նպատակահարմար է ընտրական օրենսգրքի 33 հոդվածի 1-ին կետի 2-րդ մասի շարադրանքը



լրացնել հետևյալ կերպ. նշված կետի 7-րդ տողի «համապատասխան տեղեկանքին» արտահայտությունից հետո ավելացնել՝ «Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս կազմված ընտրական ցուցակներին, որոնք ստորագրել են ընտրողները», այնուհետև՝ ինչպես տեքստում:

**Յոթերորդ,** Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի բերված հոդվածը (հոդվ. 33) վստահված անձի համար նախատեսում է նաև մի շարք այլ իրավունքներ և պարտականություններ: Վերջինների թվում առավել կարևոր են քվեարկության արդյունքները ամփոփելիս քվեարկված քվեաթերթիկներին և դրանցում կատարված նշումներին անարգել ծանոթանալու, քվեաթերթիկների հաշվարկմանը և քվեարկության արդյունքների ամփոփմանը ներկա լինելու իրավունքները (1-ին կետի 7-րդ մաս) և այլն:

Սակայն, վստահված անձի հսկողական գործառույթը ընտրական գործընթացների նկատմամբ, մեր կարծիքով, առավել կարևորվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի կողմից քվեարկության արդյունքների ամփոփման ժամանակ, քանզի ընտրությունների արդյունքներն (ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ պատճառներով) մեծ մասամբ աղավաղվում են հենց այս դեպքում: Այդ է վկայում Հայաստանի Հանրապետության 1912 թ. մայիսի 6-ի խորհրդարանական ընտրությունների վերաբերյալ Եվրախորհրդի դիտորդական առաքելության վերջնական զեկույցը, որտեղ նշված է. «Դիտարկված ձայների հաշվարկման գործընթացներից մեկ հինգերորդը բացասաբար է գնահատվել, հիմնականում ընթացակարգային խնդիրների պատճառով, ինչպիսիք են հիմնական վերստուգիչ ընթացակարգերը չկատարելը, ոչ թափանցիկ հաշվարկման դեպքերը, արդյունքների վերաբերյալ արձանագրությունների լրացման հետ կապված խնդիրները և լուրջ խախտումների առանձին դեպքերը»<sup>8</sup>:

Այդ առնչությամբ Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 67 հոդվածի («Ընտրական տեղամասում քվեարկության արդյունքներն ամփոփելու կարգը») 4-րդ կետում նախատեսվում է, որ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության ավարտից և օրենքով նախատեսված գործողություններն ավարտելուց հետո բացում է քվեատուփը, այնտեղից հանում քվեարկության մեկ ծրար, բարձրաձայն հայտարարում ծրարի սահմանված կամ չսահմանված մոնչի լինելու մասին, ապա ցուցադրում այնպես, որ այն տեսանելի լինի ներկաներին: Պահանջի դեպքում քվեաթերթիկը փոխանցվում է հանձնաժողովի մյուս անդամներին:

Այս գործընթացում վստահված անձը, որը ընտրության արդար ելքով խիստ շահագրգռված կողմ է, փաստորեն զուրկ է գործընթացի նկատմամբ անմիջական հսկողության որևէ հնարավորությունից և զուտ կրավորական դիտորդի դերում է: Ուստի հարկ է, որ ընտրական օրենսգիրքը վստահված անձանց համար ապահովի տեղամասային ընտրական հանձնաժողովի գործունեության նկատմամբ հսկողություն իրականացնելու իրական հնարավորություն՝ առավելապես ձայները հաշվելու և ընտրությունների

<sup>8</sup> «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի ընտրություններ 2012 թ. մայիսի 6»: ԵԱՀԿ/ԺՀՄԻԳ ընտրությունների դիտորդական առաքելություն, վերջնական զեկույց, Վարշավա, 2012 թ. հունիսի 26, էջ 4-5:

արդյունքներն ամփոփելու փուլում: Այդ առնչությամբ նպատակահարմար է, մեր կարծիքով, ընտրական օրենսգրքի 67 հոդվածի 4-րդ կետում ամրագրել դրույթ, որի համաձայն՝ պահանջի դեպքում տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեաթերթիկը փոխանցի ոչ միայն «հանձնաժողովի մյուս անդամներին», այլ նաև վստահված անձին: Դրա համար անհրաժեշտ է Օրենսգրքի 67 հոդվածի 4-րդ կետի առաջին նախադասության վերջում՝ «հանձնաժողովի մյուս անդամներին» բառակապակցությունից հետո, ավելացնել՝ «և վստահված անձանց» բառերը:

Բացի այդ, նպատակահարմար է վստահված անձին նաև իրավունք վերապահել ձայները հաշվելու ժամանակ տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահի արտահայտած կարծիքին համաձայն չլինելու դեպքում ներկայացնելու առարկություն, ինչը նախատեսված է հանձնաժողովի անդամների համար: Այդ կապակցությամբ անհրաժեշտ է ընտրական օրենսգրքի 67 հոդվածի 4-րդ կետի 6, 7, 8, 16, 17 տողերում «հանձնաժողովի անդամ» արտահայտությունից հետո ավելացնել «կամ վստահված անձ» բառակապակցությունը, իսկ 15-րդ տողի «հանձնաժողովի մյուս անդամներին» արտահայտությունից հետո ավելացնել «և վստահված անձանց» բառերը:

Մեր կարծիքով, այդ ճանապարհով կլուծվեն քաղաքացիների ստորագրած ընտրական ցուցակների գաղտնիության պահպանման և գաղտնագերծման հետ սերտորեն առնչվող մի քանի հանգուցային խնդիրներ:

ա) Հայաստանի Հանրապետության ընտրողների ստորագրած ընտրական ցուցակի հրապարակման արգելումը այլևս որևէ մեկի մեջ կասկած չի առաջացնի՝ այն կեղծված լինելու առումով,

բ) տարակարծության տեղիք չի տա Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքում Եվրախորհրդի Վենետիկի հանձնաժողովի «Ընտրական հարցերում բարենպաստ գործունեության կանոնագիրք. ցուցումներ և բացատրական զեկույց» միջազգային փաստաթղթի 54 հոդվածի՝ «...քանի որ քվեարկության չմասնակցելը կարող է վկայել քաղաքական ընտրության մասին, ապա քվեարկած անձանց ցուցակը չպետք է հրապարակվի» պահանջը հաշվի առնելու օրինաչափությունը,

գ) Հայաստանի Հանրապետության քաղաքացիների մեջ կվերականգնվի հավատը ազատ ու արդար ընտրությունների, ուրեմն և՛ ըստ այդմ ձևավորված պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների նկատմամբ,

դ) հնարավոր կլինի ճշտել Հայաստանի Հանրապետությունում բնակվող ընտրական իրավունք ունեցող քաղաքացիների իրական թիվը և յուրաքանչյուր համապետական ընտրություններին քվեարկությանը մասնակցած քաղաքացիների թիվը, ինչը հնարավորություն կտա պատկերացում կազմելու ընտրություններին քաղաքացիների մասնակցության վիճակի մասին:

**Բանալի բառեր** – ազատ ընտրություններ, ընտրողների ստորագրած ցուցակների գաղտնագերծում, քաղաքական ընտրություն, ընտրողների ռեգիստր, ընտրողների միասնական ցուցակ, ընտրությունների լեգիտիմություն, համապետական ընտրություններ

**НОРИК АЙВАЗЯН – *Некоторые проблемы усовершенствования избирательного кодекса Республики Армения.*** – Проживающие за рубежом граждане Армении не теряют своё гражданство и регистрацию. В результате, когда составляются избирательные списки, их имена включаются в регистр избирателей. Однако, согласно Избирательному кодексу РА, “голосование проводится только в участковых центрах, образованных на территории Республики Армения” (статья 54, пункт 1), что фактически лишает находящихся за границей граждан права участия в выборах. В то же время по Избирательному кодексу списки, подписанные избирателями, оглашению не подлежат, с них не снимаются светокпии, не производится их фотографирование и видеосъёмка (статья 11, пункт 1). Это порождает сомнения, не используют ли отдельные политические силы в своих интересах голоса тех, кто находится за границей. В статье предлагается предоставить руководителям дипломатических представительств РА право составлять списки лиц, имеющих избирательное право. Эти списки следует систематизировать по месту регистрации в самостоятельный список и вывешивать его на избирательных участках.

**Ключевые слова:** *свободные выборы, рассекречивание списков избирателей, политический выбор, регистр избирателей, единый список избирателей, легитимность выборов, общегосударственные выборы*

**NORIK AYVAZYAN – *Some problems of Improvement of the Electoral Code of the Republic of Armenia.*** – According to the article, an Armenian citizen, living in another country, neither loses his citizenship, nor his registration. As a result, when drafting electoral lists of general elections, their names are included in the RA voter register. Meanwhile, the Code provides that “The voting shall be conducted only in polling stations formed in the territory of the Republic of Armenia” (art. 54. cl. 1). The mentioned situation, in fact, deprives citizens outside the RA of the right to vote.

At the same time, according to the Code, lists signed by voters shall not be published, and no copy of these lists shall be made; furthermore, they may not be photographed or videotaped (art. 11, cl.1).

As a result, the participants of the electoral process and broad masses of society have doubts that some political powers use those votes for their own interests. Hence, doubt arises, concerning the fairness of elections and distrust towards the winner political powers. In this regard, it is suggested in this article to give rights to heads of diplomatic representations of RA to draft lists of the citizens, who have electoral rights. After these documents are signed and sealed, the authority sends them to the authorized body. The latter systemizes those lists according to the place of registration and sends 2 samples of the formed list to the polling station committee. After voting the signed lists are made accessible for the society.

This kind of solution of the problem would dispel doubts concerning the falsification of elections results and would restore faith towards free and fair elections, and consequently towards public authorities.

**Key words:** *free elections, declassification of the signed voters' lists, political election, the Voters Register, uniform list of voters, legitimacy of elections, national elections*

# ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

## Ձեռքբերման վաղեմութուն

### ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵՂՅԱՆ

Սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական եղանակների շարքում տեսական և գործնական հետաքրքրություն է ներկայացնում «ձեռքբերման վաղեմության» հիմքով սեփականության իրավունքի ծագման հիմնահարցը: Սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական այդ եղանակը, որը արժևորվում էր դեռևս հին հռոմեական իրավունքում և հայտնի էր բոլոր իրավական համակարգերին<sup>1</sup>, ՀՀ քաղաքացիական օրենսգրքում (այսուհետև՝ Քաղ. օր.) իր ամրապնդումը ստացավ 1998 թ.: Քաղ. օր. 187 հոդվածը սահմանեց, որ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, սակայն տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ այն տիրապետում է որպես սեփական գույք, այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք (ձեռքբերման վաղեմություն): Վերոհիշյալ հոդվածից հետևում է, որ ձեռքբերման վաղեմությունն օրենքով նախատեսված որոշակի ժամկետի լրանալու և որոշակի պայմանների պահպանման ուժով մեկ անձի կողմից սեփականության իրավունքի ձեռքբերման, իսկ մյուսի համար այդ իրավունքի դադարման միջոց է<sup>2</sup>:

Այդ ինստիտուտը թույլ է տալիս փաստի և իրավունքի միջև խզում առաջանալու դեպքում, երբ չտիրապետող սեփականատերն իրեն պատկանող գույքը վերադարձնելու շահագրգռվածություն չի ցուցաբերում, փաստացի տիրապետողին սեփականատեր ճանաչելու միջոցով հաղթահարելու գույքային հարաբերությունների ոլորտում առաջացող անորոշությունը: Ձեռքբերման վաղեմությունը «բոլոր ժամանակաշրջաններում ուղղված է եղել իրավունքում անհատակությունների վերացմանը»<sup>3</sup>:

Ձեռքբերման վաղեմության ինստիտուտը, սեփականության իրավունքի առաջացման հիմք հանդիսանալուց բացի, որպես փաստացի տիրապետության պաշտպանության նյութաիրավական միջոց, կոչված է պաշտպանելու գույքը երկարատև, բացահայտ և անընդմեջ տիրապետողի իրավունքը<sup>4</sup>: Դա պայմանավորված է այն իրողությամբ, որ այդպիսի տիրապետությունը, ըստ օրենքի, իրավաբանորեն վիճարկվող փաստ չէ: Այդպիսի տիրապետությունը տիրապետողի համար ապահովում է առանց գույքից

<sup>1</sup> Տե՛ս **Масевич М. Г.** Основания приобретения права собственности на бесхозяйные вещи // «Проблемы современного гражданского права». Сборник статей. М., 2000, էջ 181:

<sup>2</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 23.05.2008 թ. 3-367 (ՎԴ) որոշումը: ՀՀՊՏ թիվ 38 (628) 18.6.2008, էջ 133:

<sup>3</sup> **Бабаев А. Б.** Система вещных прав. М., 2006, с. 218.

<sup>4</sup> Տե՛ս ՀՀ Սահմանադրական դատարանի 21.11.2006 թ. ՍԴՈ-667 որոշման 5-րդ կետը: «Սահմանադրական դատարան, Տեղեկագիր», թիվ 2 (43), 2007, էջ 57:

կամայականորեն զրկվելու մտավախության այն իր հայեցողությամբ տիրապետելու և օգտագործելու հնարավորություն: Ըստ այդմ, Քաղ. օր.-ը ձեռքբերման վաղեմության ժամանակահատվածի ընթացքում տիրապետողին, իրավունքի առկայությունից անկախ, առավելություն է վերապահում այդ գույքը տիրապետելու տիտղոս չունեցող այլ անձանց նկատմամբ և հնարավորություն է տալիս մինչև սեփականության հարցի լուծումը ոչ միայն լիարժեք իրականացնելու իր իրավագործությունները, այլև բացառելու գույքի նկատմամբ տիտղոսային տիրապետող չհանդիսացող երրորդ անձանց պահանջները, վերացնելու փաստացի տիրապետության իրականացման խոչընդոտները, իր տիրապետությունը պաշտպանելու այն երրորդ անձանցից, որոնք գույքի սեփականատեր չեն և օրենքով կամ պայմանագրով նախատեսված այլ հիմքով դրա նկատմամբ տիրապետման իրավունք չունեն (հոդվ. 187, 3-րդ մաս): Հետևաբար, երրորդ անձանց կողմից ոտնձգությունների դեպքում գույքի տիրապետողը, հիմնվելով Քաղ. օր. 278 հոդվածի վրա, կարող է վիճակագիտորեն հայցի միջոցով վերականգնել տիրապետման իր իրավունքը: Նման կարգավորման նպատակն է՝ իրավականորեն վավերացնել փաստական հարաբերությունները, իրավաբանական նշանակություն հաղորդել գոյություն ունեցող փաստացի հարաբերություններին, ծառայել քաղաքացիական շրջանառության կայունացմանը:

Ձեռքբերման վաղեմությամբ գույքը տիրապետողին մնան իրավունքներ վերապահելը հիմք է տալիս եզրակացնելու, որ մեր օրենսդրությունը տիրապետողական պաշտպանության ինստիտուտի բացակայության պարագայում, այնուհանդերձ, ձեռքբերման վաղեմության ինստիտուտի միջոցով ապահովում է փաստացի տիրապետողի շահերի համակողմանի պաշտպանությունը: Ընդ որում, ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր դառնալու հնարավորություն նախատեսում է միայն անշարժ գույք<sup>5</sup> համարվող հողամասերի, ընդերքի մասերի, մեկուսի ջրային օբյեկտների, անտառների, բազմամյա տնկիների, ստորգետնյա և վերգետնյա շենքերի, շինությունների և հողին ամրակցված այն գույքի նկատմամբ, որն անհնարին է հողից անջատել՝ առանց այդ գույքին կամ հողամասին վնաս պատճառելու կամ դրանց նշանակությունը փոփոխելու, դադարելու կամ նպատակային նշանակությամբ հետագա օգտագործելու անհնարինության (Քաղ. օր. 134 հոդվ.):

Թվարկված օբյեկտների բնույթն այնպիսին է, որ սեփականատեր չհանդիսացող անձը դրանք կարող է տիրապետել, եթե սեփականատերը հրաժարվել է դրանց նկատմամբ սեփականության իրավունքից կամ գույքը թողել է առանց դրա նկատմամբ սեփականության իրավունքը պահպանելու մտադրության կամ կորցրել է գույքի նկատմամբ հետաքրքրությունը և տիրապետողից վերադարձնելու ցանկություն չունի: Այսինքն՝ այդ ինստիտուտի կիրառմամբ սեփականության իրավունք կարող է առաջանալ ինչպես տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ, այնպես էլ այն անշարժ գույքի նկատմամբ, որը սեփականության իրավունքով պատկանում է այլ անձի, բայց սեփականատերը օրենքով սահմանված ժամկետում անտար-

<sup>5</sup> ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը ձեռքբերման վաղեմության ուժով շարժական գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ճանաչում չի նախատեսում:

բեր վերաբերմունք է ցուցաբերում դրա նկատմամբ<sup>6</sup>:

Բնական է, որ եթե գույքի սեփականատերը հրաժարվել է իր իրավունքից կամ երկար ժամանակ իր սեփականության իրավունքը պաշտպանելու՝ գույքն իրեն վերադարձնելու ցանկություն չի դրսևորում, հաշտվել է դրա կորստյան հետ, քաղաքացիական հարաբերություններում հստակություն ապահովելու համար նպատակահարմար է այդ գույքը ճանաչել փաստացի տիրապետողի սեփականությունը<sup>7</sup>: Նման հանգուցալուծումը միանգամայն արդարացի է, եթե տիրապետողը օրենքով սահմանված ժամանակահատվածի ընթացքում սեփականատիրոջ փութեռանդությանը իրականացնում է այդ գույքի օգտագործումը, կրում է նրա պահպանության հոգսը և կատարում է օրենքով նախատեսված մյուս պահանջները: Իսկ Քաղ. օր. 187 հոդվածը սահմանում է, որ գույքի սեփականատեր դառնալու համար ոչ սեփականատեր տիրապետողը պետք է գույքը տիրապետի տասը տարուց ոչ պակաս, բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ, որպես իր սեփականը: Այդ պայմաններն անհրաժեշտ ու բավարար են ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր դառնալու համար, և Քաղ. օր. 187 հոդվածի ուժով սեփականության իրավունք ձեռք բերել ցանկացող անձը պարտավոր է դատարանին ապացուցել իր կողմից այդ պայմանները պահպանած լինելը:

**1. Տիրապետման տևողություն:** Ժամանակը բոլոր իրավական հարաբերությունների ուղեկիցն է և դրանց վրա ազդում է ոչ թե ինքնին, այլ այս կամ այն իրավաբանական փաստերի միջոցով, որոնք դրանով պայմանավորվում կամ սահմանափակվում են<sup>8</sup>:

Ասվածը վերաբերում է նաև ձեռքբերման վաղեմության ժամկետին, որի ընթացքում իրականացվող տիրապետությունը միմյանց հետ կապված մի շարք գործողություններից կազմված իրավական վիճակ է, երկարատև իրավականորեն արժևորվող գործունեություն, որի իրավական հետևանքը (սեփականության իրավունքի ձեռքբերումը) վրա է հասնում այդպիսի գործունեության իրականացման համար սահմանված ժամկետը լրանալուց հետո: Այդ ժամկետը բնութագրում է երևույթը ժամանակի մեջ՝ սահմանելով նրա տևողությունը: Մյուս կողմից՝ այդ ժամկետը սեփականատիրոջ համար ապահովում է գույքի նկատմամբ իր վերաբերմունքը դրսևորելու հնարավորություն, և եթե սեփականատերը գույքը իրեն վերադարձնելու ցանկություն չի դրսևորում, հնարավորություն է տալիս մտածելու, որ գույքը փաստացի տիրապետողին հանձնելը արդարացի է: Ձեռքբերման վաղեմությանը սեփականության իրավունքի ձեռքբերման օբյեկտիվ այդ պայմանը նախատեսվում է օրենքով, և մինչև սահմանված ժամկետի լրանալը տիրապետողը չի կարող դիմել իրեն սեփականատեր ճանաչելու խնդրանքով: Ըստ ՀՀ քաղ. օր. 187 հոդվածի՝ տիրապետման նվազագույն տևողությունը չի կարող տասը տարուց պակաս լինել: Այդ ժամկետը հաշվարկելիս հիմք է ընդունվում գույքի փաստացի տիրապետության ամբողջ

<sup>6</sup> Տե՛ս ՀՀ Վճռաբեկ դատարանի 10.10.2007 թ., 3-1451, 27.03.2008 թ. 3-153 (ՎԴ), 31.10.2008 թ., ԵԿԴ/0590/02/08 թվակիր որոշումները:

<sup>7</sup> Տե՛ս «Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации части первой (постатейный)». М., 2005, էջ 617-618:

<sup>8</sup> Տե՛ս **Гамбаров Ю. С.** Курс гражданского права. Часть общая. Т. I. СПб., 1911, էջ 651:

ժամանակահատվածը: Այսինքն՝ այդ ժամանակահատվածի մեջ հաշվվում է ինչպես տիրապետողի կողմից իրականացված փաստացի տիրապետությունը, այնպես էլ այն ժամանակահատվածը, երբ այդ գույքը տիրապետողի հետ կնքված գործարքով գտնվել է այլ անձանց մոտ և ժամկետը լրանալուց հետո վերադարձվել է: Բացի դրանից, ձեռքբերման վաղեմության ժամկետը հաշվարկելիս հաշվի է առնվում նաև իրավանախորդների փաստացի տիրապետության ժամանակահատվածը, քանի որ 187 հոդվածը ձեռքբերման վաղեմությունը վկայակոչող անձին իրավունք է վերապահում իր տիրապետման ժամկետին միացնել այն ժամանակահատվածը, որի ընթացքում այդ գույքը տիրապետել է այն անձը, որի իրավահաջորդն է ինքը (Քաղ. օր. 187 հոդվածի 2-րդ կետ): Այլ խոսքով՝ անձը ձեռքբերման վաղեմության ուժով սեփականությունը ճանաչելու հայց կարող է հարուցել նաև ավելի պակաս ժամանակահատված տիրապետելու դեպքում, եթե իր և իր իրավանախորդի տիրապետման ժամկետների գումարը պակաս չէ տասը տարուց: Չնայած Քաղ. օր.-ը «իրավանախորդ» բառն օգտագործում է եզակի թվով, այնուհանդերձ, մեր կարծիքով, պետք է համաձայնել Մ. Գ. Մասևիչի հետ, որ տիրապետման վաղեմության վրա հենվող անձը կարող է տիրապետման երկարատևությունն ապացուցել մի քանի իրավահաջորդություններով, եթե, օրինակ, գույքի տիրապետությունը պայից փոխանցվել է հորը, իսկ հետագայում՝ թոռանը<sup>9</sup>:

ՀՀ քաղ. օր. 187 հոդվածը, ի տարբերություն ՌԴ քաղ. օր. 234 հոդվածի 4-րդ կետի, ձեռքբերման վաղեմության ժամկետի հաշվարկման համար հայցային վաղեմության ժամկետին նշանակություն չի տալիս, որը, մեր կարծիքով, հարցի լուծման ավելի ճիշտ տարբերակ է: Իրողությունն այն է, որ վիճակագիտն հայցը հարուցվում է ուրիշի ապօրինի տիրապետությունից գույքը հետ ստանալու նպատակով, և դրա ներկայացնելու համար սահմանված ժամկետը՝ ո՛չ տիրապետման սկիզբը, ո՛չ էլ տիրապետման տևողությունը, հաշվարկելիս նշանակություն չպետք է ունենա: Մեր կարծիքով, եթե անձը մինչև սահմանված հայցային վաղեմության ժամկետը լրանալը չի դիմում դատարան իր գույքը հետ պահանջելու համար, իսկ բարեխիղճ տիրապետողն էլ բոլոր պայմանների պահպանմամբ տիրապետում է գույքը, ապա այն ժամկետը, որի ընթացքում սեփականատերը կարող էր գույքը հետ պահանջել, բայց չի պահանջել, պետք է հաշվվի ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի առաջացման համար նախատեսված ժամանակահատվածի մեջ: Բանն այն է, որ սեփականատիրոջ կողմից վիճակագիտի իրավունքից օգտվելու դեպքում դժվար թե ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր ճանաչելու անհրաժեշտություն առաջանա: Այդ հայցի քննարկման արդյունքում կամ գույքը կվերադարձվի սեփականատիրոջը, կամ կճանաչվի ձեռք բերողի սեփականության իրավունքը: Բացի դրանից, ՀՀ քաղ. օր.-ը նախատեսում է երեք տարվա հայցային վաղեմության ընդհանուր ժամկետ, և այդ ժամկետը բաց թողնելուց հետո սեփականատերը, որպես կանոն, գույքը ձեռք բերողից պահանջել չի կարող: Վերջապես՝ ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ ձեռքբերման վաղեմությունը դիտվում է որպես սեփականու-

<sup>9</sup> Сեն Масевич М. Г., *Узл. வழி.*, էջ 181:

թյան առաջացման հիմք և, ի տարբերություն այլ երկրների (օրինակ՝ Գերմանիայի), որևէ կապ չունի հայցային վաղեմության հետ, և եթե ձեռքբերման ժամկետը հաշվարկենք հայցային վաղեմության ժամկետը լրանալուց հետո, ապա ձեռքբերման վաղեմությունը կդառնա տասներեք տարի: Հետևաբար, ավելի ճիշտ է ձեռքբերման վաղեմության ժամկետի սկիզբը ոչ թե հայցային վաղեմության ավարտից, այլ անշարժ գույքին տիրանալու պահից հաշվարկելը: Հակառակ պարագայում կստացվի, որ օրենքը անհարկի պաշտպանում է անարժան սեփականատիրոջը, և երեք տարով ավելացնում է իր իսկ կողմից սահմանված տասը տարվա ժամկետը:

Ինչպես նշեցինք, Քաղ. օր. 187 հոդվածը ձեռքբերման վաղեմության կիրառման համար սահմանել է տասը տարի ժամկետ: Մեր կարծիքով, հայցային վաղեմության եռամյա ընդհանուր ժամկետի առկայության պայմաններում ձեռքբերման վաղեմության նման երկարատև ժամկետի սահմանումը արդարացված չէ: *Քաղաքացիական շրջանառության կայունության ապահովման տեսանկյունից առավել ճիշտ կլիներ սահմանել ձեռքբերման վաղեմության ավելի կարճատև ժամկետ, օրինակ՝ հինգ տարի:*

**2. Բարեխղճություն:** Տեսաբանների մեծ մասը, ըստ էության նույնացնելով «ձեռքբերման վաղեմության» և «բարեխիղճ ձեռք բերողից գույքը պահանջելու» ինստիտուտների համար կիրառվող «բարեխղճությունները», տիրապետողի բարեվարքությունը տիրապետման ընթացքում ցուցաբերած նրա վարքագիծը չի արժևորում և գտնում է, որ բարեխղճության հասկացությունները ՌԴ քաղ. օր. 234 և 302 հոդվածներում (ՀՀ քաղ. օր. 187, 275 հհ.) համընկնում են<sup>10</sup>: Ընդ որում, ուշագրավ է փաստը, որ իրավագետները քննարկում են այն հարցը, թե ա՞րդյոք բավարար է, բարեխղճությունը միայն տիրապետման սկզբում, թե այն պետք է ուղեկցի նաև տիրապետման ողջ ժամկետում<sup>11</sup>: Մասնավորապես Դ. Ի. Մեյերը նշում է. «Եթե ուրիշի գույքի բարեխիղճ տիրապետողը տեղեկացված է սեփականատիրոջ կողմից իրեն ներկայացված հայցի մասին, ապա նա այդ պահից չի կորցնում բարեխղճությունը, չնայած պատասխանատվության առումով հայտնվում է այնպիսի դրության մեջ, որը նման է անբարեխիղճ տիրապետողի իրավական դրությանը»<sup>12</sup>: Համանման դիրքորոշում ունի նաև Կ. Ի. Սկլովսկին, որը գտնում է, որ բարեխիղճ տիրապետողի դեմ հայց հարուցվելու դեպքում տիրապետման բարեխղճությունը պահպանվում է<sup>13</sup>:

Նման մոտեցումը մեզ համար ընդունելի չէ: ՀՀ քաղ. օր.-ում «բարեխղճություն» եզրույթը՝ որպես գնահատողական կատեգորիա, օգտագործվում է առնվազն երկու իմաստով: Մի դեպքում (Քաղ. օր. 48, 275, 293 և այլ հոդվածներ) այն օգտագործվում է որպես մեղքի բացակայության ցուցանիշ (չգիտեր և չէր կարող իմանալ՝ հ. 275), երկրորդ դեպքում (Քաղ. օր. 174, 187 և այլ հոդվածներ)՝ որպես օգտագործողի, տիրապետողի բարեվարքությունը բնութագրող չափանիշ, քանի որ ձեռնամուխ լինելով անշարժ գույքը տիրապետելուն, օգտագործելուն և ըստ էության իրենը

<sup>10</sup> Տե՛ս Масевич М. Г., նշվ. աշխ., էջ 187:

<sup>11</sup> Տե՛ս Бабаев А. Б. Система вещных прав. М., 2006, Склоковский К. И. Собственность в гражданском праве. М., 2002 և այլն:

<sup>12</sup> Мейер Д. И. Русское гражданское право. Ч. 1. М., 1908, с. 268.

<sup>13</sup> Տե՛ս Склоковский К. И., նշվ. աշխ., էջ 262:



դարձնելուն՝ անձն ի սկզբանե գիտի, որ այդ գույքը գրանցված է այլ անձի (սեփականատիրոջ) անվամբ, և դրա՝ Քաղ. օր. 275 հոդվածի իմաստով՝ «բարեխիղճ ձեռք բերելու» մասին խոսք լինել չի կարող:

Ընդ որում, եթե մեղքի բացակայության հիմք է ծառայում միայն ձեռքբերման (տիրանալու) պահին ցուցաբերված սուբյեկտիվ վերաբերմունքը, ապա տիրապետման (օգտագործման) դեպքում օրենքից ուղղակի բխում է, որ բարեխիղճությունը պետք է դրսևորվի տիրապետության (օգտագործման) ողջ ժամանակահատվածի ընթացքում, քանի որ 174, 187 հոդվածներում խոսվում է ոչ թե գույքին տիրանալու, այլ գույքը (որոշակի ժամկետի ընթացքում) օգտագործելու և տիրապետության բարեխիղճության մասին:

Քաղ. օր. 187 և 275 հոդվածների համեմատությունը ցույց է տալիս, որ բարեխիղճ ձեռք բերողից գույքը հետ պահանջելիս (275 հոդվ.) խոսքը պարտավորական հարաբերության սուբյեկտի չիմացության, նրա անմեղության մասին է, իսկ ձեռքբերման վաղեմության դեպքում (187 հոդվ.)՝ իրային հարաբերության սուբյեկտի բարեվարքության, սուբյեկտի կողմից բարեխիղճության պահանջների պահպանության մասին<sup>14</sup>: Այս դեպքում բարեխիղճությունը ենթադրում է տիրապետողի կողմից տիրապետման ողջ ընթացքում իրավահարաբերության բնույթից բխող պարտականությունների ազնվորեն, ջանադրաբար, ճշգրիտ և փութեռանդ կատարում: Վաղեմությամբ տիրապետողից պահանջվում է բարեխիղճություն ցուցաբերել վաղեմության ողջ ժամկետի ընթացքում, և նրա իրավական կեցությունը, կախված բարեխիղճության ցուցաբերման աստիճանից, տիրապետության ողջ ընթացքում կարող է փոփոխվել:

Այս դեպքում մենք գործ ունենք տիրապետողի կողմից բարեվարքության կանոնների պահպանմամբ իրականացվող վարքագծի հետ, վարքագիծ, որը պետք է դրսևորվի տիրապետողի բազմաթիվ և բազմապիսի գործողություններով, արարքներով, գործողությունների կատարումից ձեռնպահ մնալով: Մենք համաձայն ենք Գ. Ն. Էյրիյանի այն կարծիքի հետ, որ բարեխիղճ տիրապետությունը հենվում է ոչ թե այն բանի վրա, որ գույքի տիրապետողը չգիտի իր մոտ սեփականության իրավունքի բացակայության մասին, այլ այն բանի վրա, որ նա բարեխիղճորեն ենթադրում է, որ գույքի սեփականատերը կորցրել է հետաքրքրությունը իր սեփականության նկատմամբ և նրանից փաստորեն հրաժարվել է<sup>15</sup>:

Ձեռքբերման վաղեմության դեպքում բարեխիղճությունը փաստացի տիրապետողի պատշաճ վարքագծի չափանիշ է, իրավունքների իրականացման և պարտականությունների կատարման ցուցանիշ, *տևական վարքի դրսևորման սկզբունք*, որը փաստացի տիրապետողին իրավունք է տալիս ունենալու սեփականատեր դառնալու հավակնություններ: Տվյալ պարագայում բարեխիղճությունը՝ որպես բարեվարքության ապացուցման ցուցանիշ, ներառում է՝

1. իրավունքի չարաշահման բացառում,

<sup>14</sup> Բարեվարքության մասին տե՛ս **Տ. Կ. Բարսեղյան**, Բարեվարքության կանոնների դերը քաղաքացիական հարաբերությունների կարգավորման գործում, «Գիտաժողովի նյութերի ժողովածու», Եր., 2008, էջ 5-18:

<sup>15</sup> Գ. Ն. Էյրիյանի կարծիքը տե՛ս «Актуальные проблемы гражданского права». М., 2012, էջ 74:

2. մոլորեցնելու և խաբեության բացակայություն,
3. սեփական իրավունքների իրականացման նկատմամբ հոգածություն ցուցաբերելու ճշտապահություն,
4. պարտականությունների պարտաճանաչ կատարում:

Այս ինստիտուտը, որի նպատակն է փաստացի տիրապետությունը վերածել սեփականության, ծագել է հասարակական կյանքի զուտ գործնական պահանջմունքների հիման վրա, և այդ պահանջմունքների բավարարման ու ապահովման մեջ է ձեռքբերման վաղեմության իրավաչափության իրավական արդարացումը<sup>16</sup>: Այդ պատճառով էլ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր դառնալու համար բավարար է երկարատև, անընդմեջ և իրավաչափ տիրապետություն՝ իրավաչափ պասիվ վարքագիծ, որը ձեռքբերման վաղեմության ժամկետն անցնելուց հետո «տիրապետությունը կդարձնի իրավունք»<sup>17</sup>:

Քաղ. օր. 187 հոդվածը թույլ է տալիս սեփականատեր դառնալ նաև անբարեխիղճ ձեռք բերողին, եթե նա իրականացնում է բարեխիղճ տիրապետություն<sup>18</sup>: Այդ հարցում մենք համաձայն ենք Ե. Ա. Սուխանովի այն եզրակացության հետ, որ ձեռքբերման վաղեմության դեպքում փաստացի տիրապետողին բարեխիղճ ճանաչելու համար բավարար է, որ նա գույքը հանցավոր եղանակով կամ իրավակարգի և բարոյականության հիմքերին ակնհայտ հակասող ճանապարհով ձեռք բերած չլինի<sup>19</sup>: Այլ խոսքով՝ անհրաժեշտ է, որ տիրապետողը գույքը ձեռք բերելիս թույլ չտա հակասորինական գործողություններ, չկիրառի բռնություն կամ չկատարի այնպիսի գործողություններ, որոնք ուղղված են նախկին սեփականատիրոջը վնաս պատճառելուն: Տիրապետողի կողմից գույքի ձեռքբերման գրեթե այդպիսի մոտեցում է պահանջում ՀՀ Վճռաբեկ դատարանը՝ գտնելով, որ գույքը անձի փաստացի տիրապետմանը պետք է անցնի առանց որևէ բռնության գործադրման: Տիրապետողը պետք է ունենա այն համոզմունքը, որ գույքը ձեռք է բերում օրինական հիմքով: Տիրապետումը պետք է հիմնված լինի այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող է տալ բավարար հիմք ենթադրելու, որ այդ գույքը տիրապետելու է որպես սեփականություն<sup>20</sup>:

Գործող օրենսդրության ընդհանուր ճանաչում գտած մեկնաբանության համաձայն՝ ձեռքբերման վաղեմությունը կիրառելի չէ այն դեպքերում, երբ տիրապետողը խախտել է տիրագուրկ գույքը (ին կարծիքով, ցանկացած գույք) սեփականության իրավունքով ձեռք բերելու կարգը<sup>21</sup>:

**3. Անընդմեջ տիրապետություն:** Ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր դառնալու հաջորդ պայմանը տիրապետման անընդմե-

<sup>16</sup> Տե՛ս «Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации части первой (постатейный)», էջ 289:

<sup>17</sup> Տե՛ս **Масевич М. Г.**, նշվ. աշխ., էջ 189: Հարկ է նկատել, որ Ֆրանսիայի քաղաքացիական օրենսգրքի 2229 հոդվածը որպես ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ծագման պայման պահանջում է, որ տիրապետությունը լինի «հանգիստ»:

<sup>18</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>19</sup> Տե՛ս «Гражданское право». Учебник. Том 1. М., 2002, էջ 427:

<sup>20</sup> Տե՛ս «ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի, հունվար - դեկտեմբեր, 2007», հ. 2, եր., 2008, էջ 501-506:

<sup>21</sup> Տե՛ս «Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации части первой (постатейный)», էջ 289:

ջութիւնը՝ **անընդհատութիւնը** է: Անընդմեջ տիրապետութիւնը նշանակում է, որ ձեռքբերման վաղեմության ժամկետը տասը տարվա ընթացքում չպետք է ընդհատվի ո՛չ իրավաբանորեն, ո՛չ էլ փաստացի:

ՀՀ քաղ. օր.-ը ձեռքբերման վաղեմության ժամկետի ընդհատման առանձնահատուկ հիմքեր չի նախատեսում: Հետևաբար, տիրապետութիւնը կարող է ընդհատվել կա՛մ տիրապետողի կամքով, երբ նա հրաժարվում է գույքի հետագա տիրապետումից, կա՛մ գույքը վերադարձնելուն ուղղված՝ սեփականատիրոջ կամ այլ անձանց գործողութիւններով՝ այն նույն հիմքերով, ինչ հիմքերով որ ընդհատվում է հայցային վաղեմութիւնը: Այսինքն՝ սահմանված կարգով տիրապետողի դեմ սեփականատիրոջ կամ տիրապետութիւնից զրկված օրինական տիրապետողի հայցի հարուցմամբ կամ տիրապետողի կամքով կամ ձեռք բերողի կողմից այնպիսի գործողութիւններ կատարելով, որոնք վկայում են նրա կողմից այդ գույքի նկատմամբ այլ անձի իրավունքները ճանաչելու մասին<sup>22</sup> (օրինակ՝ բնակարանի վարձը կամ կոնուսալ ծախսերը սեփականատիրոջ անվամբ վճարելը):

Ինչպես նշում է Ա. Բ. Բաբաևը, եթե որևէ մեկը իրը վերադարձնելու պահանջ չի ներկայացնում, ապա համարվում է, որ ձեռքբերման վաղեմութիւնը չի ընդհատվել<sup>23</sup>: Մենք այն հեղինակների տեսակետին ենք, որոնք գտնում են, որ փաստացի տիրապետողի կողմից գույքը ուրիշի օգտագործմանը հանձնելը, ինչպես նաև տիրապետման իրավունքը ժամանակավորապես այլ անձի վերապահելը (օրինակ՝ պահատվութիւն) տիրապետման անընդմեջութիւնը չեն վերացնում, եթե օգտագործողը, (տիրապետողը) գույքն իրեն հանձնողին ճանաչում է ինքնուրույն և օրինական տիրապետող<sup>24</sup>:

Մեր կարծիքով, այս հանգամանքը կարիք ունի օրենսդրական ձևակերպման, ուստի առաջարկում ենք Քաղ. օր. 187 հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ դրույթով. «Փաստացի տիրապետողի կողմից գույքը որպես իր սեփականը այլ անձի ժամանակավոր օգտագործմանը կամ տիրապետմանը հանձնելը տիրապետման անընդհատության վրա չի ազդում»:

Մեր կարծիքով, կարելի է հայրենական օրենսդրութիւնը ներմուծել նաև արտասահմանյան որոշ երկրների օրենսդրությամբ նախատեսված այն կանոնը, համաձայն որի՝ *ձեռքբերման վաղեմութիւնը ընդհատված չի համարվում, եթե ձեռքբերման վաղեմության ուժով տիրապետողը կարճ ժամկետի ընթացքում (մինչև մեկ տարվա ընթացքում) կվերականգնի իր տիրապետութիւնը, այսինքն՝ փաստացի կվերադարձնի իրը կամ գույքը վերադարձնելու մասին հայց կհարուցի*<sup>25</sup>:

**4. Բացահայտութիւն:** Տիրապետության բացահայտության պահանջ ներկայացվում է, որպեսզի ապահովվեն տիրապետողի և այդ գույքի նկատմամբ իրավունքներ ունեցող այլ անձանց շահերի հավասարակշռութիւնը, և սեփականատիրոջ ու այլ շահագրգիռ անձանց համար ապահովվի գույքը գտնելու և պահանջելու հնարավորութիւն: Այդ պայմանը առանձնակի նշանակութիւն ունի հատկապես ձեռքբերման վաղեմությամբ

<sup>22</sup> Տե՛ս Масевич М. Г., նշվ.աշխ., էջ 182:

<sup>23</sup> Տե՛ս Бабаев А. Б. նշվ.աշխ., էջ 219:

<sup>24</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>25</sup> Տե՛ս «Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации части первой (постатейный)», էջ 289:

այնպիսի իրերի սեփականության իրավունքի հարցերը լուծելիս, որոնք հնարավոր է թաքցնել: Այս հատկանիշի առկայության համար, ըստ որոշ իրավագետների, բավարար է, որ փաստացի տիրապետողը չթաքցնի այն, որպեսզի երրորդ անձանց մոտ առկա լինի գույքը տեսնելու հնարավորություն<sup>26</sup>: Այդ պատճառով իրավագետները բացահայտ են համարում այն տիրապետությունը, որն իրականացվում է ակնհայտորեն, առանց քողարկելու հատկապես այն անձանցից, ովքեր կարող են այդ տիրապետությունը վիճարկել: Նրանք գտնում են, որ փաստացի տիրապետողը գույքը չպետք է տիրապետի երրորդ անձանցից գաղտնի եղանակով<sup>27</sup>:

Մեր կարծիքով, բացահայտության նման ըմբռնումը կիրառելի է այն դեպքերում, երբ խոսքը շարժական գույքի մասին է: Ինչ վերաբերում է անշարժ գույքին, ապա բացահայտության նման ըմբռնումը կիրառելի չէ: Անշարժ գույքի պարագայում թաքցնելու մասին խոսք լինել չի կարող, քանի որ անշարժ գույք են համարվում այնպիսի օբյեկտներ, որոնք թաքցնել հնարավոր չէ: Առավել իրատեսական է տվյալ դեպքում տիրապետման փաստը թաքցնելը, որպեսզի այն հայտնի չդառնա սեփականատիրոջը: Այդ պատճառով մեզ թվում է, որ անշարժ գույքի տիրապետման բացահայտությունը պետք է դրսևորվի այդ գույքի կառավարման, օգտագործման, պահպանության, նրա նկատմամբ ցուցաբերվող հոգածության բացահայտության միջոցով: Տիրապետման բացահայտության ցուցանիշներ պետք է համարվեն գույքի այնպիսի տիրապետումը, օգտագործումը, նրա պահպանության այնպիսի եղանակների ընտրությունը, որոնք երրորդ անձանց ցույց կտան սեփականատիրոջ փոփոխությունը: Ձեռքբերման վաղեմությամբ փաստացի տիրապետողը երրորդ անձանց հետ փոխհարաբերություններում ոչ միայն խոսքով, այլև իր վարքագծով պետք է ներկայանա որպես սեփականատեր: Օրինակ, եթե օբյեկտը բնակելի տուն է, ապա փաստացի տիրապետողը պետք է ապրի այդ տանը, իր անունով վճարի հարկերը, սպասարկման և կոմունալ ծախսերը, ժամանակին կատարի վերանորոգում և այլն, հարևաններին և հետաքրքրվողներին ներկայանա որպես սեփականատեր կամ սեփականատեր դառնալու հավակնություններ ունեցող տիրապետող:

**5. Գույքը որպես սեփական տիրապետելը:** Այս հասկացության պարզաբանումը քաղաքացիական օրենսդրությունը չի տալիս: Լեգալ հասկացության բացակայության պարագայում տարբեր գիտնականներ տարբեր կերպ են մեկնաբանում ձեռքբերման վաղեմության այս պայմանը: Այսպես՝ Յու. Կ. Տոլստոյը գտնում է, որ ձեռքբերման վաղեմությամբ տիրապետողը գույքը պետք է տիրապետի որպես իր սեփականը կամ, որը նույնն է, որպես սեփականություն՝ առանց մտածելու, որ այդ գույքը սեփականատեր ունի<sup>28</sup>: Յու. Կ. Տոլստոյի մեկնաբանությունը, ինչպես նկատում է Ա. Վ. Լիսաչենկոն, «չափազանց ընդհանուր է, աչքի է ընկնում ավելորդ սուբյեկտիվիզմով, և ինքը ևս վերծանման կարիք է զգում»<sup>29</sup>: Ն. Վ. Կորոլյովան և Լ. Յու. Միխեևան գտնում են, որ «գույքը ինչպես սեփականը տիրապետել»

<sup>26</sup> Տե՛ս «Гражданское право». Часть 1. М., 1997, էջ 344:

<sup>27</sup> Տե՛ս «ՀՀ Վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի, հունվար - դեկտեմբեր, 2007», հ. 2, էջ 501-506:

<sup>28</sup> Տե՛ս «Гражданское право». Учебник для вузов. Часть 1. М., 1996, էջ 344:

<sup>29</sup> **Лисиченко А. В.** Приобретательная давность в российском гражданском праве // "Цивилистические записки: Межвузовский сборник научных трудов". М., 2001, с. 288.

հասկացությունը, կարող է արտահայտել միայն մի բան՝ տիրապետողը գույքին վերաբերվում է սեփականության իրավունքով իրեն պատկանող գույքից ոչ վատ: Տիրապետողը նրա մասին հոգ է տանում այնպիսի եղանակով, ինչպես դա կաներ ցանկացած փութաջան<sup>30</sup> սեփականատեր:

Մեր կարծիքով, ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր դառնալու համար անհրաժեշտ է, որ գույքը որպես սեփական տիրապետողը տիրապետությունն իրականացնի իր անունից, գույքի նկատմամբ դրսևորի սեփականատիրոջ իշխանություն իրականացնելու ցանկություն. դրսևորի այնպիսի կամք, որից կերևա, որ տիրապետողն իրեն համարում է այդ գույքի միակ սեփականատերը և տիրապետումն իրականացնում է ինքնուրույն՝ սեփականատիրոջը բնորոշ առանձնահատուկ հոգածությամբ: Ձեռքբերման վաղեմության ուժով սեփականատեր կարող է ճանաչվել միայն ինքնուրույն տիրապետություն իրականացնող անձը: Տիրապետման ցանկացած իրավական տիտղոսի առկայություն բացառում է ձեռքբերման վաղեմությունը: Տիրապետողը կարող է գույքը որպես սեփականը տիրապետող համարվել, եթե չի ապացուցվի, որ տիրապետում է ուրիշի փոխարեն կամ ուրիշի հետ կնքած պայմանագրով: Այն անձը, որը տիրապետում է այլ անձի անունից կամ այլ անձի հետ կնքած պայմանագրով, ձեռքբերման վաղեմությունից օգտվել չի կարող:

Տիրապետողը պետք է ունենա այն համոզմունքը, որ տիրապետման հետ և նրա միջոցով կիրագործի գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու իր մտադրությունը: Ասվածից հետևում է, որ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք կարող է ձեռք բերել միայն ինքնուրույն տիրապետողը, այն տիրապետողը, որը գույքի նկատմամբ իրականացնում է սեփականատիրոջ իշխանություն: Բացի դրանից, ձեռք բերողը գույքը պետք է տիրապետի այնպես, որ երրորդ անձանց հավատ ներշնչի իր սեփականատեր լինելու հանգամանքը: Դա նշանակում է, որ փաստացի տիրապետողը սեփական շահերից ելնելով, պետք է գույքի դերին և նշանակությանը համապատասխան իրականացնի գույքի կառավարումն ու օգտագործումը, հոգ տանի դրա պահպանության մասին, գույքի նկատմամբ ցուցաբերի այնպիսի հոգածություն, ինչպիսին ցուցաբերում է սեփական ունեցվածքի նկատմամբ: Առանց նման վերաբերմունքի կամ այնպիսի գիտակցության, որ իրը պատկանում է այլ անձի, Քաղ. օր. 187 հոդվածի կարգով սեփականության իրավունք ձեռք բերել հնարավոր չէ: Հարկ է ընդգծել, որ ձեռքբերման վաղեմության դեպքում գործում է տիրապետության ինքնուրույնության կանխավարկածը: Այսինքն՝ տիրապետողը ճանաչում է գույքը որպես իր սեփականը, քանի դեռ ապացուցված չէ, որ նա այդ գույքը տիրապետում է ուրիշ անձի համար կամ վերջինիս հետ կնքված պայմանագրով<sup>31</sup>: Ընդ որում, ձեռքբերման վաղեմության հիմքով ինքնուրույն տիրապետողի սեփականության իրավունքը ճանաչելու համար դատական պրակտիկայում գույքի ձեռքբերման հիմքի օրինականությանն անդրադառնալը անհրաժեշտ չի համարվում: Մասնավորա-

<sup>30</sup> Стѹ Ярочкина Т. Г. Владение имуществом как своим собственным как условие приобретательной давности по российскому гражданскому праву. М., 2006, էջ 60:

<sup>31</sup> Стѹ "Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации (учебно-практический)". М., 2009, էջ 288:

պես՝ 23.05.2008 թ. քննված թիվ 3-342/4Դ քաղ. գործով Վճռաբեկ դատարանը գտել է, որ Հ. Այվազյանը, վեճի առարկա անշարժ գույքը անօրինական՝ առռչինչ գործարքով, վաճառելով Ս. Գևորգյանին, հրաժարվել է իրեն պատկանող վեճի առարկա գույքի սեփականության իրավունքից: Հետևաբար, Լ. Աբրահամյանի կողմից վեճի առարկա անշարժ գույքի տիրապետումը հիմնված է այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող էր տալ բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ նա այդ գույքն իր տիրապետմանն անցնելու պահից տիրապետել է որպես սեփական<sup>32</sup>:

Քանի որ Քաղ. օր. 187 հոդվածի գործողությունը տարածվում է միայն ուրիշի գույքի փաստացի անտիտոլոս տիրապետության վրա, ուստի անձը չի կարող դառնալ այն գույքի սեփականատեր, որը երկար ժամանակ տիրապետում և օգտագործում է վարձակալության, ռենտայի, պահատվության և այլ պայմանագրերի հիման վրա<sup>33</sup>, կամ այն գույքի նկատմամբ, որը անհատույց և անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված է քաղաքացուն կամ ամրացված է իրավաբանական անձին<sup>34</sup>: Մասնավորապես՝ ՀՀ Վճռաբեկ դատարանը Ա. և Վ. Խանադյաններն ընդդեմ Վ. Ավետիսյանի գործով գտել է, որ գործով հիմնավորված չէ, որ այդ գույքի տիրապետումը հիմնված է այնպիսի փաստի վրա, որը տիրապետողին կարող էր տալ բավարար հիմքեր՝ ենթադրելու, որ նա այդ գույքը իր տիրապետմանն անցնելու պահից տիրապետել է որպես սեփականություն<sup>35</sup>:

Հարցի լուծման նկատմամբ 21.11.2006 թ. ՍԴՈ-667 որոշմամբ նման մոտեցում է ցուցաբերել նաև ՀՀ Սահմանադրական դատարանը: Ըստ այդ որոշման (6-րդ կետ)՝ ձեռքբերման վաղեմության հիմքով անշարժ գույքի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու համար պահանջվում է այդ գույքի՝ որպես սեփական ունեցվածքի բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ, տևական տիրապետում: Այս նախապայմանները բացառում են ուրիշի գույքը որպես սեփականություն ձեռք բերելու հնարավորությունը, եթե տիրապետողը այդ գույքը պահում է իր իշխանության ներքո վարձակալության, պահատվության կամ այլ պայմանագրերի հիման վրա՝ թեկուզև բարեխիղճ, բացահայտ, անընդմեջ և երկարատև, սակայն իր պայմանագրային պարտավորությունների գիտակցմամբ այն համարելով ուրիշի գույք և այն տիրապետելով ոչ որպես սեփական գույք<sup>36</sup>:

Նման մոտեցումը սկզբունքորեն ճիշտ է, բայց միշտ չէ, որ կիրառելի է: Մասնավորապես, եթե ժամկետային պայմանագրով ուրիշի գույքը տիրապետողը պայմանագրի ժամկետը լրանալուց հետո (եթե ըստ օրենքի պայմանագիրը չի համարվում վերականգնված անորոշ ժամկետով) անկախ սեփականատիրոջ կամքից, նրա լուռ թողտվության կամ անտարբերության հետևանքով, շարունակում է գույքն օգտագործել իբրև իր սեփակա-

<sup>32</sup> Տե՛ս Քաղ. գործ թիվ 3- 342/4Դ: «Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի (հունվար-դեկտեմբեր, 2008)», Եր., 2010, էջ 124:

<sup>33</sup> Տե՛ս «Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации (учебно-практический)», էջ 619:

<sup>34</sup> Տե՛ս «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը, ՀՀՊՏ 2001/37(169), 03.12.2001:

<sup>35</sup> Տե՛ս Քաղ. գործ թիվ 3-47/4Դ: «Հայաստանի Հանրապետության Վճռաբեկ դատարանի որոշումների ընտրանի (հունվար- դեկտեմբեր, 2008)», էջ 10:

<sup>36</sup> Տե՛ս «Սահմանադրական դատարան, Տեղեկագիր», 2007, թիվ 2, էջ 57:

նը, սեփականատերն էլ նրանից չի պահանջում գույքը վերադարձնել, օրենքով նախատեսված ժամկետները (հայցային վաղեմության, ձեռքբերման վաղեմության) անցնելուց հետո կարող է պահանջել, որ այդ գույքի նկատմամբ ճանաչվի իր սեփականության իրավունքը: Նման մոտեցում մասնավորապես ցուցաբերում է Ուկրաինայի քաղ. օր. 344 հոդվածը: Այդ հոդվածի 3-րդ կետի համաձայն, եթե անձը գույքը սկսել է տիրապետել սեփականատիրոջ հետ կնքված պայմանագրի հիման վրա, և պայմանագրի ժամկետի ավարտից հետո գույքի սեփականատերն այն վերադարձնելու պահանջ չի ներկայացրել, ապա անձն այդ գույքի նկատմամբ ձեռք է բերում սեփականության իրավունք ձեռքբերման վաղեմության ուժով՝ անշարժ գույքի դեպքում հայցային վաղեմության ավարտից 15, իսկ շարժական գույքի դեպքում՝ 5 տարի անց: Մեր կարծիքով, նման կարգ անհրաժեշտ է նախատեսել նաև ՀՀ քաղաքացիական օրենսգրքով:

Ձեռքբերման վաղեմության հիմքով սեփականատեր դառնալու հնարավորություն ՀՀ քաղ. օր. 187 հոդվածը ուղղակիորեն նախատեսում է քաղաքացիների և իրավաբանական անձանց համար՝ անտեսելով, որ այդ հնարավորությունից կարող են օգտվել նաև պետությունը և համայնքները: Իհարկե, հոդվածում այդ սուբյեկտների մասին հիշատակության բացակայությունից չի հետևում, որ պետությունը և համայնքները նման հնարավորությունից օգտվել չեն կարող: Քաղ. օր. 187 հոդվածի ձևակերպումը հիմք է տալիս եզրակացնելու, որ ձեռքբերման վաղեմությունը կարող է օգտագործվել ցանկացած սուբյեկտի, այդ թվում նաև պետության և համայնքի կողմից, այլ սուբյեկտներին պատկանող անշարժ գույքի սեփականատեր դառնալու<sup>37</sup>, ինչպես նաև պետությանը կամ համայնքին պատկանող անշարժ գույքի նկատմամբ այլ սուբյեկտների սեփականության իրավունքի առաջացման հիմք դառնալ:

Մեր կարծիքով, հոդվածում պետության և համայնքների մասին չհիշատակելը տվյալ սուբյեկտների (իրենց փաստացի տիրապետության ներքո գտնվող օբյեկտների նկատմամբ) ձեռքբերման վաղեմության ուժով սեփականությունը ճանաչելու արգելք չէ, քանի որ «Հայաստանի Հանրապետության և համայնքների նկատմամբ քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում կիրառվում են իրավաբանական անձանց մասնակցությունը սահմանող նորմերը, եթե այլ բան չի բխում օրենքից կամ տվյալ սուբյեկտների առանձնահատկություններից» (Քաղ. օր., հոդվ. 128): Դրա հետ միասին՝ գտնում ենք, որ նման *բացթողումն արդարացված չէ* և կարող է տարաբնույթ մեկնաբանությունների տեղիք տալ հատկապես այն դեպքերում, երբ հարցը կվերաբերի տիրազուրկ անշարժ գույքին: Բանն այն է, որ մեր հանրապետությունում տիրազուրկ գույքի իրավական կարգավիճակը օրենսդրական հստակ և ավարտուն կարգավորում դեռևս չի ստացել: Մասնավորապես՝ տիրազուրկ անշարժ գույքի հաշվառման խնդիրը կարգավորող ՀՀ կառավարության «Ինքնական կառուցված շենքերը, շինությունները, ինքնական

<sup>37</sup> Տե՛ս Արփինե Հովհաննիսյան, Տիրապետման վաղեմության ուժով սեփականության իրավունքի ձեռքբերման առանձնահատկությունները, «Արդարադատություն», № 2 (2), հունիս, 2009, էջ 36:

զբաղեցված հողամասերը, տիրագուրկ (լքված) անշարժ գույքը հաշվառելու մասին» 2000 թվականի հուլիսի 27-ի թիվ 422 որոշման 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից հաշվառման ենթակա է նաև տիրագուրկ (լքված), սեփականատեր չունեցող կամ այն անշարժ գույքը, որի սեփականատերն անհայտ է կամ հրաժարվել է դրա նկատմամբ սեփականության իրավունքից: Նույն որոշման 3-րդ մասի 19-րդ կետը անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանմանը պարտավորեցնում է՝ տիրագուրկ (լքված) անշարժ գույքի մասին հաշվառման համապատասխան մատյանում գրանցելուց հետո՝ 5-օրյա ժամկետում, հայտնել տվյալ տարածքի համայնքի ղեկավարին, իսկ համայնքի վարչական սահմաններից դուրս գտնվող հողերի վրա կառուցված շենքերի, շինությունների մասով՝ մարզպետին: Տիրագուրկ անշարժ գույքին վերաբերող կարգավորումներն ըստ էության այսքանով ավարտվում են՝ որևէ սուբյեկտի համար չնախատեսելով հաշվառված գույքը պետական կամ համայնքային սեփականություն դարձնելու համար քայլեր ձեռնարկելու պարտականություն: Բացառություն է թերևս ՀՀ հողային օրենսգրքի 101 հոդվածը, որը նախատեսում է քաղաքացու և իրավաբանական անձի հողամասը համայնքի կամ պետության սեփականություն վերածելու հնարավորություն այն դեպքում, երբ անձը հողամասից կամովին հրաժարվելու մասին դիմում է ներկայացնում:

Նման մոտեցումները սակավահող հանրապետության համար, մեր կարծիքով, ընդունելի համարվել չեն կարող: Անշարժ գույքը, մասնավորապես հողամասը, պետության տարածքի բաղկացուցիչ մասն է<sup>38</sup>, և դրա նկատմամբ իրավունքները պետք է իրականացվեն ազգային զարգացման, պետության ու հասարակության բարգավաճման շահերից ելնելով:

Քաղ. օր. 134 հոդվածից հստակ երևում է, որ եթե անշարժ գույքը հողատարածք չէ, ապա անայսմանորեն կապված է հողատարածքի հետ: Հետևաբար, եթե հողամասի սեփականատեր քաղաքացին կամ իրավաբանական անձը, չհրաժարվելով հողամասից կամ նրա վրա գտնվող այլ անշարժ գույքից, փաստորեն դադարեցրել է տիրապետումը, հողամասը կարող է մնալ տիրագուրկ, անօգտագործելի՝ այդտեղից բխող բոլոր վնասակար հետևանքներով: Նման հետևանքներից խուսափելու և իրավակարգավորման հստակությունն ապահովելու համար անհրաժեշտ է կատարել օրենսդրական համապատասխան փոփոխություններ: Այդ առումով ուսանելի է Ռուսաստանի Դաշնային Հանրապետության մոտեցումը: ՌԴ քաղաքացիական օրենսգրքի 225 հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ «տիրագուրկ անշարժ գույքը հաշվառվում է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում իրականացնող մարմնի կողմից այն տեղական ինքնակառավարման մարմնի հայտարարության հիման վրա, որի տարածքում է գտնվում համապատասխան անշարժ գույքը: Հաշվառման օրվանից մեկ տարի հետո տարածքային սեփականությունը կառավարելու լիազորություն ունեցող մարմնին իրավունք ունի դիմելու դատարան՝ տվյալ գույքի նկատմամբ տարածքային սեփականության ի-

<sup>38</sup> Стн Перетерский И. С., Крылов С. Б. Международное частное право. М., 1959, էջ 88:



րավունքը ճանաչելու պահանջով»: Այսինքն՝ ՌԴ քաղաքացիական օրենսգիրքը նախատեսում է տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ համայնքային սեփականության իրավունքի առաջացման հստակ մեխանիզմ: Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ քաղաքացիաիրավական կարգավորման հստակությունն ապահովելու համար, մեր կարծիքով, անհրաժեշտ է Քաղ. օր. 187 հոդվածում «իրավաբանական անձը» բառից հետո ավելացնել «Հայաստանի Հանրապետությունը և համայնքները» բառերը, ինչպես նաև ավելացնել նոր մաս(կետ), որը մարզպետին և համայնքի ղեկավարին իրավունք կվերապահի դիմելու դատարան՝ տիրազուրկ անշարժ գույքի նկատմամբ պետության կամ համայնքի սեփականության իրավունքը ճանաչելու պահանջով:

Ինչ վերաբերում է պետությանը կամ համայնքին պատկանող հողատարածքը ձեռքբերման վաղեմության ուժով քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից սեփականացնելուն, ապա այս հարցում օրենսդրական խառնաշփոթ է: Քաղ. օր. 187 հոդվածը պետությանը կամ համայնքներին պատկանող անշարժ գույքը այլ սուբյեկտների կողմից ձեռքբերման վաղեմության ուժով ձեռք բերելու համար որևէ բացառություն չի նախատեսում: Մինչդեռ ՀՀ հողային օրենսգիրքը, անտեսելով հարցի քաղաքացիաիրավական կարգավորումը, սահմանել է պետության և համայնքային հողամասերի նկատմամբ սեփականության իրավունքի առաջացման, մեր կարծիքով, ձեռքբերման վաղեմության ինստիտուտի էությունը խեղաթյուրող, ավանդական պատկերացումներին չհամապատասխանող կարգավորում:

Սեփականության իրավունքի ձեռքբերման սկզբնական այդ եղանակը, որը արժևորվում էր դեռևս հին հռոմեական իրավունքում և հայտնի է բոլոր իրավական համակարգերին<sup>39</sup>, ՀՀ հողային օրենսգիրքը դարձրել է ոչ միայն պետության, համայնքների և դատարանի կողմից տրամադրվող իրավունք, այլև նախապատվությամբ **«օգտագործման իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունք»**: Մասնավորապես՝ ՀՀ հողային օրենսգրքի 72 հոդվածի 1 կետը սահմանում է. «Քաղաքացիները և իրավաբանական անձինք պետության և համայնքների այն հողամասերի նկատմամբ, որոնց տիրապետում են առանց իրավական ձևակերպման և որոնցից օգտվում են անընդմեջ ու բացահայտ ավելի քան տասը տարի, ունեն **օգտագործման իրավունքի ձեռքբերման վաղեմության իրավունք**, եթե հողամասերը համապատասխանում են սույն օրենսգրքի 64-րդ հոդվածի պահանջներին»: Մեր կարծիքով, տվյալ դեպքում օրենսդիրը ցանկացել է կանոնակարգել անօրինական հողօգտագործման հարաբերությունները, բայց ընտրել է ոչ ճիշտ տարբերակ: Այդ հարաբերությունները ձեռքբերման վաղեմության հետ որևէ առնչություն չունեն, և կարելի էր հողվածը ձևակերպել հետևյալ կերպ. «Քաղաքացիները և իրավաբանական անձինք պետության և համայնքային այն հողերի նկատմամբ, որոնք օգտագործում են առանց իրավական ձևակերպման և այդ հողամասերից օգտվում են բացահայտ ու անընդմեջ ավելի քան տասը (ճիշտ կլիներ՝ հինգը) տարի, ունեն այդ հողամասի նկատմամբ օգտագործման իրավունք

<sup>39</sup> Տե՛ս Масевич М. Г., ցվ. աշխ., էջ 181, նաև՝ «Комментарий к Гражданскому кодексу Российской Федерации». М., 2009, էջ 287:

քը ձևակերպելու նախապատվության իրավունք, եթե արգելված է այդ հողամասերի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելը, և հողամասը համապատասխանում է սույն օրենսգրքի 64 հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Նման հողամասերն այլ նպատակային նշանակության համար վերցնելու դեպքում օգտագործողներին պետք է հատուցվեն նրանց վնասները կամ տրամադրվեն այլ հողամասեր»:

Սույն օրենսգրքի 72 հոդվածի 2-րդ կետը սահմանում է. «Քաղաքացիները և իրավաբանական անձինք, որոնք ավելի քան տասը տարի անընդմեջ, բարեխիղճ ու բացահայտ, սակայն առանց իրենց իրավունքների ձևակերպման օգտվում են պետության կամ համայնքի հողերից, ունեն այդ հողերից սեփականության իրավունքով հողամասեր ձեռք բերելու նախապատվության իրավունք, եթե արգելված չէ սեփականության իրավունքով տվյալ հողամասերը ձեռք բերելը, կամ եթե դրանք վաճառվում կամ անհատույց փոխանցվում են միևնույն նպատակային նշանակության համար, և եթե հողամասերը համապատասխանում են սույն օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ կետով սահմանված պահանջներին:

Ձեռքբերման վաղեմության իրավունքը տրամադրվում է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների որոշումներով կամ դատական կարգով»:

Եթե անգամ անտեսենք, որ 72 հոդվածի երկու կետերը գրեթե նույն բովանդակությունն ունեն, միևնույնն է, Հողային օրենսգրքի 72 հոդվածի 2-րդ կետը անհրաժեշտ է վերացնել հետևյալ պատճառներով:

Առաջին՝ պետական և տեղական ինքնակառավարման մարմինները, ինչպես նաև դատարանը ձեռքբերման վաղեմություն տրամադրել չեն կարող: Ձեռքբերման վաղեմությունը առանց իրավական ձևակերպման առաջացող փաստացի տիրապետություն է, իրավաբանական փաստ, որը սկզբնական եղանակով, այսինքն՝ անկախ կամ հակառակ սեփականատիրոջ կամքի սեփականություն ձեռք բերելու հիմք է: Հետևաբար, պետությունը կամ համայնքները այդ հիմքով, իրենց անփութության, անտնտեսվարության հետևանքով քաղաքացու կամ իրավաբանական անձի տիրապետությանն անցած հողատարածքի նկատմամբ սեփականության իրավունքը ճանաչելու բարոյական իրավունք չունեն: Նրանց ոչ ոք չէր զրկել և չի զրկում օրենքով սահմանված կարգով այդ հողատարածքը քաղաքացիներին կամ իրավաբանական անձանց հատկացնելու իրավունքից:

Երկրորդ՝ ձեռքբերման վաղեմության ուժով պետությանը կամ համայնքին պատկանող հողամասը քաղաքացիների կամ իրավաբանական անձանց կողմից ձեռք բերելու համար առանձնահատուկ իրավական ռեժիմ սահմանելու անհրաժեշտություն չկա: Հայաստանի Հանրապետությունը և համայնքները քաղաքացիական օրենսդրությամբ և այլ իրավական ակտերով կարգավորվող հարաբերություններում հանդես են գալիս այդ հարաբերությունների մյուս մասնակիցների՝ քաղաքացիների և իրավաբանական անձանց հետ հավասար հիմունքներով (Քաղ. օր. 128 հոդվ.):

Երրորդ՝ ձեռքբերման վաղեմության ուժով սեփականության իրավունք հայցելու պարագայում նախապատվության իրավունքը գործել չի

կարող, քանի որ փաստացի տիրապետողը իրավունք ունի պահանջելու ճանաչել իր սեփականության իրավունքը՝ անկախ այդ հողատարածքը վաճառվելու կամ անհատույց փոխանցվելու հանգամանքից:

Հետևաբար, ՀՀ հողային օրենսգրքի 72 հոդվածի երկրորդ կետի առկայությունը, բացի դատական կամայականությանը օժանդակելուց և բարդություններ առաջացնելուց, այլ նպատակի ծառայել չի կարող: Օրինակ՝ ինչպե՞ս լուծենք համայնքային հողամասի վրա կառուցված տիրազուրկ բնակելի տան սեփականության հարցը, եթե այն տասից ավելի տարիներ բացահայտ, բարեխիղճ, անընդմեջ, որպես իր սեփականը տիրապետում է քաղաքացին: Հողային, թե՞ Քաղաքացիական օրենսգրքի նորմերով: Մեր կարծիքով, միայն Քաղաքացիական օրենսգրքի նորմերով: Մեր խորին համոզմամբ, այն բոլոր դեպքերում, երբ հարցը վերաբերում է մասնավոր հարաբերությունների կարգավորմանը, նախապատվությունը պետք է տրվի քաղաքացիաիրավական կարգավորմանը, իսկ օրենսդիրը պետք է ձեռնպահ մնա մնացած հարցերը իրավունքի այլ ճյուղերով կարգավորելուց:

**Բանալի բառեր** – *ձեռքբերման վաղեմություն, տիրապետողի իրավունքներ, սեփականատիրոջ կարգավիճակ, տիրապետում, տնօրինում, սեփական գույք, բարեխիղճություն*

**ТАРИЕЛ БАРСЕГЯН – Давность приобретения.** – Статья посвящена возникновению права собственности на основании давности приобретения. Излагаются условия, которые необходимы и достаточны для него. Кроме того, затрагиваются проблемы, связанные с продолжительностью и непрерывностью владения, а также с добросовестностью владения и владением имуществом в качестве собственности.

**Ключевые слова:** *давность приобретения, права владельца, статус собственника, владение, распоряжение, собственное имущество, добросовестность*

**TARIEL BARSEGHYAN – Acquisitive prescription** - The issues of origin of property rights based on the ground of acquisitive prescription are discussed in the article presented. The author presents the conditions necessary and sufficient for the origin of property rights based on the ground of acquisitive prescription and stresses attention to the issues on the length, continuity of possession, good faith, as well as the possession of the property as one's own property.

**Key words:** *acquisitive prescription, the rights of the holder, status of the owner, possession, disposition, own property, good faith*

# ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ

## ՍԵՓԱԿԱՆ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՁՆՈՒՄԸ ՄԵՐԺԵԼՈՒ ԵՎ ԵՐԿՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՆՁՆՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

### ՄԵՐԳԵՅ ԱՌԱՔԵԼՅԱՆ, ԱՐԱ ՖԻՂԱՆՅԱՆ

Քրեական պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի համաձայն՝ հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է քրեական օրենքով նախատեսված պատժի կամ քրեաիրավական այլ ներգործության: Ընդ որում, օրենքի առջև հավասարության սկզբունքից բխում է, որ հանցանք կատարած անձինք հավասարապես ենթակա են քրեական պատասխանատվության, այդ թվում՝ անկախ քաղաքացիությունից: Այս առումով պետք է նշել, որ արտահանձնման (էքստրադիցիայի) պարագայում առկա են որոշ առանձնահատկություններ: Մասնավորապես, մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հանցագործության մեջ մեղադրվող անձանց արտահանձնումը մերժելու ամենատարածված հիմնավորումը հենց հայցվող անձի քաղաքացիությունն է՝ պայմանավորված պետությունների կողմից սեփական քաղաքացիներին հանձնելուց հրաժարվելու («հովանավորչության») սկզբունքով:

Վերոհիշյալ սկզբունքի կարևորությունն անչափ մեծ է: Պատահական չէ, որ այն նախատեսված է թե՛ միջազգային տարբեր կոնվենցիաներով և թե՛ շատ երկրների սահմանադրություններով ու ներպետական այլ իրավական ակտերով: Միևնույն ժամանակ, երկրների մոտեցումներն այս հարցի կապակցությամբ տարբեր են: Ընդհանուր առմամբ կարելի է առանձնացնել դրանցից մի քանի հիմնականները՝

- 1) սեփական քաղաքացիների արտահանձնման բացարձակ մերժում,
- 2) սեփական քաղաքացիների արտահանձնում միայն համապատասխան պայմանագրի առկայության դեպքում,
- 3) սեփական քաղաքացիների արտահանձնում փոխադարձության պարագայում,
- 4) սեփական քաղաքացիների արտահանձնում միայն կոնկրետ հանցագործությունների կատարման դեպքում,
- 5) սեփական քաղաքացիների արտահանձնում առանց որևէ նախապայմանի:

Իրավակիրառական պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ սեփական քաղաքացիներին այս կամ այն պայմանով արտահանձնելը հիմնականում բնորոշ է ընդհանուր իրավունքի երկրներին (օրինակ՝ Ամերիկայի Միացյալ Նահանգներին, Ավստրալիային, Կանադային, Մեծ Բրիտանիային և այլն): Այդ պետություններում արտահանձնման հարցերի կապակցությամբ գերակայությունը տրվում է քրեական պատասխանատվության տարածքային սկզբունքին:

Միևնույն ժամանակ մի շարք երկրներում իրավիճակն այլ է. գերակայությունը տրվում է ոչ թե տարածքային, այլ «հովանավորչության» սկզբունքին: Մասնավորապես, Պերմանիայի Դաշնային Հանրապետության Սահմանադրության հոդված 16-ի համաձայն՝ ոչ մի գերմանացի (**և ոչ թե Պերմանիայի քաղաքացի**) չի կարող արտահանձնվել արտասահմանյան որևէ երկրի: Ճապոնիայի օրենսդրությամբ ևս այդ առումով սահմանվում է, որ արտահանձնման ենթակա չեն ոչ միայն Ճապոնիայի քաղաքացիները, այլև էթնիկ ճապոնացիները, քանի որ նրանք Ճապոնիայի քաղաքացիություն ստանալու իրավունք ունեն:

Կարծում ենք, որ տվյալ մոտեցումը միանշանակ կիրառելի է նաև Հայաստանի Հանրապետությունում: Բանն այն է, որ ՀՀ «Քաղաքացիության մասին» օրենքի հոդված 13-ի համաձայն՝ ազգությամբ հայերը Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն կարող են ստանալ պարզեցված կարգով: Ուստի արտահանձնման հարցերի կապակցությամբ «հովանավորչության» սկզբունքը կարելի է տարածել ոչ միայն ՀՀ քաղաքացիների, այլ նաև ազգությամբ հայերի նկատմամբ:

Սրա հետ կապված կարող է կարծիք լինել, որ ազգությամբ հայերը, ովքեր այլ պետության քաղաքացի են, ցանկության դեպքում կարող էին մինչ այդ ստանալ ՀՀ քաղաքացիություն: Ավելին, հնարավոր են նաև դեպքեր, երբ ազգությամբ հայերը, ովքեր ՀՀ քաղաքացիներ չեն, օգտվեն այդ հնարավորությունից և, այլ երկրներում հանցանք կատարելով, փորձեն պատասխարկվել ՀՀ-ում: Այդուհանդերձ, քննարկվող հարցի լուծումը, մեր կարծիքով, չի կարելի կապել նշված հանգամանքների հետ: Բանն այն է, որ, նախ, հնարավոր են դեպքեր, երբ անձը ցանկություն ունեցել է ՀՀ քաղաքացիություն ստանալու, սակայն դեռ չի հասել անձնագիր ստանալու իրավունք տվող տարիքի: Բացի այդ, «հովանավորչությունը» չի նշանակում, որ վերոհիշյալ անձինք ազատվում են քրեական պատասխանատվությունից: Պարզապես նրանք չեն արտահանձնվում այլ պետության և պատասխանատվության են ենթարկվում Հայաստանի Հանրապետությունում: Այդ կապակցությամբ ուղղակի նշում է պարունակում մասնավորապես ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի հոդված 479-ի 9-րդ մասը:

Փաստորեն արտահանձնումը, անկախ դրա հետ կապված հարցերի լուծման մոտեցումների տարբերությունից, հանցավորության դեմ պայքարի ոլորտում պետությունների միջև համագործակցության, քրեական պատասխանատվության անխուսափելիության ապահովման կարևորագույն միջոցներից է, առանց որի հնարավոր չէ պատկերացնել ժամանակակից աշխարհը<sup>1</sup>:

Քննարկվող հիմնախնդիրների կապակցությամբ պետք է նշել նաև, որ եթե նախկինում շատ երկրներ կտրականապես մերժում էին իրենց քաղաքացիների արտահանձնումը, ապա վերջին տարիներին այդ մոտեցումը հետզհետե փոխվում է: Ներկայումս շատ երկրներ ավելի հակված են արտահանձնելու անգամ սեփական քաղաքացիներին՝ միջազգային երկկողմ

<sup>1</sup> Стен Смирнов М. И. Понятие и правовая природа экстрадиции (выдачи) // "Право и политика / Современное право", 2007, № 3, էջ 12:

և բազմակողմ պայմանագրերի հիման վրա: Ավելին, համապատասխան իրավական նորմեր սկսել են նախատեսվել բազմաթիվ պետությունների սահմանադրություններում և օրենսդրական այլ ակտերում: Այսպես օրինակ՝ Լեհաստանի Հանրապետության 1997 թվականին ընդունված Սահմանադրության հոդված 55-ի համաձայն՝ Լեհաստանի քաղաքացիները չեն կարող ենթարկվել արտահանձնման՝ բացառությամբ այն դեպքերի, երբ Լեհաստանի կողմից վավերացված պայմանագրի ուժով համապատասխան հարցում է ստացվել այլ երկրից կամ միջազգային դատական մարմնից:

Հայաստանի Հանրապետությունում ևս իր քաղաքացիներին արտահանձնելը մերժելը նախկինում կրում էր օբլիգատիվ բնույթ և սահմանված էր թե՛ քրեական (հոդված 16) և թե՛ քրեական դատավարության (հոդված 488) օրենսգրքերով: Ընդ որում, ՀՀ նախկին Սահմանադրությամբ այդ հարաբերությունները կարգավորող որևէ դրույթ նախատեսված չէր: Սակայն 2005 թվականի նոյեմբերի 27-ի փոփոխություններով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 30.1-ով սահմանվեց հետևյալը. «Հայաստանի Հանրապետության քաղաքացուն չի կարելի հանձնել օտարերկրյա պետությանը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վավերացրած միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքերի»: Նույն ձևակերպումը սահմանվեց նաև Հայաստանի Հանրապետության «Քաղաքացիության մասին» օրենքի հոդված 5-ում՝ 2011 թվականին կատարված համապատասխան փոփոխությունների և լրացումների շնորհիվ:

Հարկ է նշել նաև, որ ՀՀ քրեական գործող օրենսգրքի հոդված 16-ը փոփոխվել է միայն 2013 թվականի փետրվարի 5-ին: Այսինքն՝ քր. օր.-ը համապատասխանեցվել է ՀՀ Սահմանադրությանը շուրջ ութ տարի ուշացումով: Ի դեպ, ՀՀ քրեական դատավարության գործող օրենսգրքերում այդ կապակցությամբ դեռևս որևէ փոփոխություն չի կատարվել: Ավելին, ՀՀ քրեական դատավարության նոր օրենսգրքի նախագծի հոդված 535-ով ևս նախատեսվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու արտահանձնումը մերժելու օբլիգատիվ պահանջը: Մինչդեռ քր. դատ. օրենսգիրքը, մեր կարծիքով, պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը, իսկ «միջազգային պայմանագրերով նախատեսված դեպքեր» հասկացությունը պետք է ոչ միայն առավել հստակեցվի, այլև որոշակիորեն պարզաբանվի հենց հիշյալ օրենսգրքերում:

Մեր կարծիքով, այդ «դեպքերը» պետք է վերաբերեն միայն միջազգային բնույթի այն հանցագործություններին, որոնք նախատեսված են ՀՀ վավերացրած միջազգային համապատասխան կոնվենցիաներով, բնականաբար՝ փոխադարձությունն ապահովելու պարագայում: Պետք է փաստել, սակայն, որ ո՛չ 1948 թվականի «Ցեղասպանության հանցագործությունները կանխարգելելու և պատժելու մասին» ՄԱԿ-ի կոնվենցիայում, ո՛չ էլ 1977 թվականի «Ահաբեկչության արգելման մասին» եվրոպական կոնվենցիայում սեփական քաղաքացիների հանձնումը պարտադրող որևէ դրույթ սահմանված չէ: Հայաստանի Հանրապետության կողմից կնքված արտահանձնման մասին ոչ մի երկկողմ պայմանագրով ևս Հայաստանի

Հանրապետությունն իր վրա նման պարտավորություն չի վերցրել: Ավելին, նշված բոլոր պայմանագրերով նախատեսված է սեփական քաղաքացիներին չհանձնելու վերաբերյալ դրույթ: Բացի այդ, «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի 6 հոդվածի կապակցությամբ Հայաստանի Հանրապետությունը, օգտվելով վերապահում կատարելու իր իրավունքից, հայտարարել է, որ չի հանձնելու սեփական քաղաքացիներին:

Միջազգային քրեական դատարանի «Հռոմի կանոնադրության»<sup>2</sup> հոդված 89-ի 1-ին մասի համաձայն՝ Կանոնադրությունը վավերացրած պետություններից կարող է հայցվել ցանկացած անձի ձերբակալում և փոխանցում Դատարանին, իսկ այդ խնդրանքը բավարարվում է՝ առանց փոխանցումը մերժելու մասին որևէ հիմնավորման: Այս առումով, սակայն, անհրաժեշտ է հստակ տարանջատել հետևյալ հասկացությունները՝ 1) անձի արտահանձնում այլ պետության և 2) անձի փոխանցում միջազգային դատարաններին:

Շատ հետազոտողներ արտահանձնման ինստիտուտի էությունը բացահայտելու նպատակով օգտագործում են «փոխանցում» եզրույթը<sup>3</sup>: Սակայն պետք է նշել, որ, չնայած որոշակի նմանությանը, սրանք կապված են տարբեր իրավական հարաբերությունների հետ, և դրանց հիմքում ընկած են սկզբունքային տարբերություններ<sup>4</sup>: Մասնավորապես, «Հռոմի կանոնադրության» հոդված 102-ը սահմանում է, որ «փոխանցումը» պետության կողմից անձի տրամադրումն է Դատարանին (նշված Կանոնադրության համաձայն), իսկ «արտահանձնումը» պետության կողմից անձի տրամադրումն է մեկ այլ պետության՝ համաձայն միջազգային պայմանագրերի, կոնվենցիաների և ազգային օրենսդրության: Ընդ որում, Հռոմի կանոնադրության հոդված 5-ում նշված են այն բոլոր հանցագործությունները (միջազգային հանցագործություններ), որոնք ընդդատյա են Դատարանին:

Հետևաբար, միջազգային հանցագործություն կատարելու դեպքում անձը ենթակա է փոխանցման Միջազգային քրեական դատարանին և ոչ թե մեկ այլ պետության: Կարծում ենք, որ տվյալ մոտեցումը մերժելու պարագայում Հայաստանի Հանրապետության Սահմանադրության հոդված 30.1-ով սահմանված «դեպքերը» առավել քան անհասկանալի են դառնում: Ուստի, մեր կարծիքով, ՀՀ օրենսդրությամբ պարտադիր պետք է սահմանվի նաև միջազգային քրեական դատարաններին Հայաստանի Հանրապետության քաղաքացիների փոխանցման վերաբերյալ համապատասխան դրույթ:

<sup>2</sup> Միջազգային քրեական դատարանի (ՄԶԴ) Կանոնադրությունը (այսպես կոչված՝ «Հռոմի ստատուտը») ընդունվել է 1998 թ. հուլիսի 17-ին Հռոմում, Միավորված ազգերի կազմակերպության Լիազոր ներկայացուցիչների դիվանագիտական կոնֆերանսում: Այն ուժի մեջ է մտել 2002 թ. հուլիսի 1-ից՝ պահանջվող թվով պետությունների կողմից վավերացվելուց հետո: Հայաստանի Հանրապետությունը նշված Կանոնադրությունը ստորագրել է 1999 թ. հոկտեմբերի 1-ին, ինչով էլ սկիզբ է դրվել մեր պետության «Ստատուտին» միանալու գործընթացին: Սակայն ՀՀ սահմանադրական դատարանի 2004 թ. օգոստոսի 13-ի որոշմամբ արձանագրվել է, որ Կանոնադրության որոշ դրույթներ հակասում են ՀՀ Սահմանադրության մի շարք հոդվածների, ինչն էլ մինչ օրս խոչընդոտում է դրա վավերացումը:

<sup>3</sup> Այդ մասին առավել մանրամասն տե՛ս **Озерська А. В.** Экстрадиция в криминальном праве Украины // "Экономика. Финансы. Право", 2005, № 1, էջ 35:

<sup>4</sup> Տե՛ս նաև **Колибаб К. Е.** Институт передачи осужденных для отбывания наказания в другие государства // "Журнал российского права", 1999, № 5/6, էջ 90:

Մի շարք երկրներ տվյալ հարցի առնչությամբ այլ մոտեցում են որդեգրել: Այսպես, օրինակ՝ Կանադայի և Նիդեռլանդների միջև 1998 թվականին կնքված «Հանձնման պայմանագիրը» նախատեսում է, որ հանձնումը չի կարող մերժվել բացառապես հանձնվող անձի քաղաքացիության հիմքով (հոդված 3-ի 1-ին մաս): ԱՄՆ-ի և Արգենտինայի միջև 1972 թվականին կնքված «Արտահանձնման մասին պայմանագրի» համաձայն՝ կողմերը պարտավոր չեն հանձնել իրենց քաղաքացիներին, եթե իրենց կարծիքով դա նպատակահարմար չէ: Լիխտենշտեյնի օրենսդրությունը թույլատրում է քրեական հետապնդում իրականացնելու և դատավճիռն ի կատար ածելու նպատակով այդ երկրի քաղաքացու արտահանձնումը, եթե վերջինս, տեղեկացված լինելով իր հայտարարության հետևանքների մասին, արտահանձնման ենթարկվելու համաձայնություն է տալիս<sup>5</sup>:

Մասնակից պետություններին սեփական քաղաքացիների հանձնումը մերժելու իրավունք է վերապահվում նաև միջազգային որոշ կոնվենցիաներով: Մասնավորապես, այդ կապակցությամբ համապատասխան դրույթներ են պարունակում «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի հոդված 6-ի 1-ին մասը, ՄԱԿ-ի «Անդրազգային կազմակերպված հանցավորության դեմ պայքարի մասին» կոնվենցիայի հոդված 15-ի 3-րդ մասը և այլն: Ավելին, «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» ԱՊՀ անդամ պետությունների Քիշնևի կոնվենցիայի հոդված 89-ի 1-ին մասի համաձայն՝ պայմանավորվող կողմերի քաղաքացիների հանձնում ընդհանրապես չի կատարվում: Այսինքն՝ տվյալ փաստաթղթում հանձնման մերժումը օբլիգատիվ բնույթ է կրում:

Անհրաժեշտ է նշել, որ սեփական քաղաքացիներին չհանձնելով՝ երկրները չեն կարող նպատակ ունենալ թաքցնելու հանցանք կատարած անձանց (չնայած որոշ դեպքերում հնարավոր է նաև նման մտադրությունը): Քննարկվող իրավադրույթի հիմնական նպատակը սեփական քաղաքացիներին հավանական անհիմն մեղադրանքներից և հետապնդումներից պաշտպանելն է, այլ ոչ թե քրեական պատասխանատվությունից ազատելը կամ դրանից խուսափելու հնարավորություն ընձեռելը<sup>6</sup>: Բանն այն է, որ հայցվող պետությունը արտահանձնումը մերժելու դեպքում պարտավորվում է քրեական հետապնդում իրականացնել իր տարածքում: Նման դրույթ, օրինակ՝ սահմանված է «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի հոդված 6-ով:

Պետք է նշել, որ որոշ երկրներում քաղաքացիության ձեռքբերումը բավականին դյուրին գործընթաց է, մինչդեռ մյուսներում այն կարող է տարիներ տևել: Հետևաբար, անհրաժեշտություն է առաջանում պարզաբանելու նաև, թե արտահանձնման կոնկրետ որ փուլում անձը պետք է համարվի տվյալ պետության քաղաքացի՝ արտահանձնման հայցը մերժելու կամ բավարարելու հարցին այս կամ այն կերպ լուծում տալու համար:

Մասնավորապես, «Հանձնման մասին» եվրոպական կոնվենցիայի

<sup>5</sup> Տե՛ս Лукашук И. И., Наумов А. В. Выдача обвиняемых и осужденных в международном уголовном праве. М., 1998, էջ 36:

<sup>6</sup> Տե՛ս Бойцов А. И. Выдача преступников. СПб., 2004, էջ 477:



հողված 6-ի 1-ին մասի «գ» կետի համաձայն՝ «Քաղաքացիությունը պետք է սահմանվի հանձնման մասին որոշում ընդունելու ժամանակ»: Հայաստանի Հանրապետությունը, միանալով վերոհիշյալ Կոնվենցիային, նույնպես հայտարարել է, որ «... Կոնվենցիայի իմաստով Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը որոշվում է հանձնման մասին որոշում ընդունելու պահին»: Մեր կարծիքով, սակայն, տվյալ մոտեցումն այնքան էլ ընդունելի չէ: Բանն այն է, որ սահմանված չէ այնպիսի դրույթ, որի ուժով կարող էր մերժվել հետախուզման մեջ կամ կալանքի տակ գտնվող անձանց քաղաքացիություն ստանալը (օրինակ՝ այլ երկրի կողմից հետախուզվող անձը կարող է ՀՀ քաղաքացիություն ստանալ ՀՀ քաղաքացու հետ ամուսնության միջոցով): Բացի այդ, արտահանձնման վերաբերյալ որոշման ընդունումը կարող է անհիմն ձգձգվել, մինչև անձը ստանա հայցվող երկրի քաղաքացիություն:

Պատահական չէ, որ, օրինակ՝ «Օքսֆորդյան ռեզոլյուցիայի» 7-րդ կետում սահմանված իրավադրույթի համաձայն՝ «... սեփական քաղաքացիների արտահանձնումը մերժելու դեպքում չպետք է ուշադրություն դարձնել այն հանցավոր արարքից հետո ձեռք բերված քաղաքացիությանը, որի առնչությամբ հայցադիմում է ներկայացվել»: Հետևաբար, ըստ մեզ, առավել նպատակահարմար է, որ քաղաքացիությունը որոշվի արտահանձնման մասին հայցադիմումը ստանալու պահի դրությամբ, ինչի ուժով պետք է նաև կասեցվի քաղաքացիության շնորհման գործընթացը:

Առանձին հարց է երկքաղաքացիություն ունեցող անձանց արտահանձնման հիմնախնդիրը: Հայաստանի Հանրապետությունում, ինչպես հայտնի է, գործում է նաև երկքաղաքացիության ինստիտուտը: Մասնավորապես, «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքի հոդված 131-ի համաձայն՝ «... երկքաղաքացի է համարվում այն անձը, որն ունի մեկից ավելի պետությունների քաղաքացիություն»: Նույն հոդվածով՝ «Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին Հայաստանի Հանրապետության համար ճանաչվում է միայն որպես Հայաստանի Հանրապետության քաղաքացի: Հայաստանի Հանրապետության երկքաղաքացին ունի Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր իրավունքները և կրում է Հայաստանի Հանրապետության քաղաքացու համար նախատեսված բոլոր պարտականություններն ու պատասխանատվությունը»: Օրենսդրական նշված դրույթներից կարելի է եզրակացնել, որ եթե Հայաստանի Հանրապետությունից հայցվում է մի երկքաղաքացու արտահանձնում, որը նաև Հայաստանի Հանրապետության քաղաքացի է, ապա նրա վրա պետք է տարածվի նաև ՀՀ կողմից սեփական քաղաքացիների արտահանձնումը մերժելու վերաբերյալ սկզբունքը: Ընդ որում, այն երկրները, որոնք ճանաչում են երկքաղաքացիությունը, հիմնականում ներպետական օրենսդրությամբ սահմանել են նմանատիպ դրույթներ: Հետևաբար, երկքաղաքացիները շատ հաճախ կարող են իրավական խնդիրներ ունենալ մի երկրում՝ կատարելով իրենց պարտականությունները մեկ այլ երկրում:

Հայաստանի Հանրապետության համար նմանօրինակ ամենատարածված խնդիրը ժամկետային զինվորական ծառայությունից խուսափելն է: «Զինապարտության մասին» ՀՀ օրենքի հոդված 31-ի 2-րդ մասի համա-

ծայն՝ «Այլ պետության քաղաքացիություն ընդունած Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի ազատվում պարտադիր զինվորական ծառայությունից, անկախ այն հանգամանքից՝ ծառայել է նա այլ պետությունում, թե ոչ»: Միևնույն ժամանակ չի բացառվում, որ երկքաղաքացիություն ունեցող, զորակոչի տարիքի հասած անձն այդ պահին զինվորական ծառայություն կրի մեկ այլ երկրում, որի քաղաքացիությունը ևս նա ունի: Նման իրավիճակներում կարող են լուրջ խնդիրներ առաջ գալ, այդ թվում՝ արտահանձնման իրավահարաբերությունների կապակցությամբ:

Երկքաղաքացիները՝ որպես համապատասխան երկրների լիարժեք քաղաքացիներ, չեն կարող բացառություն համարվել քրեական օրենքի կիրառման համար: Որոշ գիտնականներ բացառում են նման իրավիճակները՝ դա կապելով «non bis in idem» (միևնույն արարքի համար կրկնակի դատապարտման անթույլատրելիություն) սկզբունքի կիրառման հետ<sup>7</sup>: Մեր կարծիքով, սակայն, քննարկվող դեպքերն այդ սկզբունքի հետ չեն կարող առնչվել, քանի որ, կրելով միևնույն հատկանիշները, դրանք ուղղված են տարբեր երկրների շահերի դեմ: Հետևաբար, երկրներից յուրաքանչյուրն իրավունք ունի արտահանձնման վերաբերյալ հայցադիմում ներկայացնել մյուսին, իսկ վերջինս էլ՝ մերժել սեփական քաղաքացու արտահանձնումը:

Միևնույն ժամանակ հնարավոր են նաև դեպքեր, երբ երկքաղաքացիություն ունեցող անձը, հետապնդվելով (հետախուզվելով) այն երկրների կողմից, որոնց քաղաքացին է, հայտնաբերվում է մեկ այլ՝ երրորդ երկրում: Նման պայմաններում երկրներից յուրաքանչյուրն իրավունք ունի պաշտպանելու իր քաղաքացուն կամ պահանջելու վերջինիս արտահանձնումը՝ քրեական հետապնդում իրականացնելու նպատակով, ինչպես նաև վիճարկելու մյուս երկրի նման պահանջի իրավականությունը: Մինչդեռ հայցվող երկիրը չի կարող հաշվի չառնել այն, որ անձը փաստացի մի երկրի քաղաքացի է՝ չկարողանալով վիճարկել նաև մյուս երկրի քաղաքացիության հանգամանքը: Վիճակն ավելի է բարդանում, երբ անձն ունենում է ոչ թե երկու, այլ երեք և ավելի երկրների քաղաքացիություն (այն որևէ կերպ արգելված չէ նաև «Քաղաքացիության մասին» ՀՀ օրենքով):

Քննարկվող հիմնախնդիրների կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում պարզաբանելու նաև արտահանձնման ինստիտուտին առնչվող՝ «հավասարության» և «արդյունավետ քաղաքացիության» սկզբունքները: Մասնավորապես, «հավասարության» սկզբունքի համաձայն՝ անձի երկու քաղաքացիություններն էլ ունեն հավասար նշանակություն, և կողմերից ոչ մեկը չի կարող պահանջել իր իրավասության գերակայություն մյուս պետության հանդեպ, նաև որի քաղաքացին է անձը: «Արդյունավետ քաղաքացիության» սկզբունքը հիմնվում է անձի՝ մի պետության հետ առավել կապվածության հիմքերի վրա, որի չափորոշիչներն են՝

- 1) այդ երկրի տարածքում մշտական բնակության հանգամանքը,
- 2) նախկինում երկրներից մեկի տարածքում մշտական բնակության

<sup>7</sup> Տե՛ս, օրինակ՝ **Валеев Р. М.** Выдача преступников в современном международном праве (Некоторые вопросы теории и практики). Казань, 1976, էջ 19, **Звирбуль В. К., Шупилов В. П.** Выдача уголовных преступников. М., 1974, էջ 11:

հանգամանքը, եթե ներկայումս այդ անձը բնակվում է երրորդ երկրում,

3) պետական կամ զինվորական ծառայությունը, քաղաքական իրավունքների իրականացման վայրը, լեզուն, քաղաքացիություններից մեկը ավելի շուտ կամ ուշ ստացած լինելը, նախկինում դիվանագիտական պաշտպանության համար երկրին դիմած լինելու հանգամանքը, անշարժ գույքի տիրապետումը և այլն:

Երկու և ավելի երկրներից երկքաղաքացիներին արտահանձնելու վերաբերյալ հայցադիմում ստանալիս որոշում կայացնելու համար որպես հիմք կարելի է համարել բազմակողմ պայմանագրերը: Սակայն դրանցով ևս վերոհիշյալ հարցերը հստակ կարգավորված չեն: Այսպես, ԱՊՀ անդամ պետությունների Քիշնևի կոնվենցիայի հոդված 79-ի համաձայն՝ «եթե հանձնման վերաբերյալ հարցումներ են ստացվում մի քանի Պայմանավորվող կողմերից, ապա հայցվող Պայմանավորվող կողմն ինքնուրույն է որոշում, թե այդ հարցումներից որը պետք է բավարարվի»: Հետևաբար, հայցվող երկիրը կարող է հիմք չընդունել վերոհիշյալ հանգամանքներից և ոչ մեկը կամ իր հայեցողությամբ դրանցից մեկին տալ գերակայություն:

Ամփոփելով ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ երկքաղաքացիների արտահանձնման հարցը որևէ կերպ չի կարգավորվում ո՛չ ազգային (ներպետական) օրենսդրությամբ, ո՛չ էլ միջազգային իրավանորմերով: Այլ կերպ ասած, ժամանակակից աշխարհում գոյություն չունի երկքաղաքացիների արտահանձնման վերաբերյալ որևէ հատուկ դրույթ: Հետևաբար, ունենալով հավասար իրավունքներ և պարտավորություններ՝ երկքաղաքացիների արտահանձնման հարցը կարգավորվում է այնպես, ինչպես մեկ երկրի քաղաքացու արտահանձնումը: Բացառություն կարող են լինել միայն այն «դեպքերը», երբ Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերում հատուկ կսահմանվեն երկքաղաքացիների արտահանձնման վերաբերյալ դրույթներ՝ համաձայն ՀՀ Սահմանադրության հոդված 30.1-ի (օրինակ՝ ՀՀ-ն կարող է հանձնել իր քաղաքացուն այն երկրին, որի քաղաքացին հանդիսանում է հայցվող անձը):

Այսպիսով, արտահանձնման ինստիտուտի ներկայիս վիճակը սերտորեն փոխկապակցված է ինչպես ժամանակակից միջազգային իրավունքի, այնպես էլ ներպետական օրենսդրության զարգացման հետ: Այդ առումով միանշանակ է, որ միջազգային իրավական հանրաճանաչ նորմերի հիման վրա պետությունների համագործակցության ընդլայնումը, ինչպես նաև հստակ հասկացության բազայի ձևավորումն ու ներպետական իրավակարգավորման կատարելագործումը էապես կարող են նպաստել հանցավորության դեմ պայքարի արդյունավետության բարձրացմանը և հանցավոր տարբեր դրսևորումների կանխարգելմանը:

**Բանալի բառեր** – արտահանձնում (էքստրադիցիա), արտահանձնման մեթոդ, հանցանք կատարած անձանց հանձնում, երկքաղաքացիություն ունեցող անձ, Հռոմի կանոնադրություն, հովանավորչության սկզբունք

**СЕРГЕЙ АРАКЕЛЯН, АРА ФИДАНИЯ** – Проблемы, связанные с отказом в выдаче собственных граждан и выдачей лиц, имеющих двойное гражданство. – В статье анализируется один из аспектов взаимопомощи государств в

борьбе с преступностью – экстрадиция, в частности отказ государства выдавать собственных граждан и выдача лиц, имеющих двойное гражданство. Показана эволюция института экстрадиции, определены общие закономерности и тенденции его развития. Исследуется как юридическое, так и законодательное регулирование данных вопросов, а также правоприменительная практика. С целью достижения поставленных задач предложены собственные варианты их решения.

**Ключевые слова:** *экстрадиция, отказ в выдаче, выдача лиц, совершивших преступление, лицо с двойным гражданством, римский статут, принцип покровительства*

**SERGEY ARAKELYAN, ARA FIDANYAN – *Problems of the Declining the Extradition of Own Citizens, and Extradition of Persons with Dual Citizenship.*** – The issue of extradition, one of the most important problems of states legal assistance in fight against criminality is discussed in the article presented. The problems of declining the extradition of the citizens by their own countries, as well as the issues concerning the extradition of the persons with dual citizenship are analyzed.

The authors analyze the evolution of the institute of extradition and identify common regularities and developmental trends of the latter one. The authors study both the legal and legislative aspects of the defined problems, as well as identify practical problems which occur in the frames of the implementation of extradition. Based on their own vision of overcoming the defined shortcomings, the authors suggest possible solutions and options for settling the proposed issues.

**Key words:** *extradition, declining the extradition, criminals-issuing, persons having dual citizenship, Rome Statute, principle of patronage*

---

## ԴՐԱՄԱՆԵՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՔՐԵԱԿԱՆ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

### ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ

Դրամանենգության տարածման միտումը իրական սպառնալիք է պետության տնտեսական անվտանգությանը: Այդ իմաստով դրամանենգությանը հակազդելու արդյունավետ համակարգի ստեղծումը բոլոր պետությունների քրեական քաղաքականության առաջնահերթ խնդիրներից է: Դրամանենգության աճը կարող է հանգեցնել, օրինակ, շրջանառվող փողի ծավալների անվերահսկելի ավելացմանը, որի հետևանքով տեղի է ունենում փողի արժեզրկում, հանցավոր խմբավորումների հարստացում ու այլ հանցատեսակների աճ (զենքի, թմրամիջոցների ապօրինի շրջանառություն և այլն):

Չնայած իրավապահ մարմինների կողմից դրամանենգության դեմ պայքարի ուղղությամբ իրականացվող միջոցառումներին՝ վերջին տարիներին նկատվում է նշված հանցատեսակի աճ, ավելանում է նաև այն երկրների քանակը, որոնց դրամը կեղծվում է: Ուստի դրամանիշների կեղծումը դժվարացնելու նպատակով պետությունները հարկադրված են իրենց ազգային արժույթի պաշտպանության շարունակական միջոցառումներ իրականացնել:

Գաղտնիք չէ, որ տարբեր բնագավառներում միջազգային առաջավոր փորձի ուսումնասիրությունն ու ներդրումը բավականին արդյունավետ միջոց են ազգային մակարդակում այս կամ այն խնդրի լուծման ուղիներ գտնելու համար: Գիշտ է, դրամանենգության դեմ պայքարը պետք է կրի համակարգային բնույթ և ներառի ինչպես իրավաստեղծ, այնպես էլ իրավակիրառ ու կազմակերպչական ոլորտները, որովհետև միայն քրեական օրենսդրության կատարելագործումը, մեկուսի վերցրած, չի կարող ապահովել դրամանենգության ընդհանուր և հատուկ կանխարգելման ակնկալվող արդյունքները, այնուամենայնիվ որևէ հանցատեսակի դեմ պայքարի ոլորտում պետության քրեական քաղաքականության արդյունավետությունը մեծապես կախված է նաև այն բանից, թե որքանով է տվյալ հանցանքը քրեական օրենսդրությամբ ամբողջապես քրեականացված, և որքանով են համապատասխան քրեաիրավական նորմերը արտացոլում տվյալ հանցատեսակի դեմ պայքարի իրական պատկերը: Ուստի սույն հոդվածի շրջանակներում կփորձենք համեմատել ՀՀ և արտասահմանյան երկրների քրեական օրենսգրքերում դրամանենգության համար պատասխանատվություն սահմանող նորմերը և հանգել հետևությունների՝ ՀՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) համապատասխան նորմի կատարելագործման վերաբերյալ:

ՀՀ քր. օր.-ի 202 հոդվածով քրեական պատասխանատվություն է

սահմանված կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելու, պահելու կամ իրացնելու համար:

1961 թ. ՀՍՄՀ քրեական օրենսգրքով այս արարքը նախատեսված էր «Պետական հանցագործություններ» գլխում: Հայաստանի Հանրապետության և ԱՊՀ երկրների գործող քրեական օրենսդրությամբ դրամանենգությունը դասված է տնտեսական գործունեության դեմ ուղղված հանցագործությունների թվին: Ալժիրի, Իսպանիայի քրեական օրենսդրությամբ դրամանենգությունը նախատեսված է կեղծիքների համար պատասխանատվություն սահմանող գլխում: Բելգիայի, Բրազիլիայի, Կուբայի, Էստոնիայի քրեական օրենսդրությամբ դրամանենգությունը համարվում է հասարակական վտահուության դեմ ուղղված հանցագործություն: Ավստրիայի, Պերմանիայի, Իսրայելի, Շվեյցարիայի, Ճապոնիայի քրեական օրենսդրությամբ կեղծ փողերի պատրաստման, իրացման և հարակից հանցակազմերը նախատեսված են առանձին բաժիններում, ինչը վկայում է այն մասին, որ նշված հանցագործությունները միավորում է ինքնուրույն տեսակային անմիջական օբյեկտը<sup>1</sup>:

Անդրադառնալով դրամանենգության առարկային՝ ասենք, որ քր. օր.-ի 202 հոդվածում որպես այդպիսին նշված են փողերը և արժեթղթերը: Ի տարբերություն ՀՀ քր. օր.-ի՝ որոշ արտասահմանյան երկրների, օրինակ՝ Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության քրեական օրենսգրքերում հստակ նշված է, որ դրամանենգության առարկա է ինչպես տվյալ պետության, այնպես էլ այլ պետությունների շրջանառության մեջ գտնվող փողը, ինչպես տվյալ պետության արժույթով, այնպես էլ՝ արտարժույթով արժեթղթերը: Թեև քր. օր.-ի 202 հոդվածում այդ մասին ուղղակի նշում չկա, սակայն հանցագործության առարկա պետք է համարել ինչպես Հայաստանի Հանրապետության, այնպես էլ արտասահմանյան երկրների փողն ու արժեթղթերը:

Դրամանենգության առարկա կարող է լինել միայն վարպետորեն կեղծված փողը կամ արժեթուղթը, երբ այն չափով, գույնով, թղթի որակով շատ նման է իսկականին, և անգն աչքով կեղծիքը հայտնաբերել հնարավոր չէ: Եթե փողի կեղծումը կատարված է կոպիտ, ոչ վարպետորեն և հանցավորի դիտավորությունն ուղղված է եղել այդ փողը անձանց սահմանափակ շրջանակում իրացնելուն, ապա արարքը պետք է որակել որպես խարդախություն<sup>2</sup>: Նման դեպքերում հանցավորն իր հաշվարկը կատարում է այն անձի անհատական առանձնահատկությունների վրա հիմնվելով, որին պետք է իրացնի կեղծ փողը (վատ տեսողություն, ակոհոլային կամ թմրանյութային հարբածություն), կամ կեղծ փողի իրացման իրադրության վրա հիմնվելով (օրվա մութ ժամ, վատ լուսավորված վայր և այլն):

Արտասահմանյան երկրների քրեական օրենսդրության ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ, ԱՊՀ երկրներից բացի, մյուս երկրների քրեական օրենսդրությամբ դրամանենգության հանցակազմն ընդգրկում է միայն կեղծ փողերի պատրաստումը, պահելը և իրացումը: Իսկ արժեթղթերի հետ կապված նմանատիպ գործողությունները քրեական պատաս-

<sup>1</sup> Տե՛ս «Сравнительное уголовное право. Особенная часть». М., 2010, էջ 238:

<sup>2</sup> Տե՛ս «Судебная практика к Уголовному кодексу Российской Федерации». М., 2011, էջ 865:

խանատվություն են առաջացնում խարդախության համար պատասխանատվություն սահմանող հոդվածով (Ավստրիա, Գերմանիա, Յուգոսլավիա, Լեհաստան, Ֆրանսիա, Ճապոնիա)<sup>3</sup>: Դա պայմանավորված է այն հանգամանքով, որ ԱՊՀ երկրների քրեական օրենսգրքերը դեռևս կրում են խորհրդային քրեական օրենսդրության ազդեցությունը, իսկ, ինչպես գիտենք, խորհրդային քրեական օրենսդրությանը բնորոշ առանձնահատկություններից մեկը տնտեսությունը որպես հանցագործության ինքնուրույն տեսակային օբյեկտ դիտելն էր, ինչը սովորաբար բացակայում է եվրոպական երկրների քրեական օրենսգրքերում: Դա է պատճառը, որ կեղծ արժեթղթերի պատրաստումը և իրացումը այդ երկրներում դասված են սեփականության դեմ ուղղված հանցագործությունների շարքին:

Վճարային համակարգերի բարդացմամբ և նոր ֆինանսահաշվարկային գործիքների առաջացմամբ պայմանավորված՝ արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ քրեականացվել են դրամանենգությանը հարակից որոշ արարքներ: Մասնավորապես, խոսքը կեղծ վճարային քարտեր պատրաստելու, պահելու և իրացնելու մասին է (Կանադա, ՅուՆԵՍԿՈՒ, ԱՄՆ):

Բացի այդ, առանձին երկրների քրեական օրենսդրությամբ որպես դրամանենգության առարկա նախատեսված են փոստային վճարման միջոցները (Բելառուս, ՅուՆԵՍԿՈՒ, Իսպանիա, Ուկրաինա, Էստոնիա) և երթևեկության փաստաթղթերը, օրինակ՝ տալոնները, տոմսերը, աբոնեմտային գրքույկները (Բելառուս, Ուկրաինա), ակցիզային նշանները (Ուգանդա, Բենին, Գանա, Կոնգոյի Դեմոկրատիկական Հանրապետություն), կրեդիտային քարտերը (Իսպանիա), եվրոչեկերը (Գերմանիայի Դաշնային Հանրապետություն)<sup>4</sup>:

Խոսելով դրամանենգության օբյեկտիվ կողմի մասին՝ ասենք, որ քր. օր.-ի 202 հոդվածում նշված է երեք գործողություն, որոնցից թեկուզ մեկի կատարումը բավական է հանցանքն ավարտված համարելու համար: Դրանք են՝ կեղծ փող կամ արժեթղթեր պատրաստելը, պահելը և իրացնելը:

Օրենսդրական բաց կարելի է համարել այն, որ քր.օր.-ի 202 հոդվածով որպես հանցագործության օբյեկտիվ կողմի ինքնուրույն դրսևորում նախատեսված չէ իրացնելու նպատակով կեղծ փող կամ արժեթուղթ ձեռք բերելը: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ անձը, գիտակցելով, որ իրեն իրացնում են կեղծ փող, ձեռք է բերում այն՝ հետագայում իրացնելու նպատակով: Օրինակ՝ անձը կարող է կեղծ փող պատրաստողներից գնել կեղծ 10000 դրամանոց թղթադրամներ՝ յուրաքանչյուրի համար վճարելով 1000 դրամ՝ հետագայում դրանք իրացնելու նպատակով: Կամ, ասենք, ուղևորը վարորդին առաջարկում է 2000 դրամ ուղեվարձի փոխարեն վերցնել 20000-անոց կեղծ թղթադրամ՝ հետագա իրացման նպատակով, և վարորդը համաձայնելով վերցնում է: Կեղծ փող ձեռք բերելուց անմիջապես հետո անձը իհարկե սկսում է պահել այդ փողը, ինչի համար քրեական պատասխանատվություն սահմանված է: Սակայն բացառված չեն իրավիճակներ, երբ անձն իր կամքից անկախ հանգամանքներով չկարողանա ձեռք բերել կեղծ փողը: Նման դեպքերում արարքը չի կարող որակվել որպես կեղծ

<sup>3</sup> Տե՛ս «Сравнительное уголовное право. Особенная часть», էջ 239:

<sup>4</sup> Տե՛ս **Черкашин Е. Ф.** Проблемы квалификации изготовления или сбыта поддельных денег или ценных бумаг. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Екатеринбург, 2008, էջ 19:

փող ձեռք բերելու փորձ, քանի որ ձեռք բերելը քրեորեն պատժելի չէ:

Գրականության մեջ առաջարկվել է իրացման նպատակով կեղծ փողերի կամ արժեթղթերի ձեռքբերումը որակել որպես դրանց իրացման նախապատրաստություն<sup>5</sup>: Քր. օր.-ի 202 հոդվածի գործող խմբագրության պարագայում արարքը այդպես էլ կորակվի, սակայն այս դեպքում պատիժը համեմատաբար ավելի մեղմ կլինի, ինչը, կարծում ենք, արդարացի չէ: Չէ՞ որ կեղծ փող ձեռք բերելու դեպքում անձը ստանում է դա իրացնելու այն նույն հնարավորությունը, ինչ և պատրաստելու դեպքում, ուստի պատրաստելու և ձեռք բերելու համար ճիշտ կլինի նախատեսել հավասար պատիժ: Օրինակ, կեղծ փողերի և արժեթղթերի ձեռքբերումը Լեհաստանի Հանրապետության քրեական օրենսգրքով նախատեսված է որպես դրամանենգության օբյեկտիվ կողմի ինքնուրույն դրսևորում<sup>6</sup>:

Եթե ՀՀ քրեական օրենսդրությամբ դրամանենգության օբյեկտիվ կողմը սկսվում է կեղծ փող կամ արժեթղթեր պատրաստելով, ապա արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ հանցագործության օբյեկտիվ կողմի սկիզբը կապվում է հանցավոր գործունեության ավելի վաղ փուլի հետ: Այսպես, այն երկրներում, որտեղ հանցագործության նախապատրաստությունը ընդհանուր կանոնի համաձայն հանցագործություն չէ, քրեական օրենսգրքի Հատուկ մասի առանձին հոդվածով պատասխանատվություն է սահմանված նաև կեղծ փող պատրաստելու համար օգտագործվող սարքավորումներ կամ նյութեր ձեռք բերելու, իրացնելու կամ դրանց տիրապետելու համար (Ավստրիա, Գերմանիա, Հնդկաստան, Լեհաստան, Ֆրանսիա, Շվեյցարիա, Էստոնիա, Ճապոնիա): Համանման նորմ կա նաև Ալբանիայի, Բուլղարիայի և Վրաստանի քրեական օրենսգրքերում, որոնցում ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստությունը պատժելի է<sup>7</sup>: Կարծում ենք, որ նշված արարքները որպես ինքնուրույն հանցագործություն քրեականացնելու անհրաժեշտություն չկա, քանզի ներկայիս օրենսդրական կարգավորումը օրենսդրական բաց չի առաջացնում, քանի որ քրեական օրենսգրքի 202 հոդվածի 1-ին և 2-րդ մասերով նախատեսված հանցագործությունը ծանր է, իսկ 3-րդ մասով նախատեսվածը՝ առանձնապես ծանր, և դրանց նախապատրաստությունը քրեորեն պատժելի է:

Դրամանիշների կեղծման դեմ պայքարի 1929 թ. ժնկի կոնվենցիան նախատեսում է այնպիսի արարքի քրեականացումը, ինչպիսին է կեղծ փողերի ներմուծումը տվյալ պետություն: ՀՀ քրեական օրենսգրքի 212 հոդվածով կեղծ փողը որպես մաքսանենգության առարկա նախատեսված չէ, և իրացնելու նպատակով Հայաստանի Հանրապետություն կեղծ փող ներմուծելու դեպքում արարքը պետք է որակել որպես կեղծ փող պահել:

Դրամանենգության սուբյեկտիվ կողմը ՀՀ և արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությամբ նույնական է. այն դրսևորվում է ուղղակի դիտավորությամբ և իրացման նպատակով:

Հանցագործության սուբյեկտ կարող է լինել 16 տարին լրացած ֆիզիկական մեղսունակ անձը:

<sup>5</sup> St'u **Маецкий А. В.** Изготовление, хранение, перевозка или сбыт поддельных денег или ценных бумаг // "Молодой ученый", 2012, № 4, էջ 291:

<sup>6</sup> St'u «Уголовный кодекс Республики Польша». СПб., 2001:

<sup>7</sup> St'u «Сравнительное уголовное право. Особенная часть», էջ 239:



Արգենտինայի, Բելգիայի, Չնդկաստանի, Իսպանիայի, Լիտվայի, Լեհաստանի, Սինգապուրի քրեական օրենսգրքերում առանձնացված է նաև դրամանենգության արտոնյալ հանցակազմ՝ կեղծ փողեր իրացնելն այն անձի կողմից, ով դրանք ձեռք է բերել բարեխղճորեն<sup>8</sup>: Խոսքն այն դեպքերի մասին է, երբ բարեխիղճ մոլորության մեջ գտնվող անձին իրացնում են կեղծ փող, վերջինս, հետագայում հայտնաբերելով կեղծիքը՝ ոչ թե դիմում է իրավապահ մարմիններին, այլ մեկ ուրիշին է իրացնում այն: Կարծում ենք, որ նման արտոնյալ հանցակազմ առանձնացնելը նպատակահարմար չէ երկու պատճառով: Առաջին՝ նման դեպքերում դատարանն իրավասու է նշանակել սանկցիայով նախատեսված պատժի նվազագույն սահմանը՝ երեք տարի ժամկետով ազատազրկումը, որից ավելի մեղմ պատիժ նախատեսելը չի համապատասխանի արարքի հանրային վտանգավորությանը, և կխախտվի պատժի համաչափության սկզբունքը: Եվ երկրորդ՝ գործնականում կառաջանան հանցագործության սուբյեկտիվ կողմի ապացուցման հետ կապված էական բարդություններ, և դժվար կլինի հաստատել, որ անձը կեղծ փողը ձեռք բերելու պահին չի գիտակցել դրանց կեղծ լինելու հանգամանքը:

Ավստրիայի, Բուլղարիայի, Իրանի քրեական օրենսդրությամբ նախատեսված է դրամանենգության դեպքում գործուն զղջալու վերաբերյալ խրախուսական նորմ<sup>9</sup>: Կարծում ենք, որ, դրամանենգության դեպքերի բացահայտման նկատառումներից ելնելով, այդպիսի խրախուսական նորմ նպատակահարմար է նախատեսել նաև ՀՀ քրեական օրենսդրությամբ, սակայն մի վերապահումով: Խրախուսական նորմում նպատակահարմար կլինի նախատեսել, որ քրեական պատասխանատվությունից ազատվում է այն անձը, ով կեղծ փող կամ արժեթուղթ պատրաստելու կամ պահելու մասին կամովին հայտնել է իրավապահ մարմիններին և հանձնել է դրանք: Մեր կարծիքով, նպատակահարմար չէ քրեական պատասխանատվությունից ազատել նաև կեղծ փող կամ արժեթուղթ իրացրած այն անձանց, ովքեր դրա մասին կամովին կհայտնեն իրավապահ մարմիններին: Բանն այն է, որ եթե խրախուսական նորմի գործողությունը տարածվի միայն կեղծ փող և արժեթղթեր պատրաստելու ու պահելու դեպքերի վրա, ապա դա թույլ կտա շահագրգռել հանցանք կատարող անձանց մինչև իրացումը դադարեցնել հանցավոր գործունեությունը, ինչով կկանխվի դրամանենգությամբ պատճառվող հետագա վնասը:

Քրեական իրավունքի տեսության մեջ և պրակտիկայում վիճահարույց է նաև այն հարցը, թե ինչպես պետք է որակվի արարքը, եթե անձը, կեղծ փող կամ արժեթուղթ իրացնելով, խաբեությամբ տիրացել է ուրիշի գույքին, օրինակ, կեղծ փողով որևէ իր է գնել խանութից:

Ե. Ֆ. Չերկաշկինի կարծիքով, կեղծ փողերի կամ արժեթղթերի իրացմամբ ուրիշի գույքին տիրանալը ձևավորում է դրամանենգության և խարդախության իդեալական համակցություն<sup>10</sup>: Դրան հակառակ, Ա. Վ. Մայեցկին գտնում է, որ նման դեպքերում կեղծ փողերի կամ արժեթղթերի իրացումը չպետք է համակցությամբ որակել նաև որպես խարդախություն<sup>11</sup>:

ՌԴ գերագույն դատարանի պլենումի 1994 թ. ապրիլի 28-ի որոշման

<sup>8</sup> Տե՛ս նույն տեղը, էջ 239:

<sup>9</sup> Տե՛ս նույն տեղը:

<sup>10</sup> Տե՛ս Черкашин Е. Ф., նշվ. աշխ., էջ 17:

<sup>11</sup> Տե՛ս Маецкий А. В., նշվ. աշխ., էջ 291:

մեջ արտահայտված է այն դիրքորոշումը, որ կեղծ փողերի կամ արժեթղթերի իրացմամբ ուրիշի գույքին տիրանալը կլանվում է դրամանենգության հանցակազմի կողմից և չպետք է լրացուցիչ որակվի որպես խարդախություն<sup>12</sup>: Նման դիրքորոշումը հիմնավորվում է այն բանով, որ դրամանենգության և խարդախության հանցակազմերը գտնվում են համապատասխանաբար՝ հատուկ և ընդհանուր քրեաիրավական նորմերի հարաբերակցության մեջ, և, մրցակցության կանոնների համաձայն՝ արարքը պետք է որակվի միայն հատուկ նորմով<sup>13</sup>:

Սակայն կարծում ենք, որ քր. օր.-ի 178 և 202 հոդվածներում ամրագրված նորմերը ընդհանուրի և հատուկի հարաբերակցության մեջ չեն: Ինչպես իրավացիորեն նշված է հանցագործությունների որակման տեսության մեջ, հատուկ նորմը պետք է բովանդակի ընդհանուր նորմի բոլոր հատկանիշները և բնութագրվի լրացուցիչ հատկանիշով<sup>14</sup>: Իսկ քր. օր.-ի 202 հոդվածում ամրագրված նորմը չի պարունակում 178 հոդվածով նախատեսված նորմի բոլոր հատկանիշները, այսինքն՝ կեղծ փող կամ արժեթուղթ իրացնելու յուրաքանչյուր դեպք չէ, որ պարունակում է նաև խարդախության հանցակազմ: Ուստի այն դեպքերում, երբ կեղծ փող կամ արժեթղթեր իրացնելով հանցավորը խաբեությամբ տիրանում է տուժողի՝ զգալի չափերի հասնող գույքին, արարքը պետք է որակվի քր. օր.-ի 178 և 202 հոդվածների համակցությամբ:

Անհրաժեշտ է քննարկել նաև արարքի որակման հարցն այն դեպքերում, երբ կեղծ փողն օգտագործվում է այլ հանցագործություններ կատարելու ժամանակ: Մասնավորապես, եթե կեղծ փողով ապօրինի ձեռք է բերվում զենք, ռազմամթերք, պայթուցիկ նյութեր կամ պայթուցիկ սարքեր, թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր, ապա արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ դրամանենգություն և զենքի, թմրամիջոցների ապօրինի շրջանառություն: Եթե կեղծ փողը տրվում է որպես կաշառք, ապա արարքը պետք է որակել հանցագործությունների համակցությամբ՝ դրամանենգություն և կաշառք տալ:

Քր. օր.-ի 202 հոդվածի 2-րդ մասով որպես դրամանենգության ծանրացուցիչ հանգամանքներ նշված են նույն արարքի կատարումը խոշոր չափերով և մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ, իսկ 3-րդ մասում՝ առանձնապես խոշոր չափերով և կազմակերպված խմբի կողմից:

Կարծում ենք, որ որոշակի խմբագրման կարիք ունի քրեական օրենսգրքի 202 հոդվածի 4-րդ մասը, որում տրվում է խոշոր և առանձնապես խոշոր չափերի հասկացությունների սահմանումը: Այսպես, 202 հոդվածի 4-րդ մասում սահմանված է. «Սույն հոդվածում խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը), իսկ առանձ-

<sup>12</sup> Տե՛ս «О судебной практике по делам об изготовлении или сбыте поддельных денег или ценных бумаг». Постановление Пленума Верховного Суда РФ от 28 апреля 1994 г. № 2 (в ред. постановления Пленума от 17.04.2001 № 1) // "Бюллетень Верховного Суда РФ", 2001, № 6, կետ 3:

<sup>13</sup> Տե՛ս **Скляр, С.** Как квалифицировать последствия сбыта поддельных денег или ценных бумаг // <http://www.lawmix.ru/comm.php?id=4638>:

<sup>14</sup> Տե՛ս **Кудрявцев В. Н.** Общая теория квалификации преступлений. М., 2001, էջ 211-213:

նապես խոշոր չափ է համարվում հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը գերազանցող գումարը (արժեքը)»: Սակայն խնդիրն այն է, որ կեղծ փողն ինքնին արժեք չունի, և «խոշոր ու առանձնապես խոշոր չափեր» հասկացությունների կիրառմամբ օրենսդիրը նկատի է ունեցել կեղծ փողի կամ արժեթղթերի անվանական արժեքը:

Ելնելով կատարված ուսումնասիրության արդյունքներից՝ առաջարկում ենք քր. օր.-ի 202 հոդվածը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ. «Հոդված 202.

Կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, ձեռք բերելը, պահելը կամ իրացնելը

1. Իրացնելու նպատակով կեղծ փողեր կամ արժեթղթեր պատրաստելը, ձեռք բերելը, պահելը կամ դրանք իրացնելը՝

պատժվում է ազատազրկմամբ՝ երեքից յոթ տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

2. Նույն արարքը, որը կատարվել է՝

1) խոշոր չափերով,

2) մի խումբ անձանց կողմից նախնական համաձայնությամբ՝

պատժվում է ազատազրկմամբ՝ վեցից տասը տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

3. Սույն հոդվածի առաջին կամ երկրորդ մասով նախատեսված արարքը, որը կատարվել է՝

1) կազմակերպված խմբի կողմից,

2) առանձնապես խոշոր չափերով՝

պատժվում է ազատազրկմամբ՝ ութից տասներկու տարի ժամկետով՝ գույքի բռնագրավմամբ կամ առանց դրա:

4. Սույն հոդվածում հանցանքը համարվում է խոշոր չափերով կատարված, եթե հանցագործության առարկայի անվանական արժեքը գերազանցում է հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի հազարապատիկը, և առանձնապես խոշոր չափով կատարված, եթե հանցագործության առարկայի անվանական արժեքը գերազանցում է հանցագործության պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհազարապատիկը:

5. Կեղծ փողեր կամ արժեթղթեր կանոնադրված հանձնած անձն ազատվում է դրանք պատրաստելու, ձեռք բերելու և պահելու համար նախատեսված քրեական պատասխանատվությունից»:

Կարծում ենք, որ օրենսդրական այս փոփոխությունները կարող են նպաստել իրավակիրառ պրակտիկայի արդյունավետությանը:

**Քանալի բառեր** – դրամանենգություն, փողեր, արժեթղթեր պատրաստելը, պահելը, իրացնելը, քրեական պատասխանատվություն, համեմատական վերլուծություն, որակում, քրեական օրենսգիրք, հանցակազմ

**МИСАК МАРКОСЯН** – *Сравнительно-правовой анализ уголовной ответственности за фальшивомонетничество.* – Фальшивомонетничество представляет собой реальную угрозу для экономической безопасности государства, и создать систему противодействия ему – одна из главных задач уголовной полити-

ки любой страны. Но несмотря на активные меры, направленных на борьбу с этим явлением, за последние годы увеличилось и число преступлений данной категории, и круг стран, чьи деньги подвергаются подделке. Власти вынуждены периодически защищать валюту, усложняя её подделку.

В статье рассмотрены признаки состава фальшивомонетничества по уголовному законодательству РА и некоторые вопросы квалификации данного преступления, проведён сравнительный анализ соответствующих норм зарубежных стран. Предложена новая редакция статьи Уголовного кодекса РА, предусматривающей ответственность за фальшивомонетничество.

**Ключевые слова:** *фальшивомонетничество, деньги, изготовление, хранение, сбыт ценных бумаг, уголовная ответственность, сравнительный анализ, квалификация, уголовный кодекс, состав преступления*

**MISAK MARKOSYAN – *Comparative-Legal Analysis of Criminal Responsibility for Counterfeiting.*** – The spread of counterfeiting represents a real threat for the economic security of a state. In this context, the establishment of the system of resistance to counterfeiting is one of the main tasks of the criminal policy of any state, including the Republic of Armenia. Despite the activation of measures aimed to combat counterfeiting, during the recent years the increase of the crimes of the given category was registered. Moreover, the geography of the countries whose money became subject to counterfeiting has widened. For these reasons, the states periodically have to undertake measures aimed to the protection of their own currency and complication of its forgery.

The features of the corpus delicti of counterfeiting provided by the criminal legislation of the Republic of Armenia are discussed in the article. The author conducts comparative analysis of the provisions on counterfeiting provided by the foreign countries criminal legislations, considers some issues on the legal qualification of the given crime.

As a conclusion, the author suggests certain legislative proposal aimed to the improvement of the RA Criminal Code provision setting criminal responsibility for counterfeiting.

**Keywords:** *counterfeiting, money, production, storage, realization of securities, criminal liability, comparative analysis, qualification, Criminal Code, corpus delicti*

---

## ԱՐՏԱՔՍՈՒՄԸ ՈՐՊԵՏ ԱԶՏԱԶՐԿՄԱՆ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԱՅԻՆ ՊԱՏԺԱՏԵՍԱԿ

### ԼԱԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀՀ Նախագահի 2012 թվականի հունիսի 30-ի ՆԿ-96-Ա կարգադրությամբ հաստատված՝ Հայաստանի Հանրապետության իրավական և դատական բարեփոխումների 2012-2016 թվականների ռազմավարական ծրագրում նշված է, որ Հայաստանի Հանրապետության ապագա քրեական օրենսգրքում անհրաժեշտ է արմատապես վերանայել պատիժների համակարգը՝ ապահովելով քրեական պատժի համաչափության հետևողական կենսագործումը, սահմանելով ազատազրկմանն այլընտրանք հանդիսացող գործում պատժատեսակներ և հիմնական պատիժների կոմբինացված տեսքով նշանակման հնարավորություն, ինչպես նաև նախատեսելով քրեաիրավական հարկադրանքը տնտեսելուն ուղղված այլ լուծումներ:

Հայաստանի Հանրապետության նոր քրեական օրենսգրքի հայեցակարգում նշվում է, որ ազատազրկման հետ չկապված պատժատեսակների կիրառումը, եթե դա հիմնավորված է, պետք է դառնա իրավակիրառման տարածված պրակտիկա, որի հիմնական նպատակը քրեական պատասխանատվության անխուսափելիության, այլ ոչ թե չափազանց խստության ապահովումն է: Ըստ այդմ, առաջարկվում է պատժի համակարգը լրացնել նոր՝ այլընտրանքային պատժատեսակներով, որոնց թվում նշված է նաև օտարերկրյա քաղաքացիներին և քաղաքացիություն չունեցող անձանց երկրից արտաքսումը:

Հոդվածի շրջանակներում կանդրադառնանք արտաքսման՝ որպես պատժի տեսակի բնութագրին և հատկանիշներին:

«Ղեպորտացիա» (լատիներեն՝ deportatio - վտարում, արտաքսում) ասելով հասկանում ենք անձի կամ անձանց խմբի հարկադրական վտարում այլ պետություն կամ այլ տարածք:

Երկրից արտաքսումը (ղեպորտացիա)՝ որպես պատժի տեսակ կամ որպես քրեաիրավական այլ միջոց, նշանակում է հանցանք կատարած անձին դատարանի դատավճռով որոշակի ժամկետով կամ անժամկետ հարկադրաբար վտարելը<sup>1</sup>:

Հնում անձին հասարակությունից, քաղաքից, պետությունից արտաքսելը համարվում էր խիստ պատիժ և հաճախ համարժեք էր մահապատժին, քանի որ օտարության մեջ վտարանդին զրկվում էր իրավական պաշտպանությունից, երբեմն կարող էր սպանվել կամ ստրկացվել:

Եվրոպայում միջին դարերում և նոր ժամանակներում, երբ միջազգային կապերի զարգացմամբ պայմանավորված՝ օտարերկրացիներն օժտվում էին

---

<sup>1</sup> Տե՛ս Додонов В. Н. Сравнительное уголовное право. Общая часть. М., 2010, էջ 313:

իրավունակությամբ, երկրի սահմաններից վտարելը դիտվում էր առաջին հերթին որպես արտոնյալ կարգավիճակ ունեցող անձանց նկատմամբ կիրառվող պատիժ: Նապոլեոնյան քրեական օրենսգիրքը վտարումը դիտում էր որպես մի շարք քաղաքական հանցագործությունների համար պատժելու միջոց: Ռուսական իրավունքում վտարումը հայտնի էր 10-15-րդ դարերում, սակայն կենտրոնացված ֆեոդալական պետության ձևավորմամբ այն փոխարինվեց աքսորով: Հետհեղափոխական տարիներին այդ պատժի տեսակը հայտնվեց խորհրդային քրեական իրավունքում: ՌԽՖՍՀ 1922 թ. քրեական օրենսգիրքը պատիժների շարքն էր դասում նաև ՌԽՖՍՀ սահմաններից արտաքսումը որոշակի ժամկետով կամ անժամկետ: 1920-1930-ական թթ. այս միջոցը մի քանի անգամ կիրառվել է պրակտիկայում: 1960 թ. ՌԽՖՍՀ քրեական օրենսգրքով այս պատժատեսակն այլևս սահմանված չէր, սակայն խորհրդային իշխանություններն առանձին դեպքերում կիրառում էին այն:

Արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունում «դեպորտացիա» տերմինը չի նույնացվում վտարման՝ որպես վարչական հարկադրանքի միջոցի հետ<sup>2</sup>:

Ինչ վերաբերում է Հայաստանի Հանրապետությանը, ապա 1961 թ. ՀՍՍՀ քրեական օրենսգրքի (այսուհետ՝ քր. օր.) 24 հոդվածը արտաքսումը նախատեսում էր որպես պատժի տեսակ: Այսպես, արտաքսումը դատապարտյալին հեռացնելն էր իր բնակության վայրից՝ արգելելով նրան բնակվելու որոշակի վայրերում: Արտաքսումը թե՛ որպես հիմնական և թե՛ որպես լրացուցիչ պատիժ կարող էր նշանակվել մեկից մինչև հինգ տարի ժամկետով: Արտաքսումը որպես լրացուցիչ պատիժ կարող էր կիրառվել միայն օրենքում հատկապես մատնանշված դեպքերում: Արտաքսումը չէր կիրառվում այն անձանց նկատմամբ, ովքեր մինչև հանցագործություն կատարելը տասնութ տարեկան չէին դարձել:

Ժամանակակից աշխարհում բոլոր երկրների սահմանադրություններն ու օրենքները նորմեր են պարունակում այն մասին, որ տվյալ երկրի քաղաքացին չի կարող պետության սահմաններից վտարվել հակառակ իր կամքի<sup>3</sup>: Դրա հետ մեկտեղ՝ օտարերկրյա քաղաքացիներին կամ քաղաքացիություն չունեցող անձանց երկրի սահմաններից վտարելը հայտնի է բավականին շատ երկրների քր. օր.-երում: Վտարումը պատժի տեսակ է համարվում Ադրբեջանում, Ալբանիայում, Անդորրայում, Բանգլադեշում, Ֆրանսիայում, Էստոնիայում, Լատվիայում և մի շարք այլ երկրներում:

Մի շարք երկրների քր. օր.-երում այն դիտվում է որպես անվտանգության միջոց (Հունաստան, Խորվաթիա, Մոլդովա և այլն) կամ այլ քրեաիրավական միջոց (Իսպանիա, Թուրքիա և այլն): Վտարումը պատժի տեսակ համարող երկրներում սովորաբար այն դիտվում է որպես լրացուցիչ պատիժ: Իսկ Վիետնամում և Չինաստանում, արտասահմանցու վտարումը կարող է դիտվել որպես հիմնական կամ լրացուցիչ պատժատեսակ:

<sup>2</sup> Տե՛ս **Сандугей А. Н.** Депортация: наказание или процедура // "Административное право и процесс", 2005, №1:

<sup>3</sup> Բացառություն են կազմում սեփական քաղաքացիներին Միջազգային քրեական դատարանին հանձնելու դեպքերը, ինչը թույլատրվում է այն երկրներում, որոնք վավերացրել են միջազգային քրեական դատարանի Հռոմի ստատուտը:

Կոստա Ռիկայի քր. օր.-ի համաձայն՝ վտարումը դիտվում է որպես հիմնական պատիժ: Անկախ դրա ձևական բնույթից՝ վտարումը առավել ծանր պատիժներից մեկն է (խոսքն իհարկե զբոսաշրջիկներին կամ սեզոնային աշխատողներին վտարելու մասին չէ, այլ այն անձանց, ովքեր երկար ժամանակ ապրում են տվյալ երկրում):

Ժամանակակից աշխարհում միլիոնավոր մարդիկ մշտական բնակություն են հաստատում օտար երկրներում՝ չլինելով քաղաքացիներ (վառ օրինակ են Բալթյան երկրները): Այսպիսի անձանցից շատերի համար երկրից վտարումը բավականին խիստ պատժատեսակ է, նույնիսկ ավելի խիստ, քան որոշակի ժամկետով ազատազրկումը:

ՌԴ-ում վտարումը քրեական հարկադրանքի (պատժի) տեսակ չէ, չնայած մի շարք քրեագետներ առաջարկում են այն դարձնել պատժի տեսակ<sup>4</sup>: Օտարերկրացիներին երկրից արտաքսելու մասին դրույթներ բացակայում են Ավստրիայի, Բելառուսի, Բուլղարիայի, Իտալիայի, Գերմանիայի, Զնդկաստանի, Ճապոնիայի, Շվեյցարիայի, Դանիայի, Վրաստանի և շատ այլ երկրների քր. օր.-երում:

Մի շարք երկրներում օտարերկրացիներին քրեական պատասխանատվության ենթարկելու դեպքում արտաքսումը նախատեսված է հատուկ օրենքով: Այսպես, ԱՄՆ-ում 1996 թ. ընդունվել է օրենք «Ապօրինի ներգաղթի բարեփոխումների և ներգաղթյալների պատասխանատվության մասին», որի համաձայն՝ ԱՄՆ-ի տարածքում օրինական հիմքերով մշտապես բնակվող ցանկացած օտարերկրացի կարող է անժամկետ վտարվել երկրից՝ ԱՄՆ վերադառնալու արգելքով, եթե նա դատապարտվել է լուրջ հանցագործության համար՝ ծանրացնող հանգամանքերով<sup>5</sup>: Հունաստանում, Իտալիայում, Օմանում, Պորտուգալիայում, Թունիսում երկրից վտարումը որպես պատիժ նախատեսված է թմրանյութերի հետ կապված հանցագործություններ կատարելու դեպքում:

Ինչպես ցույց է տալիս արտասահմանյան երկրների քրեական օրենսդրությունների վերլուծությունը, այս պատժատեսակի կիրառման կարգն ու պայմաններն առանձին երկրներում էական տարբերություններ ունեն: Սովորաբար օրենսդիրը նախատեսում է, որ օտարերկրացին կարող է վտարվել երկրից ազատազրկման դատապարտվելու դեպքում՝ պատիժը կրելուց հետո: Ադրբեջանում վտարումը կիրառվում է միայն այնպիսի անձի նկատմամբ, ով կատարել է ծանր կամ առանձնապես ծանր հանցագործություն: Հունաստանում օրինական հիմքերով երկրում գտնվող օտարերկրացին կարող է վտարվել միայն այն դեպքում, երբ ազատազրկման է դատապարտվել 3 ամսից ոչ պակաս ժամկետով: Երբեմն օրենսդիրը պահանջում է, որ արտաքսման մասին դատարանի կայացրած որոշումը լինի պատճառաբանված: Ալբանիայի քր. օր.-ով վտարումը կիրառվում է, եթե դատարանը որոշում է, որ տվյալ անձի գտնվելն այդ երկրում ցանկալի չէ: Լատվիայի քր. օր.-ով օտարերկրացին կարող է երկրից վտարվել, եթե դատարանը որոշի, որ գործի հանգամանքներից և մեղադրյալի անձից ելնելով՝ նրա այստեղ մնալը անթույլատրելի է: Բրունեյում վտարումը կիրառվում է հիմ-

<sup>4</sup> Տե՛ս «Уголовное право России; проблемы и перспективы». М., 2004, էջ 51, 52:

<sup>5</sup> Տե՛ս «Иностранец», 2001, № 39, էջ 28:

նական պատիժը մեղմացնելու համար՝ այն փոխարինելու կարգով: Այս երկրի քր. օր.-ի համաձայն՝ այն դեպքերում, երբ անձը դատապարտվել է մահապատժի կամ ոչ պակաս, քան 7 տարվա ազատազրկման, դատավճիռը իշխանությունների որոշմամբ կարող է փոխարինվել Բրունեյից ժամանակավոր կամ անժամկետ վտարումով: Իսպանիայի քր. օր.-ի համաձայն՝ երկրի տարածքից արտաքսումը կարող է կիրառվել նաև որպես այլընտրանք մինչև 6 տարի ժամկետով ազատազրկմանը: Այն կարող է իրագործվել նաև պատժի 3/4-ը կրելուց հետո, որը պիտի 6 տարուց պակաս չլինի:

Հաջորդ կարևոր պայմանը, որը պետք է քննարկվի այս պատժի մասին խոսելիս, վտարման ժամկետն է: Բրունեյի, Մակեդոնիայի, Ֆրանսիայի քր. օր.-երով վտարումը նախատեսված է որոշակի ժամկետով կամ անժամկետ: Պերուի քր. օր.-ով քաղաքացիների արտաքսումը նախատեսված է 10 տարի ժամկետով, իսկ օտարերկրացիներին վտարելու ժամկետն ընդհանրապես սահմանված չէ:

Հունգարիայի քր. օր.-ի համաձայն՝ անժամկետ արտաքսումը կարող է նշանակվել այն անձանց նկատմամբ, որոնց ներկայությունը երկրում էականորեն վտանգի տակ է դնում հասարակական անվտանգությունը՝ կապված հանցագործի անձի և նրա կատարած հանցագործության հետ: Ժամանակավոր վտարման տևողությունը Հունգարիայի, Մակեդոնիայի, Սերբիայի քր. օր.-երով սահմանված է 1-10 տարի ժամկետով: Ժամանակավոր վտարումը որոշակիացված է Բոսնիայի և Հերցեգովինայի (1-10 տարի), Դոմինիկյան Հանրապետության (1-3 տարի), Իսպանիայի (3-10 տարի), Կոստա Ռիկայի (6 ամսից 10 տարի), Մադագասկարի (5-10 տարի), Սալվադորի (մինչև 5 տարի), Էստոնիայի (մինչև 10 տարի) քր. օր.-երով:

Ընդհանուր կանոնի համաձայն՝ արտաքսման ժամկետը սկսում են հաշվել ազատազրկումը կամ այլ պատիժը կրելուց հետո: Ժամկետի մասին խոսք չկա Ադրբեջանի, Ալբանիայի, Ռումինիայի քր. օր.-երում: Լատվիայի քր. օր.-ով այս պատժատեսակը նշանակվում է առանց դրա ժամկետը սահմանելու:

Անհրաժեշտ է քննարկել նաև այն հարցը, թե ովքեր կարող են ենթարկվել վտարման: Ինչպես ասվեց, գրեթե բոլոր երկրների քր. օր.-երի համաձայն՝ վտարման ենթակա են միայն օտարերկրացիները՝ այլ երկրների քաղաքացիները կամ քաղաքացիություն չունեցող անձինք: Միայն մի քանի երկրներում քրեական օրենսդրությունը հնարավորություն է ընձեռում երկրից վտարելու նաև սեփական քաղաքացիներին: Օրինակ՝ Պերուի քր. օր.-ով առանձնացված է սեփական քաղաքացիների արտաքսումը և օտարերկրացիների վտարումը: Առաջինը կիրառվում է միայն պետության դեմ ուղղված հանցագործությունների դեպքում: ԱՄՆ դաշնային օրենսդրությունը որպես լրացուցիչ պատժատեսակ նախատեսում է նաև ԱՄՆ այն անձանց քաղաքացիությունից զրկում, ովքեր դատապարտվել են դավաճանության, ԱՄՆ իշխանությունը զավթելու փորձ կատարելու կամ դրա նպատակով զենք կիրառելու համար:

Քր. օր.-երում նախատեսվում են որոշակի դրույթներ, երբ օտարերկրացիները չեն կարող արտաքսվել երկրից: Այդ դրույթներն առավել մանրամասն ներկայացված են Ադրբեջանի քր. օր.-ով, որի համաձայն՝ երկրից



հարկադրաբար արտաքսում չի կիրառվում այն անձանց նկատմամբ, ովքեր՝

1. դատավճիռն օրինական ուժի մեջ մտնելու պահից հանրապետությունում ապրել են ոչ պակաս, քան 5 տարի,
2. դատավճռի կայացման պահին Ադրբեջանի քաղաքացու հետ անուսնական հարաբերությունների մեջ են գտնվել,
3. ծնվել են Ադրբեջանում,
4. ունեն Ադրբեջանի քաղաքացի ծնող,
5. ունեն փախստականի կարգավիճակ կամ Ադրբեջանում քաղաքական ապաստան են խնդրել,
6. խնամքի տակ կան անչափահաս, անգործունակ կամ 1-ին, 2-րդ խմբի հաշմանդամ անձինք:

Հունգարիայի քր. օր.-ը միայն մեկ սահմանափակում է նախատեսում. փախստականի կարգավիճակ ունեցող անձինք չեն կարող արտաքսվել Հունգարիայից: Էստոնիայում վտարումը չի կարող կիրառվել միայն այն օտարերկրյա քաղաքացիների նկատմամբ, որոնց 18 տարին չի լրացել նախքան հանցանքի կատարումը: Եթե վտարվողը Էստոնիայում ունի կին կամ ամուսին և համատեղ երեխա, ապա դատարանը պետք է պատճառաբանի և հիմնավորի իր կայացրած դատավճիռը:

Այսպիսով, ըստ սույն հոդվածի շրջանակներում կատարված ուսումնասիրության արդյունքների և հաշվի առնելով ՀՀ քրեական նոր օրենսգրքի հայեցակարգի դրույթները՝ առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսդրությամբ որպես ազատագրկման այլընտրանքային պատժատեսակ նախատեսել արտաքսումը՝ համապատասխան հոդվածը շարադրելով հետևյալ կերպ.

«Հոդված ... Արտաքսումը

1. Արտաքսումը Հայաստանի Հանրապետության տարածքում ոչ մեծ կամ միջին ծանրության հանցանք կատարած օտարերկրյա քաղաքացուն կամ Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձին հարկադրաբար վերադարձնելն է նրա քաղաքացիության կամ մշտական բնակության վայրի երկիր:

2. Արտաքսումը չի կարող կիրառվել միայն այն դեպքում, երբ վերադարձը կարող է հանգեցնել տվյալ անձի նկատմամբ քաղաքական կամ այլ հայացքների պատճառով հետապնդման:

3. Արտաքսումը նշանակվում է որպես հիմնական պատժատեսակ մեկից հինգ տարի ժամկետով»:

Կարծում ենք, որ ՀՀ պատժի համակարգում արտաքսման նախատեսումը թույլ կտա մի կողմից իրագործել քրեական հարկադրանքի տնտեսման սկզբունքը, իսկ մյուս կողմից՝ կանխել Հայաստանի Հանրապետությունում օտարերկրյա քաղաքացիների կամ Հայաստանի Հանրապետությունում մշտապես չբնակվող, քաղաքացիություն չունեցող անձանց կողմից նոր հանցագործությունների կատարումը:

**Բանալի բառեր** – արտաքսում, այլընտրանքային պատժատեսակ, վտարում, պատժի համակարգ, քրեական օրենսգիրք, ժամկետ, օտարերկրյա քաղաքացի

**ЛАЛА ГРИГОРЯН – *Депортация как альтернатива лишению свободы.*** – Стратегической программой правовых и судебных реформ 2012–2016 гг. предусматривается принятие нового Уголовного кодекса РА. Одной из его концептуальных особенностей должны стать альтернативные виды наказания, реализующие принцип экономии уголовной репрессии. Таким альтернативным наказанием является, в частности, депортация. В статье рассмотрены вопросы, касающиеся понятия, признаков, содержания и особенностей депортации, проанализированы соответствующие нормы законодательства зарубежных стран. В заключение предложено предусмотреть депортацию как вид наказания в Уголовном кодексе Армении.

**Ключевые слова:** депортация, альтернативное наказание, высылка, система наказаний, уголовный кодекс, срок, иностранный гражданин

**LALA GRIGORYAN – *Deportation as an Alternative to Deprivation of Liberty.***–The Republic of Armenia strategic program of legal and judicial reforms 2012-2016 envisages the adoption of a new Criminal Code of the Republic of Armenia. One of the conceptual peculiarities of the new Criminal Code of RA will be stipulation of new alternative punishments having the aim to ensure the implementation of the principle of economy of criminal repression.

The concept of the RA new Criminal Code foresees deportation as a new type of alternative punishment. The concept, features, content and peculiarities of deportation as an alternative punishment are discussed in the presented article. The author conducts comparative-legal analysis of the relevant provisions on deportation provided by the criminal legislations of foreign countries

In conclusion, the author suggests special legislative proposal on envisaging deportation as a form of punishment in the criminal code of RA.

**Key words:** deportation, alternative punishment, expulsion, the penal system, criminal code, timeframe, foreigner

## ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԻՑ ԿԱՍՈՎԻՆ ՀՐԱԺԱՐՎԵԼՈՒ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԻՐԱՎԱԿԱՆ ԲՆՈՒՅԹԸ

### ԿԱՍՈՍՈՒՄՅԱԼ

ՀՀ քրեական իրավունքի համակարգում իր առանձնահատուկ դերով առանձնանում է հանցագործությունից կանոփին հրաժարվելու ինստիտուտը: ՀՀ քրեական օրենսգրքի «Ավարտված և չավարտված հանցագործությունները» վերտառությամբ 6-րդ գլխում առանձին հոդվածով կանոնակարգվում են քննարկվող ինստիտուտին վերաբերող դրույթները, այն է՝ հանցագործությունից կանոփին հրաժարում է համարվում անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը: Ընդ որում, օրենսդրի կողմից հստակեցվում են նաև հանցագործությունից կանոփին հրաժարվելու իրավական հետևանքները՝ սահմանելով. «Հանցագործությունն ավարտին հասցնելուց կանոփին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա՝ փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում»:

Չնայած հանցագործությունից կանոփին հրաժարվելու ինստիտուտի նման կանոնակարգմանը՝ քրեաիրավական գրականության մեջ դրա իրավական բնույթի վերաբերյալ վեճերը չեն դադարում: Հատկապես տարակարծությունների տեղիք է տալիս հետևյալ հարցը. այս ինստիտուտը քրեական պատասխանատվությունը, արարքի հանցավորությունը բացառող հիմք է, թե՞ քրեական պատասխանատվությունից ազատող հիմք<sup>1</sup>:

Քննարկվող հարցի շուրջ քրեագետների տեսակետները հիմնականում հանգում են հետևյալին: Պրոֆեսորներ Ն. Ֆ. Կուզնեցովան, Ի. Յա. Կոզաչենկոն, Ջ. Ա. Նեզնամովան և այլք գտնում են, որ հանցագործությունից կանոփին հրաժարված անձի վարքագծում հանցակազմ չկա, հետևաբար քրեական պատասխանատվությունը բացառվում է<sup>2</sup>: Թե՞ Ն. Ֆ. Կուզնեցովան, թե՞ այս տեսակետի կողմնակիցներ Ա. Ն. Սաֆինը, Վ. Ֆ. Շեպելկովը նշում են, որ հանցագործությունից կանոփին հրաժարված անձի վարքագծում բացակայում են ինչպես ավարտված հանցագործության հատկանիշները (քանի որ այն ավարտին չի հասցվել), այնպես էլ հանցագործության նախապատրաստության և հանցափորձի հատկանիշները, քանզի հանցագործությունն ավարտին չի հասցվել ոչ թե նրա կամքից անկախ հանգա-

<sup>1</sup> Տե՛ս **Антонов А. Г.** Соотношение специальных оснований освобождения от уголовной ответственности и добровольного отказа от совершения преступления. Актуальные проблемы Российской юридической науки и правоприминительной практики // "Вестник Владимирского юридического института", 2011, № 1 (18), էջ 46:

<sup>2</sup> Տե՛ս «Уголовное право. Общая часть». Под редакцией профессора Козаченко И. Я., Незнамовой З. А., М., 2001, էջ 226, «Курс уголовного права». В 5-ти томах. Под редакцией профессора Кузнецовой Н.Ф., Тяжковой И. М. М., 1999, т. 1, էջ 377, **Азарян Е. Р.** Преступление. Наказание. Правопорядок. СПб., 2004, էջ 169:

մանքներով, այլ նրա ազատ կամահայտնությամբ, հետևաբար բացակայում է հանցագործությունից կամովին հրաժարված անձին քրեական պատասխանատվության ենթարկելու հիմքը<sup>3</sup>: Ուստի, այս տեսակետի կողմնակիցների կարծիքով, հանցագործությունից կամովին հրաժարվելը պետք է դիտել որպես քրեական պատասխանատվությունը բացառող հիմք:

Ներկայացված տեսակետը զարգացնում է Բ. Վ. Վոլժենկինը, համաձայն որի՝ հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի փուլում հանցագործությունն ավարտին հասցնելուց կամովին հրաժարված անձը քրեական պատասխանատվությունից ազատվում է ոչ թե հանցավոր մտադրության իրականացումը այդ փուլերում ընդհատելու համար, այլ ընդհանրապես ենթակա չէ քրեական պատասխանատվության, քանի որ իր վարքագծում բացակայում են չավարտված հանցագործությանը բնութագրական հանցակազմի բոլոր հատկանիշները<sup>4</sup>:

Մինչդեռ հեղինակների երկրորդ խումբը արտահայտում է հակադիր տեսակետը՝ նշելով, որ հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում անձի վարքագծում հանցակազմ կա, սակայն կամովին հրաժարումը քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք է<sup>5</sup>: Մասնավորապես, Կ. Ա. Պանկոն նշում է, որ հանցագործությունից կամովին հրաժարվելու պարագայում, մինչև սեփական կամահայտնությամբ հանցանքի կատարմանն ուղղված վարքագծի դադարեցումը, անձի փաստացի դրսևորած արարքը (հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը) ինքնին հանցակազմ է պարունակում, սակայն նոր հանգամանքի՝ սուբյեկտի ազատ կամահայտնությամբ հանցանքն ավարտին հասցնելը կանխելը անձին ազատում է քրեական պատասխանատվությունից<sup>6</sup>: Համանման դիրքորոշում է հայտնում Ա. Ի. Օռլովան, որի տեսակետի համաձայն՝ հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտի նպատակն է քրեական օրենքի գործողության ոլորտում հայտնված և օրենքը խախտած անձին խթանել դադարեցնելու իր հանցավոր վարքագիծը<sup>7</sup>: Ասվածից հետևում է, որ, հեղինակի կարծիքով, անձի փաստացի դրսևորված վարքագիծն ինքնին հանցակազմ է պարունակում, սակայն անձի սուբյեկտիվ, կամային, հոգեբանական վերաբերմունքը իր կողմից սկսված վարքագծի դադարեցմանը, ձևավորում է միջանկյալ օղակ հանցավոր և իրավաչափ արարքների միջև<sup>8</sup>:

Խնդրո առարկայի առումով իր հստակ դիրքորոշումն է արտահայտել նաև Ս. Գ. Կելինան, որի կարծիքով, թեև մինչև հանցանքի կատարումից կամովին հրաժարվելը անձի դրսևորած վարքագիծը պարունակում է չա-

<sup>3</sup> Տե՛ս Сафин А. Ф. Понятие и признаки неоконченного преступления // "Вестник ТИСБИ", 2007, № 2, Щепельков В. Ф. Уголовный закон: преодоление противоречий и неполноты. М., 2003, էջ 228:

<sup>4</sup> Տե՛ս Волженкин Б. В. Добровольный отказ от преступления // "Уголовное право России: Общая часть". СПб., 2006, էջ 549:

<sup>5</sup> Տե՛ս Звечаровский И. Э. Добровольный отказ от доведения преступления до конца. СПб., 2008, էջ 41, Елеонский В. А. Поощрительные нормы уголовного права и их значение в деятельности органов внутренних дел. Хабаровск, 1984, էջ 58:

<sup>6</sup> Տե՛ս Паныко К. А. Добровольный отказ от преступления по советскому уголовному праву. Воронеж, 1975, էջ 15:

<sup>7</sup> Տե՛ս Орлова А. И. Добровольный отказ от преступления: проблемы теории и практики. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Красноярск, 2007, էջ 7:

<sup>8</sup> Տե՛ս Орлова А. И., նշվ. աշխ., էջ 12-13:

վարտված հանցագործության հանցակազմ, սակայն աննպատակահարմար է անձի ուղղումը քրեախրավական հարկադրանքի միջոցներով, ուստի հանցանքի կատարումից կանոփին հրաժարվելը ոչ թե բացառում է քրեական պատասխանատվությունը, այլ քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք է<sup>9</sup>:

Ձարգացնելով այս տեսակետը՝ Ի. Է. Ջվեչարովսկին նշում է, որ հանցագործությունից կանոփին հրաժարվելու ինստիտուտի պարագայում անձի փաստացի կատարածում հանցակազմն առկա է, և այս ինստիտուտը օրենսդրի կողմից քրեախրավական կարգավորման ոլորտում դրսևորած յուրօրինակ փոխզիջում է, որը նպատակ ունի խթանելու հանցավոր վարքագիծ դրսևորելուն ձեռնամուխ եղած անձի կողմից դա դադարեցնելը, կանխելու այն ավարտին հասցնելը<sup>10</sup>: Հետևաբար հանցագործությունից կանոփին հրաժարվելը չի կարող դիտվել որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք, այլ ընդամենը պետք է դիտվի որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք:

Պարզելու համար, թե ներկայացված տեսակետներից որն է առավել հիմնավոր հայ իրականության համար, առաջին հերթին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել ՀՀ օրենսդրի կողմից հանցագործությունից կանոփին հրաժարվելու ինստիտուտի կանոնակարգման ձևակերպումներին:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 36-ի 1-ին մասում հանցագործությունից կանոփին հրաժարվելու ինստիտուտի ձևակերպման մեջ օրենսդիրը նշում է «անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցավորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը)» դադարեցնելու մասին, ինչից տրամաբանորեն հետևում է, որ հանցագործությունից կանոփին հրաժարված անձի վարքագծում հանցակազմ առկա է, այլ խնդիր է, որ դրանում բացակայում են նրա կողմից սկսված հանցագործությունն ավարտված դիտելու համար անհրաժեշտ բոլոր հատկանիշները: Պատահական չէ, որ ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 36-ի 2-րդ մասում օրենսդրի կողմից հստակ նշվում է՝ հանցագործությունն ավարտին հասցնելուց կանոփին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա՝ փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում: Օրենսդրի կողմից «այլ հանցակազմ» արտահայտության գործածումը վկայում է այն մասին, որ հանցագործությունն ավարտին հասցնելուց կանոփին հրաժարված անձի վարքագծում հանցակազմ առկա է, սակայն օրենսդիրը իր առանձնահատուկ դիրքորոշումն է դրսևորել և հնարավորություն ընձեռել հանցագործությունը ավարտին հասցնելուց կանոփին հրաժարված անձին մինչ կանոփին հրաժարումը դրսևորված վարքագծի համար չենթարկելու քրեական պատասխանատվության:

Հետևաբար, ներկայացված օրենսդրական ձևակերպումից ակնհայտ է, որ օրենսդրի ընկալմամբ, հանցագործությունից կանոփին հրաժարվելու պարագայում մինչ անձի կողմից հանցավոր վարքագծի կանոփին դադարեցումը դրսևորած վարքագիծը հանցակազմ է պարունակում:

Այնուհանդերձ, տրամաբանական այս դատողությունը որոշակի հա-

<sup>9</sup> Տե՛ս **Келина С. Г.** Освобождение от уголовной ответственности // "Уголовное право России. Общая часть". М., 2003, էջ 463-464:

<sup>10</sup> Տե՛ս **Звечаровский И. Э.**, նշվ. աշխ., էջ 42:

կադրության է հանդիպում ՀՀ քրեական օրենսգրքում հանցագործությունից կանոնված հրաժարվելու և չավարտված հանցագործությունը կանոնակարգող դրույթների վերլուծության ժամանակ: Մասնավորապես, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 36-ի 1-ին մասը սահմանում է, որ հանցագործությունից կանոնված հրաժարում է համարվում անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը: Միևնույն ժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 34-ը սահմանում է, որ հանցափորձ է համարվում ուղղակի դիտավորությամբ կատարված այն գործողությունը (անգործությունը), որն անմիջականորեն ուղղված է հանցանք կատարելուն, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել անձի կամքից անկախ հանգամանքներով, իսկ նույն օրենսգրքի հոդված 35-ի համաձայն՝ հանցագործության նախապատրաստություն է համարվում ուղղակի դիտավորությամբ հանցանք կատարելու համար միջոցներ կամ գործիքներ ձեռք բերելը կամ հարմարեցնելը, ինչպես նաև դիտավորությամբ այլ պայմաններ ստեղծելը, եթե հանցագործությունն ավարտին չի հասցվել այդ անձի կամքից անկախ հանգամանքներով:

Ասվածից հետևում է, որ անձը չի կարող կանոնված դադարեցնել հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը, քանի որ վերջիններիս առկայության համար անհրաժեշտ է, որ հանցանքի կատարմանն ուղղված վարքագիծը ընդհատվի սուբյեկտի կամքից անկախ հանգամանքներով, մինչդեռ հանցագործությունից կանոնված հրաժարվելու պարագայում հանցավոր վարքագիծ սկսած անձը դադարեցնում է հանցանքն ավարտին հասցնելը իր ազատ կամահայտնությամբ: Ներկայացված իրավիճակում կարելի է խոսել ոչ թե հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կանոնված դադարեցնելու, այլ հանցանքի կատարմանն ուղղված վարքագիծը ավարտին հասցնելուց հրաժարվելու մասին:

Միաժամանակ, ուշագրավ իրավիճակ է ստեղծվում ներկայացված դրույթները ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 33-ում տեղ գտած ձևակերպումների հետ համադրելիս: Հիշյալ հոդվածի 1-ին մասը սահմանում է, որ չավարտված հանցագործություն են համարվում հանցափորձը և ծանր կամ առանձնապես ծանր հանցագործությունների նախապատրաստությունը: Հետևաբար, եթե տառացի քերականական մեկնաբանության պարագայում հոդված 36-ի 1-ին մասը կիրառելի չէ ՀՀ գործող քրեական օրենսգրքում ներկայումս ձևակերպում գտած հանցագործության նախապատրաստության և հանցափորձի դեպքերում, իսկ չավարտված հանցագործության այլ տարբերակ օրենսդիրը չի սահմանում, ստացվում է, որ քննարկվող ինստիտուտի պարագայում մինչև անձի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելուց կանոնված հրաժարվելը դրսևորած վարքագիծը փաստացի հանցակազմ չի պարունակում:

Կարծում ենք, ներկայացված խառնաշփոթից խուսափելու լավագույն տարբերակը կլինի ՀՀ քրեական օրենսգրքում հանցագործությունից կանոնված հրաժարվելու ինստիտուտը կանոնակարգող դրույթների բարելավումը: Նախ, վերանայման կարիք ունի հենց ինստիտուտի անվանումը. այն

պետք է կոչվի ոչ թե «Հանցագործությունից կանոփին հրաժարում» (քանի որ հանցագործության նախապատրաստության կամ հանցափորձի փուլում դրսևորված հանցավոր վարքագիծը ևս հանցագործության դրսևորում է), այլ «Հանցագործությունն ավարտին հասցնելը կանոփին կանխելը»:

Միաժամանակ, վերանայման կարիք ունի հիշյալ ինստիտուտը կանոնակարգող իրավական դրույթը: Մասնավորապես, անհրաժեշտ է սահմանել, որ հանցագործությունն ավարտին հասցնելը կանոփին կանխած անձը ենթակա չէ պատժի, եթե գիտակցել է այն ավարտին հասցնելու հնարավորությունը, պայմանով, որ նրա փաստացի կատարածում այլ հանցակազմ առկա չէ:

Առաջարկված ձևակերպման պարագայում հնարավոր կլինի հստակ դիրքորոշում արտահայտել երեք հիմնական դրույթների շուրջ:

Նախ՝ օրենսդրորեն կհաստատվի, որ մինչ հանցանքն ավարտին հասցնելը դրսևորված վարքագիծը հանցակազմ է պարունակում, ինչը վերջ կդնի ինչպես տեսական բանավեճերին, այնպես էլ կհեշտացնի այդ ինստիտուտի գործնական կիրառությունը:

Երկրորդ՝ օրենսդրորեն կհստակեցվի, որ հանցագործությունն ավարտին հասցնելուց հրաժարված անձը ոչ թե ենթակա չէ քրեական պատասխանատվության, այլ ենթակա չէ պատժի: Թեև ՀՀ-ում, ինչպես և ՌԴ-ում, Ուկրաինայում, նախկին ԽՍՀՄ մի շարք երկրներում հանցագործությունից կանոփին հրաժարումը ավանդաբար դիտվում է որպես քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանք<sup>11</sup>, սակայն դրա իրավական բնույթի և օրենսդրական նման կանոնակարգման նպատակահարմարության հարցերը տարակարծությունների տեղիք են տալիս: Պատահական չէ, որ Իսպանիայում հանցագործությունից կանոփին հրաժարումը դիտվում է որպես քրեական պատասխանատվությունից ազատելու հիմք<sup>12</sup>, իսկ մի շարք այլ երկրներում արարքի պատժելիությունը բացառող հանգամանք:

Մասնավորապես, Բուլղարիայի քրեական օրենսգրքի հոդվածներ 17 և 18-ը սահմանում են, որ հանցագործության կատարմանը ձեռնամուխ եղած անձը ենթակա չէ պատժի, եթե կանոփին հրաժարվել է հանցանքն ավարտին հասցնելուց, իսկ նյութական հանցակազմերի դեպքում՝ կանխել է հանցավոր հետևանքների առաջացումը<sup>13</sup>: Համանման դրույթներ է պարունակում նաև Ֆինլանդիայի քրեական օրենսգրքը, որը սահմանում է, որ հանցափորձ դրսևորած անձը ենթակա չէ պատժի, եթե իր ազատ կամքով ձեռնպահ է մնացել հանցանքն ավարտին հասցնելուց կամ այլ կերպ կանխել է դրա՝ հանցակազմի հատկանիշ հանդիսացող հետևանքները<sup>14</sup>: Ավելին, ֆինն օրենսդիրը առավել հստակություն մտցնելու նպատակով օրենսդրորեն ամրագրել է, որ եթե պարզվի, որ հանցագործությունն ավարտին չի հասցվել, կամ հանցակազմով նախատեսված հետևանքները առաջացել են ոչ թե անձի կողմից կանոփին հրաժարում դրսևորելու պատճառով, այլ ուրիշ գործոնների ազդեցությամբ, սակայն հանցավոր վարքագծի

<sup>11</sup> Տե՛ս «Criminal Code of Latvia», «Уголовный кодекс Украины». Издательство «Одиссей», 2013; «Научно-практический комментарий УК Украины» М., 2010, «Уголовный кодекс Российской Федерации». М., 2007:

<sup>12</sup> Տե՛ս «Criminal Code of Spain». Organic Act 10/1995, Dated 23rd November:

<sup>13</sup> Տե՛ս «Criminal Code of Bulgaria». Publication State Gazette No.26/02.04.1968, in force as of 01.05.1968, Last amendment 32/27.04.2010, in force as of 28.05.2010:

<sup>14</sup> Տե՛ս «The Criminal Code of Finland» (39/1889, amendments up to 927/2012 included):

դրսևորմանը ձեռնամուխ եղած անձը կամովին և լրջորեն փորձել է կանխել հանցագործությունն ավարտին հասցնելը կամ հանցավոր հետևանքների առաջացումը, ապա նրա կատարած արարքը պատժելի չէ<sup>15</sup>:

Կարծում ենք, ճիշտ կլիներ հանցագործությունից կամովին հրաժարվելը դիտել ոչ թե քրեական պատասխանատվությունը, այլ արարքի պատժելիությունը բացառող հանգամանք: Բանն այն է, որ նման դեպքում պետության կողմից առավել հստակ է արտահայտվում բացասական վերաբերմունքը հանցավոր վարքագծի դրսևորման նկատմամբ՝ անկախ դրա իրականացման փուլերից, և առավել ակնառու է, որ հանցագործությունից կամովին հրաժարվելու դեպքում մինչև հանցանքն ավարտին հասցնելը դրսևորած վարքագծի համար քրեաիրավական հարկադրանքի խիստ ներգործության միջոցներից հրաժարվելը պայմանավորված է ոչ թե կամովին հրաժարում դրսևորած անձի կամ նրա վարքագծի հանրային ցածր վտանգավորությամբ, այլ պետության կողմից դրսևորած բարեհաճությամբ:

Վերջապես, հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտի բարելավման նպատակով ներկայացված ձևակերպումը թույլ կտա հստակեցնել այս ինստիտուտի իրավական հետևանքները: Գործող քրեական օրենսգրքի հոդված 36-ը սահմանում է, որ հանցագործությունից կամովին հրաժարում է համարվում անձի կողմից հանցագործության նախապատրաստությունը կամ հանցափորձը կամ անմիջականորեն հանցանք կատարելուն ուղղված գործողությունը (անգործությունը) դադարեցնելը, եթե անձը գիտակցել է հանցագործությունն ավարտին հասցնելու հնարավորությունը: Ընդ որում, հանցագործությունն ավարտին հասցնելուց կամովին հրաժարված անձը ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նրա փաստացի կատարած արարքն այլ հանցակազմ չի պարունակում:

Ներկայացված ձևակերպման մեջ օրենսդիրը, որպես կամովին հրաժարված անձի քրեական պատասխանատվությունը բացառող նախապայման, չի հստակեցնում մինչև կամովին հրաժարումը անձի կողմից կատարված արարքից առաջացող հետևանքների կանխման անհրաժեշտությունը: Թերևս օրենսդիրը ելնում է այն կանխավարկածից, որ կատարողի դեպքում հանցանքի կատարմանն ուղղված գործողության կամ անգործության դադարեցումը ինքնըստինքյան պետք է կանխի հանցանքն ավարտին հասցնելը, ուստի և հանցավոր հետևանքների առաջացումը: Այնուհանդերձ, մոռացության է մատնվում համակատարողը, որի պարագայում հանցանքի կատարմանն ուղղված վարքագծի կամովին դադարեցումը անհրաժեշտաբար չի հանգեցնելու հանցագործության և դրա հանցավոր հետևանքների կանխման:

Մինչդեռ 33 քր. օր.-ի հոդված 36-ի 3-րդ և 4-րդ մասերում օրենսդիրը հստակեցնում է, որ հանցագործության կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողը կամովին հրաժարվելու դեպքում ենթակա չէ քրեական պատասխանատվության, եթե նա, պետական մարմիններին հաղորդելով կամ ձեռնարկված այլ միջոցներով, կանխել է կատարողի կողմից հանցագործությունն ավարտին հասցնելը: Եթե նշված գործողությունները չեն հանգեցրել կատարողի հանցագործությունը կանխելուն, ապա ձեռնարկված միջոցները պատիժ նշանակելիս կարող են հաշվի առնվել որպես պա-

---

<sup>15</sup> Տե՛ս նույն տեղը:



տասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Փաստորեն, ստացվում է երկակի կարգավորում. եթե կազմակերպիչը, դրդիչը կամ օժանդակողն է կամովին հրաժարվում, սակայն չի կարողանում իր գործողություններով կանխել հանցագործությունը, ապա նա ենթակա է քրեական պատասխանատվության, և կամովին հրաժարման գործոնը ընդամենը պետք է դիտվի որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք, մինչդեռ համակատարողի պարագայում նույն իրավիճակի առկայությունը խոչընդոտ չէ վերջինիս քրեական պատասխանատվությունը բացառելու համար:

Առաջարկվող օրենսդրական կանոնակարգումը թույլ կտա զերծ մնալ նման երկակի չափանիշներից և առավել հստակ կարտացոլի հանցագործությունից կամովին հրաժարվելու ինստիտուտի իրավական բնույթն ու հետևանքները:

**Բանալի բառեր** – կամովին հրաժարում, հանցափորձ, հանցագործության նախապատրաստություն, չավարտված հանցագործություն, քրեական պատասխանատվությունից ազատում

**КАМО МОВСИСЯН – Юридическая природа института добровольного отказа от преступления.** – В уголовно-правовой литературе по-прежнему дискутируются вопросы юридической природы института добровольного отказа от преступления. По мнению ряда учёных, такой отказ исключает уголовную ответственность за деяния, совершённые до него. В статье проанализирована соответствующая литература, уголовное законодательство РА и некоторых зарубежных стран, на основе чего предложена поправка в УК Армении для более чёткого регулирования института добровольного отказа от преступления.

**Ключевые слова:** добровольный отказ, покушение, приготовление к преступлению, неоконченное преступление, освобождение от уголовной ответственности

**КАМО МОВСИСЯН – Legal Character of the Institute of Voluntary Refusal to Commit a Crime.** – The legal character of the institute of voluntary refusal to commit a crime is one of the most debated issues in criminal law science. Group of scientists insists that the institute of voluntary refusal to commit a crime excludes the criminal liability for the behavior conducted before the voluntary withdrawal of the criminal behavior took place. While the others suppose that voluntary refusal to commit a crime is only a base for the release of the person from criminal responsibility, as the actions conducted before the voluntary withdrawal of the crime contain corpus delicti. The author analyses the legal literature as well as current regulation of RA and several foreign countries, represents his vision of the legal nature of the discussed institute, makes proposals aimed to the improvement of RA criminal legislation in order to have the clear regulation of the institute of the voluntary refusal to commit a crime.

**Key words:** voluntary refusal to commit a crime, attempt, preparation, incomplete crime, exemption from criminal responsibility

## ԳՈՒՅՔԻ ԲՈՆԱԳՐԱՎՄԱՆ ԱՌԱՐԿԱՆ

### ՆԱՐԵԿ ՂԱԶԱՐՅԱՆ

Յուրաքանչյուր պետության առանցքային նշանակություն ունեցող խնդիրներից է հասարակությունում տեղ գտնող հանրորեն վտանգավոր արարքների դեմ արդյունավետ պայքարի իրականացումը ինչպես դրանց կանխարգելման, այնպես էլ արդեն իսկ տեղ գտած հանցավոր արարքներին համաչափ և արդարացի արձագանքման մեխանիզմների մշակման միջոցով: Պետաիրավական արձագանքման մեխանիզմների շարքում իրենց կարևորությամբ առանձնանում են պատիժները:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 49-ը սահմանում է այն պատժատեսակների սպառիչ ցանկը, որոնք ենթակա են կիրառության՝ հանցանքի կատարման մեջ ՀՀ դատարանների կողմից մեղավոր ճանաչված անձի նկատմամբ: Նշված պատժատեսակների շարքին է դասվում նաև գույքի բռնագրավումը, որը կրիմինալոգիական գրականության մեջ դիտվում է որպես շահադիտական հանցավորության կանխարգելման արդյունավետ միջոց<sup>1</sup>:

ՀՀ գործող քրեական օրենսգրքի հոդված 55-ի 1-ին մասի համաձայն. «Գույքի բռնագրավումը դատապարտյալի սեփականությունը համարվող գույքը կամ դրա մի մասը հարկադրաբար և անհատույց վերցնելն է՝ ի սեփականություն պետության»: Ընդ որում, օրենսդիրը հստակեցնում է, որ գույքի բռնագրավումը կարող է նշանակվել շահադիտական դրդումներով կատարված ծանր և առանձնապես ծանր հանցանքների համար ՀՀ քրեական օրենսգրքի Հատուկ մասով նախատեսված դեպքերում՝ այս դրույթից բացառություն կատարելով միայն ահաբեկչության ֆինանսավորման, մաքսանենգության և հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ եկամուտների օրինականացման համար:

ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 55-ի 1-ին մասում օրենսդիրն արդեն իսկ ամրագրել է գույքի բռնագրավման առարկան՝ դատապարտյալի սեփականությունը հանդիսացող գույքը կամ դրա մի մասը: Ավելին, նույն հոդվածի 2-րդ մասում հստակեցվում են այդ գույքի չափերը. օրենսդիրը նշում է, որ «գույքի բռնագրավման չափը դատարանը որոշում է՝ նկատի ունենալով հանցագործությամբ հասցված գույքային վնասի, ինչպես նաև հանցավոր ճանապարհով ձեռք բերված գույքի չափը: Գույքի բռնագրավման չափը չի կարող գերազանցել հանցագործությամբ հասցված վնասի կամ հանցավոր ճանապարհով ձեռք բերված օգուտի չափը»:

<sup>1</sup> Տե՛ս **Пропостин А. А.** Конфискация имущества как мера борьбы с преступностью. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. Томск, 2010, էջ 3-5, **Абраменко В. Б.** Конфискация имущества как средство предупреждения преступлений в сфере экономической деятельности. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2010, էջ 10, **Пропостин А. А.** Конфискация как имущественная мера криминологической безопасности // "Вестник Томского государственного университета", 2010, № 331, էջ 119-121:

ՀՀ քրեական օրենսգիրքը չի սահմանում, թե ինչ պետք է հասկանալ «գույք» հասկացության ներքո, և միայն գույքի բռնագրավումը կանոնակարգող հոդվածի 4-րդ, 5-րդ և 5.1-րդ մասերում փորձ է կատարվում հստակեցնելու բռնագրավման ենթակա գույքի շրջանակը՝ սահմանելով:

«4. Հանցավոր ճանապարհով ստացված գույքի, այդ թվում՝ հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման և ՀՀ քրեական օրենսգրքի 190-րդ հոդվածով նախատեսված արարքների կատարման արդյունքում ուղղակի կամ անուղղակի առաջացած կամ ձեռք բերված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ հանցավոր ճանապարհով ստացված գույքի չհայտնաբերման դեպքում՝ այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է:

5. Ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի, այդ թվում՝ ՀՀ քրեական օրենսգրքի 217 հոդվածով նախատեսված արարքների ֆինանսավորման նպատակով օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գույքի, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, այդ արարքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների, իսկ ահաբեկչության ֆինանսավորմանն ուղղված գույքի չհայտնաբերման դեպքում այդ գույքին համարժեք այլ գույքի բռնագրավումը պարտադիր է:

5.1. ՀՀ քրեական օրենսգրքի 215 հոդվածով նախատեսված մաքսանենգության ճանապարհով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխված մաքսանենգության առարկաների, իսկ վերջիններիս բացակայության դեպքում դրանց արժեքի բռնագրավումը պարտադիր է»:

Առաջին հայացքից տպավորություն է ստեղծվում, թե հայ օրենսդիրը լավագույնս կանոնակարգել է գույքի բռնագրավման առարկան՝ դրանում ներառելով՝

1. դատապարտյալի սեփականությունը հանդիսացող օրինական գույքը,

2. հանցագործության արդյունքում ստացված գույքը,

3. հանցագործության միջոցով ձեռք բերված գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները,

4. հանցանքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները:

Այնուհանդերձ, գույքի բռնագրավման առարկային վերաբերող որոշ հարցեր դեռևս պարզաբանման կարիք ունեն: Նախ, հստակեցման կարիք ունի հենց «գույք» հասկացությունը: Թե՛ քրեաիրավական գրականության մեջ, թե՛ իրավակիրառ պրակտիկայում տարակարծությունների տեղիք է տալիս այն հարցը, թե ինչ պետք է հասկանալ «գույք» եզրույթի ներքո. արդյո՞ք այս հասկացությունը սահմանափակվում է միայն անշարժ և շարժական գույքի շրջանակներով, թե ներառում է նաև դրամական միջոցները, արժեթղթերը, գույքային բնույթի իրավունքները<sup>2</sup>:

<sup>2</sup> Տե՛ս **Мартыненко Э. В.** Конфискация имущества в действующем российском уголовном праве. Автореферат диссертации на соискание ученой степени кандидата юридических наук. М., 2010, էջ 13, **Векленко С. В., Самойлова С. Ю.** Совершенствование уголовного законодательства в части правовой регламентации конфискации имущества // "Вестник Воронежского института МВД России", 2010, № 4, էջ 117-122:

Մասնավորապես, Ս. Վ. Վեկլենկոն և Ս. Յու. Սամոյլովան գտնում են, որ «գույք» հասկացությունը պետք է դիտարկվի լայն իմաստով՝ ներառելով նաև դրամական միջոցները, արժեթղթերը, քանի որ քաղաքացիական իրավունքում վերջիններս դիտվում են որպես քաղաքացիական կարգավորման առարկա<sup>3</sup>: Մինչդեռ հակառակ տեսակետն է արտահայտվել է. Վ. Սարտինենկոյի կողմից, որի պնդմամբ՝ քրեական օրենսգրքում ամրագրված բռնագրավման ենթակա «գույքի» բնորոշումը չպետք է նույնացնել քաղաքացիական կարգավորման առարկայի հետ, քանի որ քրեական օրենսգրքի բազմաթիվ հոդվածներում օրենսդիրը հստակ տարանջատում է գույքը, դրամական միջոցները, արժեթղթերը, գույքային իրավունքները<sup>4</sup>:

Վերջին տեսակետը ՀՀ գործող օրենսդրության կանոնակարգման պարագայում թվում է առավել հիմնավորված:

Իրոք, ելնելով այն հանգամանքից, որ ՀՀ քրեական օրենսգրքը չի սահմանում, թե քրեական օրենսգրքի շրջանակներում ի՞նչ պետք է հասկանալ «գույք» հասկացության ներքո, իրավական տեխնիկայի տեսակետից լիովին հիմնավորված է հարցի պատասխանը ՀՀ գործող օրենսդրության այլ ակտերում, կոնկրետ դեպքում՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքում փնտրելը: Թեև ՀՀ քաղաքացիական օրենսգրքը առանձին հոդվածներով կանոնակարգում է «շարժական և անշարժ գույք», «բաժանելի և անբաժանելի գույք», «դրամ», «արժուքային արժեք», «արժեթուղթ», «նտավոր սեփականություն» հասկացությունները, և հասկանալի է, որ դրանք չեն նույնացվում, սակայն նույն օրենսգրքի հոդված 132-ը, ներկայացնելով քաղաքացիական իրավունքի օբյեկտները, բացահայտում է «գույք» հասկացությունը՝ այն չսահմանափակելով միայն անշարժ և շարժական գույքով, այլ դրա շրջանակներում ներառելով դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները: Ասվածից տրամաբանորեն պետք է հետևեր, որ քրեական իրավունքում ևս «գույք» հասկացությունը պետք է ընկալվեր լայն իմաստով, մինչդեռ ՀՀ քրեական օրենսգրքի համակարգային վերլուծությունը, դրանում տեղ գտած տարբեր հոդվածների ձևակերպումների համադրումը հիմք են տալիս պնդելու, որ քրեական օրենսգրքում օրենսդիրը տարբերակում է «գույք», «գույքի նկատմամբ իրավունք», «արժեթուղթ», «այլ առավելություն» հասկացությունները: Մասնավորապես, կաշառք տալու հանցակազմի բնորոշման ժամանակ օրենսդիրը նշում է՝ «պաշտոնատար անձին... դրամ, գույք, գույքի նկատմամբ իրավունք, արժեթղթեր կամ որևէ այլ առավելություն խոստանալը...»: Հետևաբար, ՀՀ քրեական օրենսգրքի ներկայիս կանոնակարգման պարագայում հիմնավորված չէ գույքի բռնագրավման ձևակերպման «գույք» հասկացության ծավալների որոշման ժամանակ ՀՀ քաղաքացիական իրավունքում առկա մոտեցմամբ ղեկավարվելը:

Գույքի բռնագրավում պատժատեսակի ներկայիս օրենսդրական ձևակերպման տառացի մեկնաբանությունից հետևում է, որ բռնագրավման առարկա կարող է լինել միայն շարժական և անշարժ գույքը, ինչը լուրջ խոչընդոտ է նշված ինստիտուտի արդյունավետությունն ապահովելու առումով: Հետևաբար անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 55-

<sup>3</sup> Տե՛ս Векленко С. В., Самойлова С. Ю., նշվ. աշխ., էջ 117-122:

<sup>4</sup> Տե՛ս Мартыненко Э. В. Предмет конфискации имущества // "Публичное и частное право", 2010, № II (VI), էջ 80-86:

ում հստակ ամրագրել, որ գույքի բռնագրավման առարկա են գույքը, դրամական միջոցները, արժեթղթերը, գույքային բնույթի իրավունքները:

Գույքի բռնագրավման առարկայի բնորոշման ժամանակ ՀՀ քրեական օրենսգրքում առկա մյուս հիմնախնդիրը, մեր կարծիքով, ի հայտ է գալիս նշված օրենսգրքի հոդված 55-ի համակարգային վերլուծության դեպքում: Բանն այն է, որ բռնագրավման ենթակա գույքի շրջանակը սահմանելիս օրենսդիրը բավարար հետևողականություն չի դրսևորում: Մասնավորապես, հոդված 55-ի 1-ին մասի ձևակերպման ժամանակ օրենսդիրը սահմանել է, որ գույքի բռնագրավման առարկա կարող է լինել միայն դատապարտյալի սեփականությունը հանդիսացող գույքը կամ դրա մի մասը, մինչդեռ նույն հոդվածի 4-րդ, 5-րդ և 5.1-րդ մասերում նշվում է հանցավոր ճանապարհով ստացված գույքի, դրա օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, նշված հանցանքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների մասին:

Հարց է առաջանում. արդյո՞ք հանցավոր ճանապարհով ստացված գույքը, դրա օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, հանցանքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները կարող են դիտվել որպես բռնագրավման առարկա նաև ՀՀ քրեական օրենսգրքի բոլոր այն հոդվածներով նախատեսված արարքների կատարման դեպքերում, որոնց պարագայում նախատեսված է գույքի բռնագրավում պատժատեսակը, թե՞ օրենսդիրը ի սկզբանե առանձնացրել է այն արարքների շրջանակը, որոնց պարագայում կարևորել է հանցավոր ճանապարհով ստացված գույքի, դրա օգտագործումից ստացված եկամուտների կամ այլ տեսակի օգուտների, հանցանքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների անհատույց վերցնելը հօգուտ պետության: Օրենսդրի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 55-ում ներկայացված ձևակերպումների վերլուծությունը հիմք է տալիս արտահայտելու այն տեսակետը, որ հանցավոր ճանապարհով ստացված գույքը, դրա օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները, հանցանքների կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքները պետք է դիտվեն որպես գույքի բռնագրավման առարկա միայն հոդված 217-ում նախատեսված արարքների, ինչպես նաև ՀՀ քրեական օրենսգրքի այն հանցակազմների կատարման պարագայում, որոնց դեպքում անձը հանցավոր ճանապարհով ձեռք է բերել գույք կամ օրինականացրել է հանցավոր ճանապարհով ստացված եկամուտները:

Նման մոտեցումը արդարացված չի թվում. նախ անհասկանալի է, թե ինչ չափանիշով են ընտրվել ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 55-ի 4-րդ, 5-րդ և 5.1-րդ մասերով նախատեսված արարքները՝ հանրային վտանգավորությամբ, դրանց դեմ միջազգային նորմերով սահմանված պայքար մղելու անհրաժեշտությամբ, թե՞ այլ: Կարելի է արդյոք պնդել, որ հանցավոր համագործակցության ֆինանսավորումը կամ օրենքով արգելված զինված միավորումների ֆինանսավորումը իր էությամբ պակաս վտանգավոր է, քան ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 217-ում նախատեսված ահաբեկչության ֆինանսավորումը: Կարծում ենք, ո՛չ:

Բացի այդ, որքանով է հիմնավորված օրենսդրի կողմից երկակի մոտեցման դրսևորումը հանցագործության գործիք հանդիսացած կամ օգ-

տագործման համար նախատեսված գործիքների իրավական ճակատագրի նկատմամբ: ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 55-ի 4-րդ, 5-րդ և 5.1-րդ մասերով նախատեսված արարքների պարագայում օրենսդիրը նախատեսում է դրանց բռնագրավումը, մինչդեռ մյուս հանցագործությունների պարագայում հարցը կանոնակարգվում է ՀՀ քրեական դատավարության օրենսդրությամբ քր. դատ. օր.-ի հոդված 119-ում սահմանելով, որ իրեղեն ապացույց հանդիսացած հանցագործության գործիքները բռնագրավվում և հանձնվում են համապատասխան պետական մարմիններին, իսկ արժեք չներկայացնելու դեպքում ոչնչացվում են:

Բարձրացված հիմնախնդիրներից խուսափելու նպատակով անհրաժեշտ է ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 55-ում միասնական մոտեցում դրսևորել և բոլոր հանցագործությունների համար սահմանել գույքի բռնագրավման միևնույն առարկան:

Գույքի բռնագրավման առարկային առնչվող մյուս հիմնախնդիրը վերաբերում է ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարմանը: ՀՀ կողմից վավերացված մի շարք կոնվենցիաներով, օրինակ՝ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, ազդարավման և բռնագրավման մասին» կոնվենցիայով, նախատեսվում է ՀՀ օրենսդրությամբ գույքի բռնագրավման կանոնակարգումը՝ նպատակ ունենալով ապահովելու ոչ միայն դատապարտյալի գույքի, այլև հանցավոր ճանապարհով ստացված գույքի, եկամուտների, այլ օգուտի / առավելության, հանցագործության գործիք կամ միջոց հանդիսացած առարկաների բռնագրավումը: Թերևս հենց ՀՀ ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման նկատառումից ելնելով օրենսդիրը ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 55-ի 4-րդ և 5-րդ մասերում նշում է, որ բռնագրավման ենթակա են «գույքը, ներառյալ՝ այդ գույքի օգտագործումից ստացված եկամուտները կամ այլ տեսակի օգուտները»:

Ստեղծվում է տպավորություն, որ բռնագրավման ենթակա գույքի որոշման ենթատեքստում ՀՀ օրենսդրությունը լիովին համապատասխանում է կոնվենցիայի պահանջներին: Այնուհանդերձ, հոդված 55-ում տեղ գտած ձևակերպումներից հասկանալի չէ, թե հանցագործության կատարման միջոցով ստացված «այլ տեսակի օգուտները», առանձին վերցրած, կարող են արդյոք լինել գույքի բռնագրավման առարկա, թե դրանք պարտադիր պետք է ստացված լինեն գույքի օգտագործումից: Խնդիրն այն է, որ հանցանք կատարած անձը կարող է ստանալ «օգուտ / առավելություն» առանց գույք կամ եկամուտ ստանալու: Օրինակ՝ անձը կարող է որպես կաշառք ստանալ ոչ թե գույք, այլ որևէ արտոնություն, ինչի հետևանքով կարող է գումար խնայել կամ ազատվել նյութական ծախսերից: Նման պարագայում նա չի ստանում ո՛չ գույք, ո՛չ եկամուտ, ոչ էլ «այլ տեսակի օգուտ» գույքի օգտագործմամբ, հետևաբար նման վիճակում խնդրահարույց կլինի նշված «օգուտի» բռնագրավման գործընթացը<sup>5</sup>:

Միաժամանակ, ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 55-ում նշվում է հանցանքի կատարման համար օգտագործված կամ օգտագործման համար նախատեսված գործիքների բռնագրավման հնարավորությունը, մինչդեռ հնարավոր է, որ այդ առարկաները լինեն ոչ թե հանցագործու-

---

<sup>5</sup> Стен А. Алисултанов М. А. Проблемы законодательного определения процессуального статуса имущества, в отношении которого назначается конфискация, и его закрепление в нормах УК России // "Общество и право", 2010, № 4 (31), էջ 163-166:

թյան գործիք, այլ հանցագործության միջոց:

Ներկայացված հիմնախնդիրները վկայում են ՀՀ քրեական օրենսգրքում տեղ գտած գույքի բռնագրավում պատժատեսակը կանոնակարգող դրույթների վերանայման անհրաժեշտության մասին: Նշված բացերից և թերություններից խուսափելու նպատակով առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգրքի հոդված 55-ը լրանշակել՝ դրանում սահմանելով բռնագրավման ենթակա գույքի առարկան, այն է. «Գույքի բռնագրավման առարկա են դատապարտյալի սեփականությունը հանդիսացող գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը, գույքային բնույթի իրավունքները, հանցավոր ճանապարհով ստացված գույքը, եկամուտները, այլ օգուտը, հանցանքի նախապատրաստության կամ կատարման համար օգտագործված կամ դրա համար նախատեսված գործիքներն ու միջոցները»:

Կարծում ենք, որ օրենսդրական այս հստակեցումը կարող է նպաստել քննարկվող պատժատեսակի արդյունավետությանը և իրավակիրառ պրակտիկայի միասնականացմանը:

**Բանալի բառեր** – *գույքի բռնագրավում, արժեթղթեր, դրամական միջոցներ, այլ օգուտ, եկամուտներ, հանցագործության գործիքներ*

**НАРЕК КАЗАРЯН – Предмет конфискации имущества.** – Статья 55 УК РА предусматривает конфискацию имущества в качестве дополнительного наказания за тяжкие и особо тяжкие корыстные преступления. Однако в юридической науке и правоприменительной практике дискуссионным остаётся предмет конфискации имущества. В частности, нет единого подхода к определению понятия “имущество”, вопросу конфискации выгод, полученных в результате преступления, к изменению законодателем предмета конфискации при отдельных видах преступлений. Статья посвящена поискам ответов на спорные вопросы. В качестве решения одного из них – о предмете конфискации имущества – предложены поправки к упомянутой выше статье УК РА.

**Ключевые слова:** *конфискация имущества, ценные бумаги, денежные средства, выгода, прибыль, орудия преступления*

**NAREK GHAZARYAN – Subject of the Confiscation of Property.** – Confiscation of property is foreseen in the article 55 of RA Criminal code as a supplementary punishment provided for the committal of grave and extremely grave mercenary offences. However, the issues concerning the subject of confiscation of property are widely disputed both in criminal law theory and practice. The unified approach to the definition of the concept of «property» is missing, the possibility of confiscation of advantages derived from or obtained from criminal offences is argued, different opinions are expressed when analyzing the legislator’s point on specific regulation of the subject of confiscation when dealing with certain categories of crimes, etc. In the frames of the presented article the author tries to find answers to the questions set. As a possible solution of the defined shortcomings, the author proposes amendments to the article 55 of RA Criminal Code.

**Key words:** *confiscation of property, property, securities, financial, means, other advantage, income, instrumentalities of crime*

**ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԶԵՂԻՆԱԿՆԵՐԻ ՄԱՍԻՆ**  
**СВЕДЕНИЯ ОБ АВТОРАХ**  
**INFORMATION ABOUT THE AUTHORS**

- 1. ԳԵՎՈՐԳ ԴԱՆԻԵԼՅԱՆ** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի վարիչ, «Սահմանադրական իրավունքի կենտրոնի» խորհրդի նախագահ  
**ГЕВОРГ ДАНИЕЛЯН** – доктор юридических наук, профессор, заведующий кафедрой конституционного права ЕГУ, председатель совета “Центра конституционного права”  
**GEVORG DANIELYAN** – Doctor of Legal Sciences, Professor, Head of the Chair of Constitutional Law, YSU, Chairman of the Board of the "Centre of Constitutional Law"
- 2. ՆՈՐԻԿ ԱՅՎԱԶՅԱՆ** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ սահմանադրական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր  
**НОРИК АЙВАЗЯН** – доктор юридических наук, профессор кафедры конституционного права ЕГУ.  
**NORIK AYVAZYAN** – Doctor of Legal Sciences, Professor of the Chair of Constitutional Law, YSU
- 3. ՏԱՐԻԵԼ ԲԱՐՍԵԳՅԱՆ** – իրավաբանական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԵՊՀ քաղաքացիական իրավունքի ամբիոնի պրոֆեսոր  
**ТАРИЕЛ БАРСЕГЯН** – доктор юридических наук, профессор кафедры гражданского права ЕГУ.  
**TARIEL BARSEGHYAN** – Doctor of Legal Sciences, Professor of the Chair of Civil Law, YSU
- 4. ՍԵՐԳԵՅ ԱՐԱԿԵԼՅԱՆ** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի դոցենտ  
**СЕРГЕЙ АРАКЕЛЯН** – кандидат юридических наук, доцент кафедры уголовного права ЕГУ.  
**SERGEY ARAKELYAN** – PhD, Associate Professor of the Chair of Criminal Law, YSU
- 5. ԱՐԱ ՖԻԴԱՆՅԱՆ** – ԶՅ-ում Ինտերպոլի ազգային կենտրոնի պետ  
**АРА ФИДАНИЯН** – начальник национального центрального бюро Интерпола в Республике Армения  
**ARA FIDANYAN** – Chief of the National central bureau of Interpol in the Republic of Armenia
- 6. ՄԻՍԱԿ ՄԱՐԿՈՍՅԱՆ** – իրավաբանական գիտությունների թեկնածու, ԶՅ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի պետ, ոստիկանության կապիտան  
**МИСАК МАРКОСЯН** – капитан полиции, кандидат юридических наук, начальник кафедры уголовного права и криминологии Академии образовательного комплекса полиции РА  
**MISAK MARKOSYAN** – PhD, Police Captain, Head of the Chair of Criminal Law and Criminology, Academy of the Educational Complex of the RA Police



- 7. ԼԱԼԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ** – ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ակադեմիայի քրեական իրավունքի և քրեաբանության ամբիոնի ուսումնական ասիստենտ, ոստիկանության ավագ լեյտենանտ
- ЛАЛА ГРИГОРЯН** – старший лейтенант полиции, учебный ассистент кафедры уголовного права и криминологии Академии образовательного комплекса полиции РА
- LALA GRIGORYAN** – Police Senior Lieutenant, Training Assistant at the Chair of Criminal Law and Criminology, Academy of the Educational Complex of the RA Police
- 8. ԿԱՍՈ ՍՈՎՍԻՍՅԱՆ** – ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ
- КАМО МОВСИСЯН** – соискатель кафедры уголовного права ЕГУ
- KAMO MOVSISYAN** – PHD student, Chair of Criminal law, YSU
- 9. ՆԱՐԵԿ ՂԱԶԱՐՅԱՆ** – ԵՊՀ քրեական իրավունքի ամբիոնի հայցորդ
- НАРЕК КАЗАРЯН** – соискатель кафедры уголовного права ЕГУ
- NAREK GHAZARYAN** – PHD student, Chair of Criminal law, YSU

## ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆ \* СОДЕРЖАНИЕ \* CONTENTS

### ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ КОНСТИТУЦИОННОЕ ПРАВО CONSTITUTIONAL LAW

- Գևորգ Դանիելյան** – Թուրքիայի 1910-1920 թթ. դատավճիռների իրավական արժեքը Հայոց եղեռնի դատապարտման համատեքստում..... 3
- Геворг Даниелян** – Правовая значимость приговоров турецких судов 1919–1920 гг. в контексте осуждения Геноцида армян
- Gevorg Danielyan** – The Legal Significance of the Judgments of Turkey of 1919–1920 in the Context of Condemnation of the Armenian Genocide
- Նորիկ Այվազյան** – Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի բարելավման որոշ հիմնախնդիրներ..... 15
- Норик Айвазян** – Некоторые проблемы усовершенствования избирательного кодекса Республики Армения
- Norik Ayvazyan** – Some problems of Improvement of the Electoral Code of the Republic of Armenia

### ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ ГРАЖДАНСКОЕ ПРАВО CIVIL LAW

- Տարիել Բարսեղյան** – Ձեռքբերման վաղեմություն..... 28
- Тариел Барсегян** – Давность приобретения
- Tariel Barseghyan** – Acquisitive prescription

### ՔՐԵԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔ УГОЛОВНОЕ ПРАВО CRIMINAL LAW

- Սերգեյ Առաքելյան, Արա Ֆիդանյան** – Սեփական քաղաքացիների արտահանձնումը մերժելու և երկքաղաքացիների արտահանձնման հիմնախնդիրները ..... 44
- Сергей Аракелян, Ара Фиданян** – Проблемы, связанные с отказом в выдаче собственных граждан и выдачей лиц, имеющих двойное гражданство
- Sergey Arakelyan, Ara Fidanyan** – Problems of the Declining the Extradition of Own Citizens, and Extradition of Persons with Dual Citizenship
- Միսակ Մարկոսյան** – Դրամանենգության համար քրեական պատասխանատվության համեմատադրական վերլուծություն ..... 53
- Мисак Маркосян** – Сравнительно-правовой анализ уголовной ответственности за фальшивомонетничество
- Misak Markosyan** – Comparative-Legal Analysis of Criminal Responsibility for Counterfeiting

<b>Լալա Գրիգորյան</b> – Արտաքսումը որպես ազատագրկման այլընտրանքային պատժատեսակ.....	<b>61</b>
<i>Лала Григорян</i> – Депортация как альтернатива лишению свободы	
<i>Lala Grigoryan</i> – Deportation as an Alternative to Deprivation of Liberty	
<b>Վանո Սովսիսյան</b> – Հանցագործությունից կանոմի հրաժարվելու ինստիտուտի իրավական բնույթը.....	<b>67</b>
<i>Камо Мовсисян</i> – Юридическая природа института добровольного отказа от преступления	
<i>Kamo Movsisyan</i> – Legal Character of the Institute of Voluntary Refusal to Commit a Crime	
<b>Նարեկ Ղազարյան</b> – Գույքի բռնագրավման առարկան .....	<b>74</b>
<i>Нарек Казарян</i> – Предмет конфискации имущества	
<i>Narek Ghazaryan</i> – Subject of the Confiscation of Property	
Տեղեկություններ հեղինակների մասին.....	<b>80</b>
Сведения об авторах	
Information about the Authors	

Դասիչ՝ 77716

Խմբագրության հասցեն. Երևան, Ալեք Մանուկյան փող., 1, 106  
Адрес редакции: Ереван, ул. Алека Манукяна 1, 106  
Address: 1, 106, Alex Manoukian str., Yerevan, Republic of Armenia

Հեռ. 060 710 218, 060 710 219

Էլ. փոստ՝ [ephbanber@ysu.am](mailto:ephbanber@ysu.am)  
Կայք՝ [ysu.am](http://ysu.am)

Վերստուգող սրբագրիչ՝  
Контрольный корректор  
Proofreader

Գ. Գրիգորյան  
Г. Григорян  
G. Grigoryan

Համակարգչային ձևավորում՝  
Компьютерная верстка  
Computer designer

Մ. Աբգարյան  
М. Абгарян  
M. Abgaryan

Ստորագրված է տպագրության 01. 07. 2014  
Տպաքանակ՝ 100: Չափսը՝ 70x108 1/16: Թուղթ՝ օֆսեթ:  
Տպագրական 5.125 մանուկ:

.....  
«Լինուշ» ՍՊԸ, Երևան, Պուշկինի փող., 40-76: